ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
ПРАВОВЕДЕНИЕ

JOURNAL OF YEREVAN UNIVERSITY
JURISPRUDENCE

ՀԱՏՈՒԿ ԹՈՂԱՐԿՈՒՄ
«Իրավաբանական կլինիկաները ՀՀ բարձրագույն կրթության համակարգում» թեմայով գիտական հոդվածների ժողովածու

ՀԱՏՈՐ 2: ՀԱՏՈՒԿ ԹՈՂԱՐԿՈՒՄ

СПЕЦИАЛЬНЫЙ ВЫПУСК
Сборник научных статей по теме «Юридические клиники в системе высшего образования Республики Армения»

ТОМ 2: СПЕЦИАЛЬНЫЙ ВЫПУСК

SPECIAL EDITION
Collection of Scientific Articles on the Topic "Legal Clinics in the RA Higher Education System"

VOLUME 2: SPECIAL ISSUE

2026

«Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն» հանդեսը լույս է տեսնում տարեկան երկու անգամ: Հրատարակվում է 2010 թվականից: Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի
Журнал «Вестник Ереванского университета. Правоведение» выходит два раза в год. Издается с 2010 года. Правопреемник издававшегося в 1967-2009 гг. журнала "Вестник Ереванского университета"
Two issues of “Journal of Yerevan University. Jurisprudence” are published annually. The journal has been published since 2010. It is the successor of “Journal of Yerevan University” published in 1967-2009

Խմբագրական խորհուրդ.
Редакционная коллегия:
Editorial Board:

Գլխավոր խմբագիր՝
Главный редактор:
Editor-in-chief:
Դանիելյան Գևորգ (ի.գ.դ., պրոֆ., gdanielyan@ysu.am)
Даниелян Геворг (д.юр.н., проф.)
Danielyan Gevorg (Sc. D. in Legal Sciences, Prof.)
Անտոնյան Յուրի (Մոսկվա, ի.գ.դ., պրոֆ., antonyaa@yandex.ru)
Антонян Юрий (Москва, д.юр.н., проф.)
Antonyan Yuri (Moscow, Sc. D. in Legal Sciences, Prof.)
Ավագյան Սուրեն (Մոսկվա, ի.գ.դ., պրոֆ., avakian@law.msu.ru)
Авакян Сурен (Москва, д.юр.н., проф.)
Avagyan Suren (Moscow, Sc. D. in Legal Sciences, Prof.)
Գևորգյան Կարեն (ի.գ.թ., k.gevorgyan@ysu.am)
Геворкян Карен (к.юр.н.)
Gevorgyan Karen (PhD in Legal Sciences)
Դյուրան Բեռնարդ (Մոնպելյե, ի.գ.դ., պրոֆ., pas2k@orange.fr)
Дюран Бернард (Монпелье, д.юр.н., проф.)
Duran Bernard (Montpellier, Sc. D. in Legal Sciences, Prof.)
Խաբրիևա Տալիա (Մոսկվա, ի.գ.դ., պրոֆ., ՌԴ ԳԱ ակադեմիկոս, office@izak.ru)
Хабриева Талия (Москва, д.юр.н., проф., академик РАН)
Khabrieva Talia (Moscow, Sc. D. in Legal Sciences, Prof., Academician of RAS)
Կուրի Հելմուտ (Ֆրայբուրգ, ի.գ.դ., պրոֆ., helmut.kury@web.de)
Кури Хельмут (Фрайбург, д.юр.н., проф.)
Kury Helmut (Freiburg, Sc. D. in Legal Sciences, Prof.)
Հարությունյան Գագիկ (ի.գ.դ., պրոֆ., ggharut@yahoo.com)
Арутюнян Гагик (д.юр.н., проф.)
Harutyunyan Gagik (Sc. D. in Legal Sciences, Prof.)
Հովհաննիսյան Վահե (ի.գ.դ., պրոֆ., vahehovhannisyan@ysu.am)
Оганнисян Варе (д.юр.н., проф.)
Hovhannisyan Vahe (Sc. D. in Legal Sciences, Prof.)
Ղազինյան Գագիկ (ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, gghazinyan@ysu.am)
Казинян Гагик (д.юр.н., проф., академик НАН РА)
Ghazinyan Gagik (Sc. D. in Legal Sciences, Prof., Academician of NAS RA)
Մարգարյան Աննա (ի.գ.դ., պրոֆ., annamargaryan@ysu.am)
Маргарян Анна (д.юр.н., проф.)
Margaryan Anna (Sc. D. in Legal Sciences, Associate Prof.)
Չուչա Սերգեյ (Մոսկվա, ի.գ.դ., պրոֆ., chuchaigpan@gmail.com)
Чуча Сергей (Москва, д.юр.н., проф.)
Chucha Sergey (Moscow, Sc. D. in Legal Sciences, Prof.)
Ուայթսել Աննա Մարի (ԱՄՆ, Ջորջթաունի համալսարան, ի.գ.դ., պրոֆեսոր, aw813@georgetown.edu)
Уайтселл Энн Мари (США, Джорджтаунский университет, д.юр.н., проф.)
Whitesell Anne Marie (USA, Georgetown University, Sc. D. in Legal Sciences, Prof.)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ✵ СОДЕРЖАНИЕ ✵ CONTENTS

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ТЕОРИЯ И ИСТОРИЯ ГОСУДАРСТВА И ПРАВА
THEORY AND HISTORY OF STATE AND LAW

Քնարիկ Վարդանյան – Իրավաբանական կլինիկաների ձևավորման պատմությունը և դերը ԵՊՀ իրավաբանական կլինիկայի գործունեության օրինակով…… **5**

Кнарик Варданян –История формирования юридических клиник и их роль на примере деятельности юридической клиники ЕГУ

Knarik Vardanyan – The History of the Formation and the Role of Legal Clinics: A Case Study of The Yerevan State University Legal Clinic

Տիգրան Մարկոսյան, Նարե Պարոնյան – Իրավաբանական կլինիկաների գործունեության իրավական հիմքերը Հայաստանի Հանրապետությունում…….. **22**

Тигран Маркосян, Наре Паронян – Правовые основы деятельности юридических клиник в Республике Армения

Tigran Markosyan, Nare Paronyan – Legal Foundations of Legal Clinics' Activities in the Republic of Armenia

Քնարիկ Վարդանյան, Սաթենիկ Մկրտչյան – «Իրավունք բոլորի համար» ծրագիրը որպես այլընտրանքային կրթության տեսակ և հասարակության իրավագիտակցության բարձրացման միջոց……. **37**

Кнарик Варданян, Сатеник Мкртчян – Программа «право на каждый день» как вид альтернативного образования и средство повышения правосознания общества

Knarik Vardanyan, Satenik Mkrtchyan – The Street Law Program as a Type of Alternative Education and a Means of Raising Legal Awareness in Society

Մանե Կարապետյան **–** ՀՀ Փաստաբանական ակադեմիայի իրավաբանական կլինիկայի դերը և նշանակությունը որպես կրթական գործընթացի բաղկացուցիչ մաս և անվճար իրավաբանական օգնության տրամադրման հարթակ …….. **47**

Мане Карапетян – Роль и значение юридической клиники академии адвокатуры РА как неотъемлемой части образовательного процесса и платформы для оказания бесплатной юридической помощи

Mane Karapetyan – The Role and Significance of the Legal Clinic of the Academy of Advocates of RA as an Integral Part of the Educational Process and Platform for Providing Free Legal Aid

Զոհրակ Ապրեսյան, Նունե Ջոմարդյան, Լիա Թևոսյան **–** Իրավաբանական կրթության առաջընթաց. իրավաբանական կլինիկաների դերը մարդու իրավունքների և մասնագիտական գերազանցության խթանման գործում (ԵՄՀ իրավաբանական կլինիկայի օրինակով)…… **56**

Зограк Апресян, Нуне Джомардян, Лия Тевосян **–** Прогресс в юридическом образовании: роль юридических клиник в продвижении конституционных ценностей, прав человека и профессионального мастерства (на примере юридической клиники МУЕ)

Zohrak Apresyan, Nune Jomardyan, Lia Tevosyan **–** Advances in Legal Education: The Role of Law Clinics in Promoting Constitutional Values, Human Rights, and Professional Excellence (Using the EIU Law Clinic as an Example)

Թեհմինե Բաղդասարյան, Անի Խեչոյան **–** Իրավաբանական կլինիկայի գործունեության հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները բարձրագույն կրթության համակարգում……. **69**

Техмине Багдасарян, Ани Хечоян – Проблемы и перспективы развития юридических клиник в системе высшего образования

Tehmine Baghdasaryan Ani Khechoyan – Problems and Development Prospects of the Legal Clinic in the Higher Education System

Անահիտ Ստամբոլցյան, Լիլիթ Մուրադյան **–** Կլինիկական կրթության փորձը և առանձնահատկությունները «Պրոգրես» համալսարանում….. **79**

Анаит Стамболцян, Лилит Мурадян **–** Опыт и особенности клинического образования в университете «Прогресс»

Anahit Stamboltsyan, Lilit Muradyan **–** The Experience and Features of Clinical Education at «Progress» University

Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն
2026, Vol. 2: SPECIAL ISSUE, հունվար, 5-21
https://doi.org/10.46991/BYSU.C/2026.SP2.005

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԵՐԸ ԵՊՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ

ՔՆԱՐԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ՝
Երևանի պետական համալսարան

Գիտական հոդվածի շրջանակներում ուսումնասիրվել է իրավաբանական կլինիկաների՝ որպես ուսանողական խորհրդատվական կենտրոնի ձևավորման և զարգացման պատմությունը՝ մասնավորապես անդրադարձ կատարելով «իրավաբանական կլինիկա» եզրույթի ստեղծմանը, այդ ինստիտուտի տարածմանը աշխարհի հայտնի առաջատար բուհերում, դրա կրթական և սոցիալական նշանակությանը իրավաբանական կրթություն ստացող ուսանողներին մասնագիտական գործունեության ոլորտում գործնական հմտություններ փոխանցելու և դրանք կիրառելու հնարավորություններ, իսկ հասարակության սոցիալապես անապահով խմբերին անվճար որակյալ իրավաբանական աջակցություն տրամադրելու առումներով:
Հոդվածի շրջանակներում ներկայացվել են հատկապես Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում իրավաբանական կլինիկական կրթության ձևավորումը, դրա զարգացման պատմությունը և ներկայիս գործունեությունը:

Բանալի բառեր – *իրավաբանական կրթություն, գործնական հմտություններ, որակյալ մասնագետ, անվճար խորհրդատվություն, իրավաբանական ծառայություններ, իրավագիտակցության բարձրացում, իրավաբանական կլինիկա, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ*

՝**Քնարիկ Վարդանյան –** իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի դոցենտ, ԵՊՀ իրավաբանական կլինիկայի տնօրեն
Кнарик Варданян – кандидат юридических наук, доцент кафедры европейского и международного права ЕГУ, директор юридической клиники ЕГУ
Knarik Vardanyan – Candidate of Legal Sciences, Associate Professor, Chair of European and International Law, Head of the YSU Legal Clinic
Էլ. փոստ՝ knarikvardanyan@ysu.am. ORCID ID: https://orcid.org/0000-0002-2632-3778

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 11.07.2025
Գրախոսվել է՝ 31.10.2025
Հաստատվել է՝ 13.01.2026
© The Author(s) 2026

Ներածություն

Պատմականորեն իրավաբանական կրթությունը հիմնված է եղել ավանդական լսարանային մոդելի վրա, որտեղ առաջնային դեր են խաղացել տեսական գիտելիքներն ու դոկտրինալ ուսումնասիրությունը: Այս մեթոդը, որն իրականացվում էր առավելապես դասախոսությունների, իրավիճակների, հնարովի գործերի սիմուլյացիոն վերլուծության և սոկրատական հարցուպատասխանի միջոցով, նպատակ ուներ ուսանողների մոտ ձևավորել քննադատական մտածողություն և իրավունքի հիմնարար սկզբունքների խորը ըմբռնում:

Այնուամենայնիվ, մի շարք հեղինակների կարծիքով, այս մոտեցումը հաճախ չի ապահովում ապագա իրավաբանների պատշաճ պատրաստվածությունը գործնական գործունեության իրական մարտահրավերներին դիմագրավելու համար[1]:

Տեսության և գործնական հմտությունների միջև գոյություն ունեցող հակասությունն էր, որ հանգեցրեց իրավաբանական կրթության բարեփոխման պահանջների առաջացմանը: Նման բարեփոխումների շարքում պետք է կարևորել կլինիկական իրավաբանական կրթության ստեղծումը, որի ձևավորման պատմությունն սկսվում է դեռևս 19-րդ դարի կեսերից:

Շատ համալսարաններ և իրավաբանական դպրոցներ, գնահատելով կլինիկական կրթության արդյունավետությունը, սկսել են ներառել իրավաբանական կլինիկաները ոչ միայն որպես իրենց իրավաբանական կրթության անբաժանելի և պաշտոնապես ընդունված մաս կամ որպես այլընտրանքային ուսուցման դասընթաց, այլև որպես գործնական մեխանիզմ՝ ուսանողներին փոխանցելու յուրահատուկ կրթություն, որն ուղղված է իրավաբանական տարբեր հմտությունների զարգացմանը:

Այս հմտություններն ուսանողները, իրենց հերթին, օգտագործում են՝ մատուցելով իրական իրավաբանական օգնություն սոցիալապես անապահով և խոցելի անձանց[2]:

Այլ կերպ ասած՝ կլինիկական իրավաբանական կրթությունը ուսանողներին հնարավորություն է տալիս դուրս գալ լսարանային ուսուցման սահմաններից և ներգրավվել իրավունքի իրական աշխարհի մեջ՝ ավելի խորը պատկերացում կազմելով իրավական տեսությունների գործնական կիրառման մարտահրավերների վերաբերյալ:

Կլինիկական իրավաբանական կրթությունը նպատակ ունի նպաստել, որ ուսանողների մեջ «իրավաբանի մտածողությունից» անցում կատարվի դեպի

---

[1] Տե՛ս **Krannich, J. , Holbrook, J. , McAdams, J.** Beyond Thinking Like a Lawyer‘ and the Traditional Legal Paradigm: Toward a Comprehensive View of Legal Education, Denver Law Review, Vol. 86, No. 2, 2009 https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=2446685:

[2] Տե՛ս **Lozanovska, I. S., Stanojoska, A., Ilijevski, I., Goran, I.** Access to Justice Through Clinical Legal Education: A Case Study of the Faculty of Law, UKLO Bitola, North Macedonia, Journal of Legal and Political Education, Volume 1, Number 1, 2024 https://doi.org/10.47305/JLPE2411019shl:

գործնական հմտությունների զարգացումը՝ հաճախորդներին արդյունավետ ծառայություններ մատուցելու միջոցով և նպատակով:

«Իրավաբանական կլինիկական կրթություն» հասկացությունը և դերը

«Իրավաբանական կլինիկական կրթությունը» իրավաբանական բարձրագույն հաստատություններում կիրառվող այլընտրանքային փորձառական գիտագործնական կրթություն է, որը ուսանողներին ուսումնական հաստատությունն ավարտելուց հետո իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնելու իրավական միջավայրին ծանոթացնելու լավագույն միջոցներից է:

Այն կրթության մի ձև է, որը համատեղում է ակադեմիական իրավաբանական կրթությունը գործնական կիրառման հետ: Իրական գործերի վրա աշխատելով՝ ուսանողները իրավական տեսություններն օգտագործում են կոնկրետ խնդիրների լուծման մեջ՝ ձեռք բերելով իրավունքի ավելի խորը և բազմակողմանի ըմբռնում: Ըստ էության՝ սա նպաստում է իրավաբանական կրթության համակողմանի զարգացմանը, որտեղ ուսանողները սովորում են ոչ միայն «ի՞նչն է» օրենքը, այլ նաև «ինչպե՞ս» և «ինչո՞ւ» այն կիրառել: Կլինիկական իրավաբանական կրթությունը, իրավաբան ուսանողներին առերեսելով իրավաբանական պրակտիկայի իրողություններին, պահանջներին և լուծումներին, հնարավորություն է տալիս ուսանողներին տեսնելու օրենքի կատարման իրական ընթացքը և արդյունքը, այդ թվում նաև՝ վերջինիս հնարավոր անկատար լինելը, առկա բացերն ու թերությունները: Այսպիսով, ուսանողը կարողանում է իր ձեռք բերած տեսական գիտելիքը համալրել գործնականով՝ դարձնելով այն ավելի խորն ու համընդգրկուն:

Կլինիկական իրավաբանական կրթությունը, հարստացնելով ապագա իրավաբանների կարողությունները, խթանելով կարևոր մասնագիտական հմտությունների ձևավորումն ու ապահովելով գործնական փորձառություն իրավական ոլորտում, միաժամանակ ընդգծում է սոցիալական, բարոյական և էթիկական արժեքների կարևորությունը իրավաբանի մասնագիտության մեջ: Նման պայմաններում ուսանողը մասնագիտությանը մոտենում է ոչ միայն որպես ապագա ֆինանսական կայունության և բարձր եկամտի ապահովման միջոցի, այլև այն դիտարկում է որպես հնարավորություն՝ մասնագիտական կարողությունները ներդնելու հասարակության զարգացման, իրավագիտակցության բարձրացման և հանրօգուտ գործունեության, այդ թվում՝ բարեգործության խթանման համար: Սա նպաստում է քաղաքացիական ներգրավվածությանը և ձևավորում է հասարակության առաջ սոցիալական պատասխանատվության գիտակցում: Ի վերջո, կլինիկական իրավաբանական կրթության նպատակը ոչ միայն ուսանողներին մոտիվացնելն է, այլև նրանց մեջ հանրությանը ծառայելու պատասխանատվության զգացում սերմանելը:

Իրավաբանական կլինիկայում ներգրավվածությունը նաև նպաստում է ուսանողի մասնագիտական կապերի ստեղծմանը՝ դասախոսների, փորձառու

իրավաբանների և գործընկեր ուսանողների միջոցով, ինչը ոչ միայն հնարավորություն է տալիս ծանոթանալու մասնագիտական համայնքին, այլև այս ցանցը հաճախ դառնում է կարիերայի առաջխաղացման և մասնագիտական հնարավորությունների բացման կարևոր գործիք:

Այլ կերպ ասած՝ իրավաբանական կլինիկաները ոչ միայն ուսանողի գործնական հմտությունների ձևավորման միջոց են, այլև նրանց մասնագիտական կյանքի մեկնարկային հարթակ: Դրանք նպաստում են ուսանողների մասնագիտական կողմնորոշմանը, ապահովում են անհրաժեշտ կապերի ձևավորում և մեծացնում աշխատաշուկայում մրցունակությունը:

«Իրավաբանական կլինիկական կրթության» ձևավորման պատմությունը

Իրավաբանական կլինիկաների ձևավորման անհրաժեշտությունը պայմանավորված էր իրավաբանական կրթության համակարգի բարեփոխման և կատարելագործման տեսլականով, որպեսզի այն, տեսական նյութից զատ, հնարավորություն տա ուսանողներին ձեռք բերելու մասնագիտական պրակտիկ գիտելիքներ ու հմտություններ՝ ներգրավելով նրանց իրական գործերի ուսումնասիրության և իրավական արդյունավետ լուծումներ գտնելու գործընթացի մեջ:

Իրավաբանական կլինիկաների ձևավորման պատմությունը քննարկելիս պետք է նշանավորել ռուս իրավաբան, քաղաքացիական իրավունքի մասնագետ և իրավաբանների համար պրակտիկայի վրա հիմնված ուսուցման համակարգ ներդնելու ջատագով Դ. Ի. Մեյերի գործունեությունը այս ոլորտում: Նա իր հայտնի աշխատության մեջ ոչ միայն անդրադարձել է իրավաբաններին գործնական հմտություններ ուսուցանելու կարևորությանը և նշանակությանը, այլև քննարկել է բուժհաստատություններում նման «կլինիկաներ» ստեղծելու գաղափարը, որտեղ ուսանողները խորհրդատու-ղեկավարների հսկողությամբ հնարավորություն կունենան ուսումնասիրելու սոցիալապես անապահով անձանց իրական իրավական խնդիրները[3]: Դ. Ի. Մեյերի կարծիքով՝ «Իրոք, իրավաբանի կոչումը, ինչպես բժշկինը, գործնական է, և, հետևաբար, ինչպես բժշկության ուսանողների գործնական պատրաստումը տեղի է ունենում ուսումնական հաստատությունում, այնպես էլ իրավաբանի գործնական պատրաստումը պետք է տեղի ունենա այնտեղ»[4]:

Տարբեր աղբյուրներում հանդիպում ենք, որ կլինիկայի նման առաջին կառույցը ձևավորվել է դեռևս Ռուսական կայսրությունում, հենց Դ. Ի. Մեյերի կողմից, Կազանի կայսերական համալսարանում, 1840-ականներին[5]: Մինչ

---

[3] Տե՛ս **Мейер, Д.И.** О значении практики в системе современного юридического образования / Орд. проф. имп. Казан. ун-та Дмитрия Мейера. Казань: тип. Ун-та, 1855, էջեր 42- 43:

[4] Նույն տեղում:

[5] Տե՛ս **Арсланов К. М., Демиева А. Г.** Значение идей Д. И. Мейера для современного юридического образования, Lex Russica, № 8 (153), август, 2019, էջ 20:

այդ նա դիմել էր Սանկտ Պետերբուրգի համալսարանի ղեկավարությանը՝ առաջարկելով բնակչության համար ստեղծել իրավաբանական խորհրդատվական ծառայություն, որտեղ իրավաբան ուսանողները պրակտիկա կանցկացնեին, սակայն Սանկտ Պետերբուրգում նրա գաղափարը չէր ստացել աջակցություն:

Կազանի համալսարանի կլինիկան գործեց մոտ տասը տարի, և այն փակվելուց հետո իրավաբանական կլինիկական կրթության զարգացման գաղափարը Ռուսաստանում մի քանի տասնամյակ մոռացվեց[6]:

Ինչ վերաբերում է «իրավաբանական կլինիկա» եզրույթին, ապա այն առաջին անգամ օգտագործել է գերմանացի պրոֆեսոր Ջ. Ֆրոմհոլդը, ով 1900 թ. «Գերմանական իրավաբանների թերթ» պարբերականում հրապարակել է հոդված, որն ուներ "Juristische Kliniken" վերտառությամբ ենթավերնագիր: Այս հոդվածի մեջ նա շեշտադրում էր բժշկական ֆակուլտետներին և բուհերին կից գործող կլինիկաների մեծ նշանակությունը պրակտիկ բժշկություն սովորելու համար և առաջարկում էր նմանատիպ կլինիկաներ ստեղծել նաև իրավաբանական բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանակում, որտեղ ուսանողները դասախոսների ղեկավարությամբ կվերլուծեին ոչ թե հորինված կամ ժամանակավրեպ իրավաբանական դեպքեր, այլ կմասնակցեին իրական, դեռ ավարտին չհասցված գործերի ուսումնասիրությանը՝ տրամադրելով իրավաբանական օգնություն այն մարդկանց, ովքեր դրա կարիքն ունեն[7]:

Հետագայում իրավաբանական կլինիկաների հիմնադրման գաղափարը փայլուն կերպով իրականացվել է Արևմուտքում՝ մասնավորապես անգլոսաքսոնական իրավական ավանդույթ ունեցող երկրներում: Իրավաբանական կլինիկաների ստեղծման գաղափարը հատկապես ընդլայնվել ու կատարելագործվել է ամերիկյան բուհերի կողմից:

Միացյալ Նահանգներում առաջին կլինիկական իրավաբանական կրթության ծրագիրը հիմնադրվել է 1893 թվականին Փենսիլվանիայի համալսարանի իրավաբանական դպրոցում և անվանվել է *Իրավաբանական դիսպանսեր*[8]: Այս նորարարական նախաձեռնությունը հնարավորություն էր տալիս Փենսիլվանիայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի ուսանողներին գործնական փորձառություն ձեռք բերելու՝ դասախոսների վերահսկողության ներքո հասարակությանը իրավաբանական ծառայություններ մատուցելով:

Հետագայում իրավաբանական դիսպանսեր բացվեց Դենվերի համալսարանում, ապա 1913 թվականին Հարվարդի համալսարանը հիմնեց Հարվարդի

---

[6] Տե՛ս **Гинцяк Л.Ф.,** Юридическая клиника: теория, практика, методика. Учебное пособие / Л.Ф. Гинцяк, В.Н. Ильченко, А.С. Шабуров; Урал. гос. пед. ун-т; под ред. К. А. Шпека. Екатеринбург, 2018, էջ 7:

[7] Տե՛ս **Мамин А.С., Усов И.С.,** Теоретико-правовой анализ развития юридического клинического образования в России, Общество и право, 2010, № 5, էջ 27:

[8] Տե՛ս **Wilson, R.J.** The Global Evolution of Clinical Legal Education: More than a Method. New York, Cambridge University Press, 2017, էջ 81:

Իրավաբանական օգնության բյուրոն, իսկ Մինեսոտայի համալսարանը պարտադիր դարձրեց ուսանողների մասնակցությունը Իրավաբանական օգնության ընկերության գրասենյակում[9]:

Ավելի ուշ՝ 1928 թվականին, Հարավային Կալիֆորնիայի համալսարանը ստեղծեց փորձնական, 6-ամսյա կլինիկական ծրագիր Ջոն Բրեդուեյի վերահսկողության ներքո, ով հետագայում հիմնադրեց Իրավաբանական օգնության կլինիկան Դյուկի համալսարանում, և այն դարձավ ամերիկյան բուհերի պատմության մեջ առաջին լիարժեք գործող ներբուհական կլինիկան[10]:

Իհարկե, 1920-ականների վերջին և 1930-ականներին կլինիկական կրթության նկատմամբ հետաքրքրությունը մեծ էր, ինչը պայմանավորված էր Բրեդուեյի վերոնշյալ գիտական և նախաձեռնողական աշխատանքով Հարավային Կալիֆոռնիայի և Դյուկի համալսարաններում, ինչպես նաև Կոլումբիայի համալսարանի պրոֆեսոր Ջերոմ Ֆրանկի «Ինչո՞ւ ոչ կլինիկական իրավաբանական դպրոց» վերնագրով հոդվածով, որը հրապարակվել էր Փենսիլվանիայի համալսարանի իրավաբանական հանդեսում[11]: Արդյունքում այս շարժումը լայն տարածում չստացավ, և միայն 1947 թվականին Թենեսիի համալսարանը դարձավ երկրորդ բարձրագույն իրավաբանական հաստատությունը, որը հիմնեց կայուն բուհական կլինիկական ծրագիր: Այն ցայսօր համարվում է երկրի ամենաերկարատև կլինիկական ծրագիրը:

Նշանակալից է այն փաստը, որ 1950-ականների ընթացքում ԱՄՆ-ում ընդամենը 28 իրավաբանական բուհեր էին առաջարկում իրավաբանական օգնության մոդելի վրա հիմնված կլինիկական որևէ ծրագիր[12]:

Ժամանակակից կլինիկական կրթությունը ԱՄՆ-ում իր զարգացումն ապրեց 1960-1970-ական թվականներին, երբ բարձրացավ իրավաբանական կրթության որակի վերաբերյալ դժգոհության մի մեծ ալիք, և այն համընկավ ԱՄՆ-ում «քաղաքացիական իրավունքների» շարժումներն սկսելու հետ: Շատ

---

[9] Մինեսոտայի համալսարանում իրավաբանական ֆակուլտետի ուսանողները պարտավոր էին ուսման ընթացքում որոշակի ժամանակ աշխատել կամ պրակտիկա անցնել Իրավաբանական օգնության ընկերության գրասենյակում, որը հասարակական կազմակերպություն էր և ստեղծվել էր՝ նպատակ ունենալով անվճար կամ ցածր գումարով իրավաբանական ծառայություններ մատուցել սոցիալապես անապահով անձանց: Այս պահանջը կլինիկական իրավաբանական կրթությունը դարձրել էր ուսման պարտադիր մաս՝ որպես գործնական փորձառություն, այնպես որ ուսանողները ոչ միայն տեսություն էին սովորում, այլ նաև իրական գործերով էին զբաղվում: Տե՛ս **Ogilvy, J.P.** Celebrating CLEPR's 40th Anniversary: The Early Development of Clinical Legal Education and Legal Ethics Instruction in U.S. Law Schools. Clinical Law Review, Vol. 16:1, Fall 2009, էջ 4:

[10] Տե՛ս նույն տեղը:

[11] Տե՛ս **Frank, J.** "Why Not a Clinical Lawyer-School?", University of Pennsylvania Law Review and American Law Register, Vol. 81, No. 8 (Jun., 1933), էջեր 907-923՝ https://www.jstor.org/stable/3308391:

[12] Տե՛ս **Johnstone, Q.** Law school and legal aid clinics. Journal of Legal Education, Summer, Association of American Law Schools, 1951, Vol. 3, No. 4, էջ 535՝ https://www.jstor.org/stable/42890509:

առաջադեմ իրավաբաններ ու դասախոսներ ակտիվ մասնակցում էին սոցիալական բարեփոխումներին, ուստի զարմանալի չէր, որ իրավաբանական դպրոցներում սկսեցին բացվել կլինիկական ծրագրեր, որտեղ ուսանողները անվճար իրավաբանական օգնություն էին ցուցաբերում նրանց, ովքեր ի վիճակի չէին վճարելու փաստաբանի ծառայությունների համար: Կլինիկական ծրագրեր ձևավորելու այս ալիքը բավականին ընդլայնվեց ԱՄՆ-ի բուհական հաստատություններում, և դրանց քանակը գնալով ավելանում էր: ԱՄՆ-ում ձևավորված իրավաբանական կլինիկական կրթության մոդելն այնուհետև ծառայեց որպես օրինակ բազմաթիվ երկրների բուհերի համար, ինչը պայմանավորեց ԱՄՆ-ի ճանաչումը որպես կլինիկական կրթության հիմնադրի:

Ամերիկյան իրավաբանների ասոցիացիայի 2024–2025 թթ. «Իրավաբանական դպրոցների հավատարմագրման ստանդարտներ և ընթացակարգերի կանոններ» փաստաթղթում հստակ նշվում է, որ իրավաբանական դպրոցները պետք է ապահովեն ուսանողների համար առնվազն վեց կրեդիտ-ժամ՝ կլինիկական կրթության, սիմուլյացիոն դասընթացների կամ արտագնա պրակտիկաների միջոցով[13]:

Այս պահանջները ընդգծում են գործնական ուսուցման կարևորությունը իրավաբանական կրթության մեջ և հաստատում են, որ ԱՄՆ-ի իրավաբանական դպրոցներում կլինիկական կրթությունը ոչ միայն ցանկալի, այլև պարտադիր բաղադրիչ է հավատարմագրման համար: Վերջինս իր հերթին հաստատում է ԱՄՆ-ի դիրքը որպես իրավաբանական կլինիկական կրթության առաջատարի:

Կլինիկական կրթությունը, ապացուցելով իր արդյունավետությունը, արագ տարածում գտավ նաև Եվրոպայում և Ասիայում, որտեղ բազում երկրներ սկսեցին ներմուծել այն իրենց իրավաբանական կրթական համակարգեր:

Եվրոպայում առաջին իրավաբանական կլինիկան բացվել է 1997 թվականին Լեհաստանի Կրակով քաղաքի Յագելոնյան համալսարանում՝ Ֆորդի հիմնադրամի աջակցությամբ[14]: Այնուհետև նմանատիպ կլինիկաներ բացվեցին նաև Վարշավայում, Բիալիստոկում և այլ քաղաքներում:

Եվրոպայում իրավաբանական կլինիկական կրթության զարգացման խթանման նպատակով 2012 թվականին հիմնադրվել է **Եվրոպական կլինիկական իրավաբանական կրթության ցանցը (ENCLE):** Այս կազմակերպությունը միավորում է եվրոպական տարբեր երկրների իրավաբանական կլինիկանե-

---

[13] Տե՛ս American Bar Association, *Standards and Rules of Procedure for Approval of Law Schools,* 2024–2025 edition, Standard 303(a)(3)՝ https://www.americanbar.org/products/inv/book/444191818/:

[14] Տե՛ս The Polish Legal Clinics Foundation՝ https://www.fupp.org.pl/en/legal-clinics/history:

որը՝ ստեղծելով համագործակցության հարթակ փորձի փոխանակման և բարելավման համար[15]: 2022 թվականին ENCLE-ն ընդունեց կլինիկական կրթության որակի չափանիշներ՝ ուղղված կլինիկական կրթության զարգացմանը Եվրոպայում: Այս չափանիշները ընդգծում են կլինիկական կրթության կարևորությունը՝ որպես իրավաբանական կրթության որակի բարձրացման գործիք: Եթե ԱՄՆ-ում Ամերիկյան իրավաբանների ասոցիացիայի ստանդարտները պարտադիր պահանջներ են սահմանում կլինիկական կրթության համար, ապա Եվրոպայում ENCLE-ի ընդունած չափանիշները ծառայում են որպես ուղեցույց՝ կլինիկական կրթության որակը բարձրացնելու նպատակով:

Հետագայում իրավաբանական կլինիկաներ սկսեցին ձևավորվել Միջին, Հարավային և Արևելյան Ասիայի, Լատինական Ամերիկայի, ինչպես նաև Հարավային Աֆրիկայի երկրներում:

Մի շարք երկրներում կլինիկական կրթությունը զարգացնելու նպատակով ընդունվել են նաև նորմատիվ իրավական ակտեր: Օրինակ, Հնդկաստանի Փաստաբանների խորհուրդը, որպես Հնդկաստանի իրավաբանական կրթությունը վերահսկող և փաստաբանների արտոնագրումը կարգավորող մարմին, սահմանել է, որ **կլինիկական իրավաբանական կրթությունը պարտադիր է բոլոր իրավաբանական դպրոցների և համալսարանների համար:** Կլինիկաները ներառվում են որպես կրթական ծրագրի պարտադիր բաղադրիչ: Այս կանոնները սահմանում են նաև պարտադիր կլինիկական առարկաների պահանջներ, օրինակ՝ փաստաբանական էթիկա, կարգապահական վարքագիծ և հաշվապահական վարում, հաշտարարություն, արբիտրաժ և բանակցային հմտություններ և այլն: Շատ բուհերում գործում են ներհամալսարանական **իրավաբանական կլինիկաներ,** որոնք նաև իրավաբանական անվճար ծառայություններ են մատուցում հասարակությանը[16]:

Բրազիլիայում ևս «Ազգային կրթության ուղեցույցների և հիմունքների մասին» գործող օրենքը սահմանում է, որ բարձրագույն կրթության ծրագրերը պարտավոր են ներառել գործնական ուսուցման բաղադրիչներ, որոնք ուղղված են ուսանողների մասնագիտական կարողությունների ձևավորմանը: Այս համատեքստում իրավաբանական կլինիկաները դիտարկվում են որպես կրթական գործընթացի կարևոր մեթոդաբանական տարրեր, որոնք ոչ միայն նպաստում են տեսական գիտելիքների արդյունավետ օգտագործմանը, այլև աջակցում են իրավաբանական ծառայությունների մատչելիության ընդլայնմանը հատկապես սոցիալապես խոցելի խմբերի համար[17]:

---

[15] Տե՛ս Եվրոպական կլինիկական իրավաբանական կրթության ցանցի կայքը՝ https://www.encle.eu/about-us/what-is-encle

[16] Տե՛ս Bar Council of India, Rules of Legal Education, Part IV, Schedule III, 2008՝ https://www.barcouncilofindia.org/info/bar-counci-bceugp:

[17] Տե՛ս Brazil's National Education Guidelines and Framework Law, No. 9.394/1996, Art. 43

Այսօր մի շարք երկրներում իրավաբանական կլինիկական կրթությունը հասել է այն աստիճանի ինստիտուցիոնալացման, որ ձևավորվել են նաև կլինիկական կրթությամբ զբաղվողների մասնագիտական ասոցիացիաներ: Օրինակ՝ ԱՄՆ-ում գործում է **Իրավաբանական կլինիկական կրթության ասոցիացիան (CLEA),** որը նպաստում է կլինիկական կրթության որակի բարձրացմանը և ուսուցման նորարարական մեթոդների զարգացմանը[18]: Մեծ Բրիտանիայում գործում է **Իրավաբանական կլինիկական կրթության կազմակերպությունը (CLEO),** որն ընդգրկում է համալսարանների իրավաբանական կլինիկաների դասախոսներին և հետազոտողներին[19]: Իսկ Հարավային Աֆրիկայում իրավաբանական կլինիկաները միավորվում են **Համալսարանական իրավաբանական կլինիկաների ասոցիացիայի (SAULCA)** ներքո, որը ոչ միայն աջակցում է կրթությանը, այլև համարվում է սոցիալական արդարադատությունը խթանող կարևոր դերակատար[20]:

Բացի դրանից՝ 1996 թվականին հիմնվել է Արդարադատության կրթության գլոբալ դաշինքը (GAJE), որը նպատակ ունի խթանել արդարադատության կայացումը կրթության միջոցով: Դաշինքի գործունեության առանցքում հատկապես գտնվում է **իրավաբանական կլինիկական կրթության զարգացումը,** որը դիտարկվում է որպես իրավական արդարադատության կրթության հիմնարար բաղադրիչ: GAJE-ն աջակցում է նաև սոցիալապես կողմնորոշված իրավաբանական կրթության տարածմանը՝ ձևավորելով **միջազգային մասնագիտական հարթակ**՝ փորձի փոխանակման, համագործակցության և բարենպաստ կրթական մոդելների տարածման նպատակով[21]:

ԵՊՀ իրավաբանական կլինիկայի գործունեությունը

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա խորհրդային շրջանում, երբ իրավական բազան գրեթե անփոփոխ էր, միայն խորը տեսական ուսուցումը կարծես թե բավարար էր իրավաբաններ պատրաստելու համար: Պրակտիկ հմտությունների ձևավորումը հիմնականում կատարվում էր ուսումնական և արտադրական պրակտիկայի ընթացքում: Իրավաբանական հմտությունների դասավանդման հատուկ մեթոդներ և առավել ևս իրավաբանական կլինիկաներ գոյություն չունեին:

Հետագայում իրավաբանական կրթության զարգացումը, մասնավոր իրավաբանական պրակտիկայի ընդլայնումը ազդեցին նաև իրավաբանական կրթության բնույթի վրա: Բացառապես տեսական ուսուցումը այլևս բավարար չէր հմուտ իրավաբան պատրաստելու համար: Այս հանգամանքը ստիպեց թե՛

---

[18] Տե՛ս Clinical Legal Education Association՝ https://www.cleaweb.org/

[19] Տե՛ս Clinical Legal Education Organisation՝ https://www.cleo-uk.org/

[20] Տե՛ս South African University Law Clinics Association՝ https://www.saulca.co.za/aulai-trust

[21] Տե՛ս Արդարադատության կրթության գլոբալ դաշինքի կայք՝ https://www.gaje.org/

դասախոսներին, թե՛ ուսանողներին գիտակցել պրակտիկ ուսուցման անհրաժեշտությունը:

Այս շրջանը համընկնում է անկախության ձեռքբերման հետ, երբ Հայաստանը սկսեց բարեփոխումներ իրականացնել նաև կրթության ոլորտում, այդ թվում՝ իրավաբանական:

Հենց այդ շրջանում էլ Հայաստանում միջազգային կառույցների և արտասահմանյան բուհերում կրթություն ստացած իրավաբանների միջև սկսվեցին քննարկումներ իրավաբանական կլինիկաներ ստեղծելու վերաբերյալ՝ որպես իրավագետ ուսանողների համար նախատեսված այլընտրանքային պրակտիկ ուսուցման ծրագիր, որը ներառում էր անվճար իրավաբանական օգնության տրամադրում սոցիալապես անապահով քաղաքացիներին:

Հայաստանի առաջին իրավաբանական կլինիկաները ձևավորվեցին նաև ի պատասխան ակնհայտ կարիքի՝ քաղաքացիներին որակյալ անվճար իրավաբանական օգնություն մատուցելու հատկապես այն դեպքում, երբ նրանք չէին կարող թույլ տալ իրենց ֆինանսական միջոցներով իրավաբանական ներկայացուցիչներ ունենալ:

Ի վերջո, 1999 թվականին առաջին իրավաբանական կլինիկան ձևավորվեց Հայաստանում, մասնավորապես Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) իրավագիտության ֆակուլտետում, որտեղ այն շարունակում է գործել առ այսօր[22]:

ԵՊՀ իրավաբանական կլինիկայի հիմնադրումը 1999 թվականին կարևորագույն քայլ էր ոչ միայն համալսարանում իրավաբանական կրթության զարգացման, այլև հանրությանը անվճար ու որակյալ իրավաբանական ծառայություններ տրամադրելու գործում: Այն ձևավորվեց միջազգային աջակցությամբ և գործընկերությամբ՝ ինչպես ֆինանսական, այնպես էլ իրավաբանական մոդելների մշակման առումով:

ԵՊՀ իրավաբանական կլինիկան ի սկզբանե ընտրել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ներսում գործող իրական հաճախորդներով կլինիկայի (այսպես կոչված՝ *in-house live-clients clinic*) մոդելը, որի գործունեությունը կենտրոնացած է հանրությանը անվճար իրավաբանական ծառայություններ տրամադրելու և կամավորական աշխատանք իրականացնելու վրա: Ուսանողները, ունենալով վերահսկողություն և մենթորինգ, ներգրավվում են տարատեսակ իրավաբանական ոլորտներում՝ քրեական, քաղաքացիական, ընտանեկան, վարչական, մարդու իրավունքների միջազգային պաշտպանության և այլն: Այս պրակտիկան, ի լրումն իրավաբանական կրթության տեսական մասի, նրանց հնարավորություն է տալիս ոչ միայն խորացնելու գիտելիքները,

---

[22] Տե՛ս ԵՊՀ իրավաբանական կլինիկայի կայքը՝ https://www.ysu.am/sci/565
ԵՊՀ իրավաբանական կլինիկայի ֆեյսբուքյան էջ՝
https://www.facebook.com/LegalClinicYSU/?locale=hy_AM:

այլև ստանալու պրակտիկ հմտություններ, որոնք կարևոր են մասնագիտական կարիերայի մեջ։

ԵՊՀ իրավաբանական կլինիկա ընդգրկված ուսանողները իրավաբանական ծառայություններ են մատուցում հասարակության սոցիալապես անապահով խավերին, ինչպես նաև տարբեր թիրախային խմբերի ներկայացուցիչներին (անչափահասներ, հաշմանդամներ, զինվորականներ, փախստականներ, տեղահանված անձինք և այլն)։

ԵՊՀ իրավաբանական կլինիկայի գործունեության կազմակերպման հիմքում դրված է ուսանողների կամավոր ներգրավվածության սկզբունքը, որը ներառում է դիմորդների նախնական ընտրություն՝ հարցազրույցի միջոցով։ Դիմելու իրավունք ունեն ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի առկա ուսուցման բակալավրիատի չորրորդ կուրսի, հեռակա ուսուցման բակալավրիատի չորրորդ և հինգերորդ կուրսերի, ինչպես նաև առկա և հեռակա ուսուցման մագիստրատուրայի ուսանողները։

Ուսումնական գործընթացը կառուցված է երկփուլ համակարգով՝ համադրելու համար տեսական պատրաստվածությունն ու գործնական փորձառությունը։

Սկզբնական փուլում ուսանողները մասնակցում են խորացված դասընթացների, որոնք վարում են կլինիկայի դասախոս-համակարգողները՝ մասնագիտական մեծ փորձառություն ունեցող իրավաբաններ։ Դասընթացների շրջանակում ուսանողները ձեռք են բերում իրավաբանի մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ հիմնարար հմտություններ՝ ներառյալ հարցազրույց վարելու, տեղեկատվություն հավաքագրելու, իրավական վերլուծություն իրականացնելու, փաստաթղթեր կազմելու, ինչպես նաև փաստաբանական էթիկայի սկզբունքներին համապատասխան գործելու կարողություններ։

Ուսուցման երկրորդ փուլում ուսանողները ներգրավվում են կլինիկայի առօրյա գործնական գործունեության մեջ՝ աշխատելով իրական իրավական խնդիրներ ունեցող անձանց հետ։ Նրանք իրականացնում են քաղաքացիների ընդունելություն, ուսումնասիրում են ներկայացված փաստաթղթերը, իրավական խնդրի բնույթը, կազմում նախնական իրավական դիրքորոշում, որը քննարկվում և հաստատվում է դասախոս-համակարգողի կողմից։ Դրանից հետո ուսանողները տրամադրում են իրավաբանական խորհրդատվություն կամ, անհրաժեշտության պարագայում, կազմում են իրավաբանական փաստաթղթեր՝ դիմումներ, հայցադիմումներ, միջնորդություններ, վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ, ինչպես նաև գանգատներ Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԴ)։ Վերջինիս հետ կապված՝ նշանակալից է այն փաստը, որ նախորդ տարիներին ներկայացված գանգատներից երկուսը գտնվում են ՀՀ կառավարության հետ հաղորդակցության փուլում՝ վկայելով կլինիկայի գործունեության արդյունավետության և իրավական ազդեցության

խորության մասին: Բացի դրանից՝ ԵՊՀ իրավաբանական կլինիկայի ուսանողները դասախոս-համակարգողի ղեկավարության ներքո մշակում և Մարդու իրավունքների եվրոպական դատարան են ներկայացնում անհատական գանգատներ՝ միտված Արցախից տեղահանված մեր հայրենակիցների իրավունքների պաշտպանության ապահովմանը: Ներկայումս մեկ տասնյակից ավել գանգատ է պատրաստվել և ուղարկվել ՄԻԵԴ, որտեղ դրանց մեծամասնությունն արդեն իսկ գրանցվել է՝ հետագա քննության նպատակով:

Տարեկան հիմքով իրավաբանական կլինիկայում ներգրավվում է միջինում 35 ուսանող, իսկ իրավաբանական խորհրդատվություն է տրամադրվում միջինում շուրջ 150 քաղաքացու: Այս տվյալները ոչ միայն ընդգծում են կլինիկական կրթության գործնական նշանակությունը, այլև վկայում են դրա կարևորության մասին՝ որպես սոցիալապես պատասխանատու, փորձառության վրա հիմնված ուսուցման մոդել, որը միաժամանակ ծառայում է կրթական, մասնագիտական և հասարակական նպատակներին:

ԵՊՀ իրավաբանական կլինիկան ներկայումս առավելապես գործում է քաղաքացիական իրավունքի, վարչական իրավունքի, քրեական իրավունքի և մարդու իրավունքների ոլորտներում: Սակայն իրավաբանական ոլորտների նկատմամբ որևէ սահմանափակում չի նախատեսվում, և ընդունվում են բոլոր այն գործերը, որոնք պահանջում են իրավական բնույթի լուծումներ:

Վերջին տարիներին իրավաբանական կլինիկան զգալիորեն ընդլայնել է իր համագործակցային ցանցը՝ ձեռք բերելով նոր գործընկերներ ինչպես միջազգային, այնպես էլ Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական մարմիններից: Առանձնահատուկ ակտիվ է կլինիկայի համագործակցությունը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի, Ֆինանսական համակարգի հաշտարարի, Հանրային պաշտպանի, ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության, Միասնական սոցիալական ծառայության և այլ պետական կառույցների հետ: Բացի դրանից՝ հաստատվել են համագործակցություններ բազմաթիվ միջազգային կառույցների և ներպետական հասարակական կազմակերպությունների հետ, օրինակ՝ ԱՄՆ պետքարտուղարություն, Կարլետոնի և Քուֆայի համալսարաններ, ՄԱԿ ՓԳՀ/UNHCR, «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ, Միգրացիայի միջազգային կազմակերպություն (IOM), «ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամ (KASA Foundation), Շվեդիայի Ռաուլ Վալլենբերգի անվան մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտ, Գերմանական համագործակցության կազմակերպություն (GIZ), Եվրոպական իրավունքի ուսանողների ասոցիացիա (ELSA), Հայաստանի հելսինկյան ասոցիացիա, Ամերիկյան իրավաբանների ասոցիացիա (ABA), «Իրավունքի զարգացման կենտրոն» ՀԿ և այլն:

Այս կազմակերպությունների հետ գործակցության շնորհիվ իրավաբանական կլինիկայում պարբերաբար իրականացվում են բազմաբնույթ ծրագրեր թե՛ իրավագիտության ոլորտում, թե՛ հարակից գիտություններում, որոնց

նպատակն է համալրել ապագա իրավաբանների բազմաոլորտային մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները:

Իրավաբանական կլինիկան, անվճար իրավաբանական ծառայություններ մատուցելուն զուգահեռ, իրականացնում է նաև «Իրավունք բոլորի համար» (Street Law) ծրագիրը: Վերջինիս նպատակն է, քաղաքացիական և իրավական կրթության զարգացումը խթանելով, նպաստել քաղաքացիական հասարակության ձևավորմանը և իրավական պետության կայացմանը՝ միաժամանակ բարձրացնելով իրավագիտակցության մակարդակը բնակչության շրջանում, հատկապես՝ դպրոցահասակ երեխաների մեջ:

Ծրագրի շրջանակում ԵՊՀ իրավաբանական կլինիկայի ուսանողները պարբերաբար այցելություններ են կատարում Երևան քաղաքի և Հայաստանի տարբեր մարզերի հանրակրթական դպրոցներ: Այդ այցելությունների ընթացքում ուսանողները, կիրառելով ինտերակտիվ ուսուցման մեթոդներ, ներկայացնում են իրավունքի տարբեր ոլորտներին առնչվող թեմատիկ դասախոսություններ՝ ուղղված թե՛ աշակերտների, թե՛ դպրոցի անձնակազմի իրազեկման բարձրացմանը: Բացի այդ, իրականացվում է տեղեկատվական հաղորդակցություն ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և իրավաբանական կլինիկայի կրթական ծրագրերի, ընդունելության կարգի և ուսումնական գործընթացների վերաբերյալ՝ նպաստելով աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը: Մի շարք դեպքերում դպրոցականներն իրենք են հյուրընկալվում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում և այցելում իրավաբանական կլինիկա՝ ճանաչողական այցի ձևաչափով: Դպրոցներում իրականացվող դասավանդումը ներառում է ինչպես տեսական, այնպես էլ գործնական կիրառություն ունեցող թեմաներ, ինչը ծրագիրը վերածում է ոչ միայն իրավական իրազեկման, այլև իրավագիտության հանրայնացման արդյունավետ հարթակի:

Այսպիսով, ԵՊՀ իրավաբանական կլինիկան ձևավորվել է ոչ միայն որպես ուսանողների պրակտիկ հմտությունների ձևավորման հարթակ, այլև որպես սոցիալապես պատասխանատու կրթական կառույց, որը միաժամանակ ծառայում է հասարակության իրավագիտակցության բարձրացման և իրավաբանական ծառայությունների հասանելիության խթանմանը: Կլինիկայի գործունեությունն ընդգրկում է իրավաբանական կրթության և իրավապաշտպանության դաշտի մի շարք ուղղություններ՝ դրանով իսկ վերածվելով կրթական և հասարակական նշանակություն ունեցող կարևոր ինստիտուտի:

Ուսանողները, ներգրավվելով կլինիկայի աշխատանքներում, մասնակցում են ոչ միայն իրավաբանական գործերի իրականացմանը, այլև համայնքային խնդիրների լուծմանն ուղղված գործընթացներին: Այս համադրումը նպաստում է ինչպես նրանց մասնագիտական փորձի ձևավորմանը, այնպես էլ սոցիալական պատասխանատվության գիտակցության խորացմանը: Կլինիկան այդ կերպ խթանում է իրավագիտության և իրավական արժեքների տարածումը հասարակության տարբեր շերտերում:

ԵՊՀ իրավաբանական կլինիկայի ապագա զարգացման տեսլականը հիմնված է կլինիկայի գործունեության տարածման, նորագույն տեխնոլոգիաների ինտեգրման և արդիական ուսուցողական մոտեցումների ներդրման վրա: Այս քայլերը կծառայեն ոչ միայն իրավաբանական կրթության արդիականացմանն ու ուսանողների մասնագիտական պատրաստվածության բարձրացմանը, այլև կնպաստեն որակյալ և հասանելի իրավաբանական օգնության տարածմանը՝ ի նպաստ հասարակության իրավագիտակցության ամրապնդման:

Այս ամենի հետ՝ ԵՊՀ իրավաբանական կլինիկայի ներկայիս գործունեությունը բախվում է կառուցվածքային և կազմակերպական բնույթի մի շարք մարտահրավերների, որոնց լուծումը պահանջում է համալիր և ռազմավարական մոտեցում: Դրանց շարքում առանձնանում են ֆինանսական կայունության ապահովման անհրաժեշտությունը, ուսանողների ներգրավվածության մակարդակի բարձրացումը, պետական մարմինների կողմից ինստիտուցիոնալ ճանաչման պակասը, իրավական կարգավորումների բացակայությունը, ինչպես նաև դասախոսական կազմի ընդլայնման և կլինիկայի հանրային տեսանելիության ամրապնդման խնդիրները:

Նշված մարտահրավերներն ակնհայտորեն վկայում են կլինիկայի գործունեության արդիականացման հրամայականի մասին: Այս բարեփոխումներն անհրաժեշտ է դիտարկել որպես առաջնահերթ ուղղություններ, որոնք միտված են կլինիկայի կայունության ամրապնդմանը և դրա գործառական ներուժի առավելագույն օգտագործմանը՝ համահունչ ժամանակակից իրավաբանական կրթության պահանջներին և սոցիալական սպասելիքներին

Ընդհանուր առմամբ, ԵՊՀ իրավաբանական կլինիկայի դերն ու արդյունավետությունն առաջիկա տարիներին կարող են դառնալ առանցքային գործոններ ոչ միայն իրավաբանական կրթության համակարգի կատարելագործման, այլև իրավական պետության ձևավորման գործընթացում՝ իրավունքի գերակայության, սոցիալական արդարության և իրավական գիտակցության զարգացման համատեքստում:

Եզրակացություն

Այսպիսով, իրավաբանական կլինիկական կրթությունը, ձևավորվելով տեսության և պրակտիկայի միջև եղած բացի պատճառով, դարձել է արձագանք այն խնդրին, որ իրավաբանական ուսումնական հաստատությունների շրջանավարտները պատրաստ չեն իրենց ստացած իրավական գիտելիքները գործնականում կիրառելուն:

Իրավաբանական կլինիկաները՝ որպես իրավաբանական կրթության և պրակտիկայի միահյուսման կարևորագույն գործիքներ, էական նշանակություն ունեն իրավաբանության ոլորտի զարգացման և իրավաբանական ծառայությունների մատուցման գործում: Դրանք ոչ միայն խթանում են ուսանողների պրակտիկ հմտությունների զարգացումը, այլև նպաստում են հասարա-

կության լայն շերտերին իրավաբանական օգնություն մատուցելու գործընթացին: Դրանք ուղղված են ապագա իրավաբանների մասնագիտական որակների զարգացմանը, մասնագիտական հմտությունների յուրացմանը, խորացմանն ու ընդլայնմանը: Միաժամանակ, դրանք անհրաժեշտ օղակ են բնակչության իրավագիտակցության և իրավագրագիտության մակարդակի բարձրացման համար:

Կլինիկաները ոչ միայն ակնհայտորեն նպաստել են ուսանողների մասնագիտական զարգացմանը, այլև միաժամանակ տրամադրել իրավաբանական ծառայություններ սոցիալական այն խմբերին, որոնք նրանց հաճախ անհասանելի էին մնում:

Իրավաբանական կլինիկական կրթության ոլորտում երկարաժամկետ ներգրավված մասնագետներն արձանագրել են, որ այն անհամեմատ խորքային և համակողմանի մոտեցում է, քան պարզապես իրավական հմտությունների ուսուցումը: Այն ոչ միայն մեթոդաբանություն է, այլև իրավաբանական կրթության այն եզակի բաղադրիչներից է, որը սերտորեն առնչվում է փաստաբանական համայնքի կողմից հռչակված՝ արդարադատության մատչելիության և իրավական պետության կայացման առաջնահերթություններին: Նշանակալից է նաև այն փաստը, որ վերջին տարիներին ստեղծվել են իրավաբանական կլինիկաներ, որոնց գործունեությունն ուղղված է հասարակական կազմակերպություններին իրավական աջակցություն ցուցաբերելուն, ինչը վկայում է կլինիկական կրթության մոտեցումների ստեղծագործականության և ճկունության մասին: Օրինակ, Հարվարդի իրավաբանական դպրոցը առաջարկում է 13 արտագնա կլինիկական ծրագիր (Externship clinics), որոնց շրջանակներում ուսանողներն ունեն հարյուրավոր տեղեր ԱՄՆ պետական մարմիններում և հասարակական կազմակերպություններում: Ուսանողները, արտագնա կլինիկային զուգահեռ, մասնագիտական պարտադիր կուրս են անցնում, որի ընթացքում նրանք քննարկում և վերլուծում են իրենց իրավական գործերը[23]: Ավելի լայն իմաստով՝ կլինիկական կրթությունը սերտորեն կապված է արդարություն ուսուցանելու նպատակների հետ. ուսանողները սովորում են, թե ինչպես իրենց մասնագիտությամբ կարող են նպաստել հասարակության մեջ արդարության հաստատմանը (արդարության գաղափարի ամրապնդում), իրենց աշխատանքով աջակցում են սոցիալապես խոցելի խմբերին՝ օգնելով պաշտպանել իրենց իրավունքները (սոցիալական պատասխանատվության ձևավորում), գործնականում տեսնում են, թե ինչ կարևոր է, որ օրենքը հասանելի լինի բոլորին՝ անկախ սոցիալական դիրքից (իրավունքի գերակայության և իրավահավասարության արժեքների զարգացում): Վստահորդների պարագայում, երբ նրանք կլինիկաներում ստանում են անվճար իրավաբանական ծառայություններ, ուսանողների նվիրվածությունը հաճախ

[23] Տե՛ս Հարվարդի իրավաբանական դպրոցի կայք, https://hls.harvard.edu/clinics/externship-clinics/

դառնում է նրանց համար եզակի և վստահություն ներշնչող փորձառություն: Շատերի համար սա առաջին անգամ է, երբ նրանք ստանում են որակյալ իրավաբանական օգնություն՝ առանց ֆինանսական ծանրաբեռնվածության, ինչը նպաստում է իրավական համակարգի նկատմամբ վստահության աճին և արդարության հասանելիության գաղափարի ամրապնդմանը:

Արդյունքում, իրավաբանական կլինիկական կրթությունը ոչ միայն կրթական գործընթաց է, այլև սոցիալական փոփոխությունների գործիք, որը նպաստում է իրավական մշակույթի զարգացմանը, իրավաբանական ծառայությունների մատչելիության բարձրացմանը և հասարակության շրջանում իրավագիտակցության խթանմանը: Ապագա բարեփոխումներն ու տեխնոլոգիական նորարարությունները կզարգացնեն կլինիկայի աշխատանքը՝ դարձնելով այն ավելի արդյունավետ և համաշխարհային չափանիշներին համապատասխան:

КНАРИК ВАРДАНЯН – ***История формирования юридических клиник и их роль на примере деятельности юридической клиники ЕГУ.***– В рамках научной статьи было изучено формирование и развитие юридических клиник как студенческих консультационных центров. В частности, внимание уделено происхождению термина «юридическая клиника», распространению данного института в ведущих университетах мира, а также его образовательному и социальному значению. Рассматриваются возможности передачи студентам, получающим юридическое образование, практических навыков для их дальнейшего применения в профессиональной деятельности, а также оказание бесплатной и качественной юридической помощи социально уязвимым слоям общества.
В статье представлена также история внедрения клинического юридического образования на юридическом факультете Ереванского государственного университета, этапы его формирования и развития, а также текущая деятельность.

Ключевые слова: *юридическое образование, практические навыки, квалифицированный специалист, бесплатная консультация, юридические услуги, повышение правовой осведомлённости, юридическая клиника, юридический факультет ЕГУ.*

KNARIK VARDANYAN – ***The History of the Formation and the Role of Legal Clinics: A Case Study of the Yerevan State University Legal Clinic.***– The scientific article explores the historical evolution and development of legal clinics as student-led legal counseling centers. It examines the origins and global proliferation of the term "legal clinic," highlighting its integration into leading universities worldwide. The research emphasizes the dual significance of legal clinics- educational and social- focusing on their role in equipping law students with practical professional skills and in providing free, high-quality legal assistance to socially vulnerable populations.
A significant part of the article focuses on the foundation and evolution of clinical legal education at the Faculty of Law of Yerevan State University, highlighting its origins, key developmental milestones, and the breadth of its current activities.

Key words: *legal education, practical skills, qualified specialist, free consultation, legal services, raising legal awareness, legal clinic, YSU Faculty of Law.*

References

Арсланов К.М., Демиева А.Г., Значение идей Д. И. Мейера для современного юридического образования // Lex Russica. 2019. № 8. стр.17-26.

Гинцяк, Л.Ф. Юридическая клиника: теория, практика, методика. Учебное пособие / Л. Ф. Гинцяк, В.Н. Ильченко, А.С. Шабуров; Урал. гос. пед. ун-т; под ред. К. А. Шпека. Екатеринбург, 2018, 75 стр.

Мамин, А.С., Усов, И.С. Теоретико-правовой анализ развития юридического клинического образования в России / А.С. Мамин, И.С. Усов Общество и право. 2010. № 5. стр. 27–30.

Мейер Д.И. О значении практики в системе современного юридического образования / Орд. проф. имп. Казан. ун-та Дмитрия Мейера. Казань: тип. Ун-та, 1855, 50 стр.

Frank J., "Why Not a Clinical Lawyer-School?". University of Pennsylvania Law Review and American Law Register, Vol. 81, No. 8 (Jun., 1933), pp. 907-923; https://www.jstor.org/stable/3308391

Johnstone Q., Law school and legal aid clinics. Journal of Legal Education, Summer, Association of American Law Schools, 1951, Vol. 3, No. 4, pp. 535-554 https://www.jstor.org/stable/42890509

Krannich J., Holbrook J., McAdams J., Beyond Thinking Like a Lawyer‘ and the Traditional Legal Paradigm: Toward a Comprehensive View of Legal Education, Denver Law Review, Vol. 86, No. 2, 2009, 25 pages

https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=2446685

Lozanovska I.S., Stanojoska A., Ilijevski I., Goran I., Access to Justice Through Clinical Legal Education: A Case Study of the Faculty of Law, UKLO Bitola, North Macedonia, Journal of Legal and Political Education, Volume 1, Number 1, 2024, pp. 19-34.

https://doi.org/10.47305/JLPE2411019shl

Ogilvy J.P., Celebrating CLEPR’s 40th Anniversary: The Early Development of Clinical Legal Education and Legal Ethics Instruction in U.S. Law Schools. Clinical Law Review, Vol. 16:1, Fall 2009, 21 pages

Wilson R.J., The Global Evolution of Clinical Legal Education: More than a Method. New York, Cambridge University Press, 2017, 360 pages

Համացանցային ռեսուրսներ

Ամերիկյան իրավաբանների ասոցիացիայի կայք, https://www.americanbar.org

Արդարադատության կրթության գլոբալ դաշինքի կայք, https://www.gaje.org/

ԵՊՀ իրավաբանական կլինիկայի կայք, https://www.ysu.am/sci/565

ԵՊՀ իրավաբանական կլինիկայի ֆեյսբուքյան էջ, https://www.facebook.com/LegalClinicYSU/?locale=hy_AM

Եվրոպական կլինիկական իրավաբանական կրթության ցանցի կայք, https://www.encle.eu/about-us/what-is-encle

Իրավաբանական կլինիկական կրթության ասոցիացիայի կայք (ԱՄՆ), https://www.cleo-uk.org/about-cleo/

Իրավաբանական կլինիկական կրթության կազմակերպության կայք (Մեծ Բրիտանիա), https://www.cleo-uk.org/about-cleo/

Լեհաստանի իրավաբանական կլինիկաների հիմնադրամ, https://www.fupp.org.pl

Հարավային Աֆրիկայի համալսարանական իրավաբանական կլինիկաների ասոցիացիայի, կայք https://www.saulca.co.za/aulai-trust

Հարվարդի իրավաբանական դպրոցի կայք, https://hls.harvard.edu/clinics/externship-clinics/

Հնդկաստանի փաստաբանների խորհրդի կայք, https://www.barcouncilofindia.org

Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն
2026, Vol. 2: SPECIAL ISSUE, հունվար, 22-36
https://doi.org/10.46991/BYSU.C/2026.SP2.022

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՏԻԳՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ[*], **ՆԱՐԵ ՊԱՐՈՆՅԱՆ**[**]
Երևանի պետական համալսարան

Իրավաբանական կլինիկաները ավանդաբար իրականացնում են երկու հիմնական առաքելություն՝ կրթական և սոցիալական՝ հանդիսանալով իրավաբանական կրթության և իրավաբանական օգնության մատուցման յուրահատուկ ձև: Միևնույն ժամանակ ակնհայտ է, որ իրավաբանական կլինիկաների գործունեության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է գործառութային, կառուցակարգային, ընթացակարգային և նյութական անհրաժեշտ ու բավարար նախադրյալների առկայությամբ: Ընդ որում, որպեսզի քննարկվող նախադրյալներին հաղորդվի ինստիտուցիոնալ բնույթ, անհրաժեշտ է դրանց տալ իրավական պատշաճ ամրագրում: Տեսական աղբյուրների, հայրենական օրենսդրության, ինչպես նաև միջազգային և ներպետական փորձի հիման վրա աշխատանքում ներկայացվել են իրավաբանական կլինիկաների դերն ու նշանակությունը, «իրավաբանական կլինիկա» հասկացության բովանդակությունը, վերլուծվել են դրանց կրթական և սոցիալական գործառույթները, ինչպես նաև քննարկվել են իրավաբանական կլինիկաների գործունեության արդյունավետությունը պայմանավորող նախադրյալները:

[*] **Տիգրան Մարկոսյան –** իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ, ԵՊՀ իրավաբանական կլինիկայի դասախոս-կոորդինատոր, Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անդամ, Մնանկության գործով կառավարիչների որակավորման հանձնաժողովի անդամ
Тигран Маркосян – кандидат юридических наук, доцент кафедры гражданского процесса юридического факультета ЕГУ, преподаватель-координатор юридической клиники юридического факультета ЕГУ, член Квалификационной комиссии управляющих по делам о банкротстве, член Комиссии по защите конкуренции РА
Tigran Markosyan –Candidate of Legal Sciences, Associate Professor at the Chair of Civil Procedure of YSU, Lecturer-Coordinator at the Legal Clinic, Member of the Commission for the Qualification of the Bankruptcy Managers, Member of the Competition Protection Commission of the RA
Էլ. փոստ՝ tigranmarkosyan@ysu.am. ORCID ID: https://orcid.org/0000-0002-4671-1663
[**] **Նարե Պարոնյան –** ԵՊՀ իրավաբանական կլինիկայի իրավախորհրդատու, Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անդամի օգնական
Наре Паронян – юридический консультант юридической клиники ЕГУ, помощник члена Комиссии по защите конкуренции РА
Nare Paronyan – Legal Consultant at the YSU Legal Clinic, Assistant to the Member of the Competition Protection Commission of the RA
Էլ. փոստ՝ nare.paronyan@edu.ysu.am. ORCID ID: https://orcid.org/0009-0005-4171-6480

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 04.07.2025
Գրախոսվել է՝ 17.11.2025
Հաստատվել է՝ 13.01.2026
© The Author(s) 2026

Առանձին քննարկման առարկա է դարձվել իրավաբանական կլինիկաների գործունեությունը կարգավորող օրենսդրության ոչ բավարար մակարդակը, այդ թվում՝ իրավաբանական կլինիկաներում ընդգրկված ուսանողների՝ դատական ներկայացուցչություն իրականացնելու սահմանափակումները, իրավաբանական օգնության համար անհրաժեշտ ապացույցների ձեռքբերման արդյունավետ գործիքակազմի բացակայությունը, հաճախորդների կողմից կլինիկայի նկատմամբ վստահություն ապահովող այնպիսի պահանջների բացակայությունը, ինչպիսիք են կլինիկայի մասնագիտական վարքագծի կանոնները, և այլն:
Հոդվածում հեղինակները ներկայացնում են գիտագործնական մի շարք եզրահանգումներ, որոնք կարող են ուղենիշային լինել իրավաբանական կլինիկաների գործունեության արդյունավետության բարձրացման և կլինիկական կրթության համակարգի հետագա զարգացման համար:

Բանալի բառեր – *իրավաբանական կլինիկա, կլինիկական կրթություն, կրթական ծրագիր, ուսումնական հաստատություն, անվճար իրավաբանական օգնություն, սոցիալապես անապահով խավ, հանրային պաշտպանություն, դատական ներկայացուցչություն, լրացուցիչ կառուցակարգ, վարքագծի կանոններ*

Ներածություն

Ժամանակակից աշխարհում իրավաբանական կլինիկաները իրավաբանական կրթության շրջանակում ունեն առանձնահատուկ կարևորություն: Դրանք, որպես կանոն, ձևավորվում են որպես բարձրագույն ուսումնական հաստատությունների կառուցվածքային ստորաբաժանումներ՝ նպատակ ունենալով նպաստել փորձառու իրավաբանների ձևավորմանը և աջակցել սոցիալապես անապահով քաղաքացիներին՝ տրամադրելով նրանց իրավական աջակցություն:

Հատկանշական է, որ իրավաբանական կլինիկաները մեծ տարածում են գտել նաև Հայաստանում: Սակայն, դրան զուգահեռ, օրենսդիրը միայն վերջերս է որոշակիորեն անդրադարձ կատարել իրավաբանական կլինիկաներին, մասնավորապես 2022 թվականին՝ ««Փաստաբանության մասին» օրենքում[1] փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքով[2] (այսուհետ նաև՝ **Օրենք**) կատարված փոփոխություններով, ինչի արդյունքում իրավաբանական կլինիկաները դիտարկվում են հանրային պաշտպանության և անվճար իրավաբանական օգնության համակարգերում:

Նման պայմաններում իրավաբանական կլինիկաների շարունակական զարգացումը ապահովելու անհրաժեշտությունը հրատապ է դարձնում

[1] Ընդունվել է 14.12.2004: Ուժի մեջ է մտել 22.01.2005: Տե՛ս ՀՀՊՏ 2005.01.21/6(378): Հոդ.102: Այսուհետ՝ նաև **Օրենք**:

[2] Ընդունվել է 05.10.2022: Ուժի մեջ է մտել 06.11.2022: Տե՛ս Միասնական կայք 2022.10.17-2022.10.30:

դրանց գործունեության արդյունավետությունը պայմանավորող նախադրյալների վերհանումը և օրենսդրական մակարդակում դրանց պատշաճ ամրագրումը:

Վերոգրյալով պայմանավորված՝ սույն հետազոտության նպատակն է տեսական աղբյուրների, հայրենական օրենսդրության, միջազգային և ներպետական փորձի հիման վրա գնահատել Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական կլինիկաների գործունեությունը սահմանող իրավական հիմքերը և նախանշել դրանց հետագա զարգացման ուղղությունները:

Այդ նպատակին հասնելու համար առանձնացվել են հետևյալ խնդիրները.

- ներկայացնել իրավաբանական կլինիկաների ընդհանուր բնութագիրը.
- վերլուծել իրավաբանական կլինիկաների գործառույթները.
- բացահայտել իրավաբանական կլինիկաների գործունեության արդյունավետությունը պայմանավորող նախադրյալները.
- գնահատել օրենսդրության առկա վիճակը և ներկայացնել դրա կատարելագործման ուղենիշներ:

Հետազոտության շրջանակում կիրառվել են ընդհանուր գիտական (անալիզ, սինթեզ, ինդուկցիա, դեդուկցիա, ընդհանրացում և այլն) և հատուկ (դիալեկտիկական, ձևական-տրամաբանական, համակարգակառուցվածքային, իրավահամեմատական և այլն) մեթոդներ:

Իրավաբանական կլինիկաների ընդհանուր բնութագիրը

Իրավաբանական կլինիկաները ուսանողների՝ որպես ապագա իրավաբանների կայացման հարցում ունեն առանցքային նշանակություն: Դրանք ուսանողներին հնարավորություն են տալիս գիտակցելու իրավաբանի սոցիալական դերը, օգնում են տիրապետել մասնագիտական էթիկային, ինչպես նաև ձեռք բերել սոցիալապես անպաշտպան խմբերի հետ աշխատանքի փորձ՝ այս կերպ ձևավորելով ապագա իրավաբանի անհատականությունը[3]:

Այս դերակատարումը ավելի է կարևորվում ժամանակակից աշխարհում, երբ իրավաբանական կրթության զարգացման միտումները հստակորեն ուղղված են ուսուցման պրակտիկ բաղադրիչի ուժեղացմանը: Նման պայմաններում կլինիկական ուսուցումը օգնում է բարձրացնել իրավաբանական կրթության որակը և ձևավորել մրցունակ մասնագետներ՝ պատրաստ լիարժեք գործելու պրակտիկ իրավիճակներում: Միևնույն ժամանակ, իրավաբանական կլինիկաների միջոցով բարձրացվում է սոցիալապես անապահով խմբերի համար արդարադատության հասանելիության մակարդակը՝ նպաստելով սոցիալական արդարության հաստատմանը:

Մասնագիտական գրականության մեջ խոսվում է նաև այն մասին, որ իրավաբանական կլինիկաները նպաստում են քաղաքացիական հասարակության

---

[3] Տե՛ս **Акашкина Т. Г., Бышов Д. В.,** Функции юридической клиники, Огарёв-Online, (2015), 5 (46), էջ 1:

ձևավորմանը և իրավաբանական մշակույթի ամրապնդմանը[4]: Այդպիսով իրավաբանական կլինիկաները աստիճանաբար դառնում են քաղաքացիական հասարակության անբաժանելի տարր, որի գործունեությունը հետապնդում է սոցիալական օգտակար նպատակներ և նպաստում է ապագա իրավաբանի մասնագիտական կողմնորոշմանը, ինչպես նաև հեշտացնում նրա հետագա ադապտացիան մասնագիտական միջավայրում[5]:

Հետևում է, որ իրավաբանական կլինիկաները իրականացնում են երկու հիմնական գործառույթ՝ կրթական և սոցիալական. մի կողմից՝ ուսանողներին փոխանցել գործնական հմտություններ, որոնք անհրաժեշտ են իրենց ապագա մասնագիտության համար, մյուս կողմից՝ բնակչությանը ապահովել խորհրդատվական և այլ իրավաբանական օգնությամբ[6]: Ընդ որում, այս մոտեցումների արդյունավետ համադրությամբ իրավաբանական կլինիկաները կարող են նշանակալի ներդրում ունենալ արդարադատության հասանելիության բարձրացման գործում[7]:

Ուշագրավ է, որ, ըստ էության, նման տրամաբանություն է որդեգրվել նաև ՀՀ օրենսդրության շրջանակներում, մասնավորապես.

- Օրենքի 41-րդ հոդվածի 9-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ հանրային պաշտպանի գրասենյակը, հաշվի առնելով իրավաբանական օգնություն տրամադրելու օրենսդրական սահմանափակումները, օրենքով նախատեսված անձանց հանրային պաշտպանությունը կարող է կազմակերպել նաև Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների և փաստաբանական ակադեմիայի կողմից կազմակերպվող իրավաբանական կլինիկաների ուսանողների (ունկնդիրների) օժանդակության միջոցով:

- Օրենքի 44.1-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կազմակերպությունները, ներառյալ՝ փաստաբանական գործունեություն իրականացնող կազմակերպությունները և Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից կազմակերպվող իրավաբանական կլինիկաները, կարող են կազմակերպել կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրման ծրագրեր:

---

[4] Տե՛ս **Панга Е. В., Конокин Д. В.,** Организация работы студентов в юридической клинике и их мотивация: Особенности оказании бесплатной правовой помощи населению, Право и управление, (2023), (9), էջ 297:

[5] Տե՛ս **Озерникова Т. Г., Смирнова И. Г., Тетерина, Л. А.,** Особенности развития юридических клиник в современных условиях и их место в образовательном кластере, Известия Байкальского государственного университета, (2015), 25 (2), էջ 312:

[6] Տե՛ս **Климкина Ю. А.,** Деятельность юридических клиник в отношении несовершеннолетних лиц, Наука и образование сегодня, (2016), 7 (8), էջ 28:

[7] Տե՛ս **Franz H.**, Clinical legal education as an instrument to address access to justice: A critical analysis of the clinical movement in Germany, International journal of clinical legal education, Practice report, 2023, էջ 133:

Ամփոփելով շարադրվածը՝ կարելի է եզրահանգել իրավաբանական կլինիկաների ոչ միայն երկակի դերակատարման, այլև հենց «իրավաբանական կլինիկա» հասկացության երկակի բովանդակության մասին, քանի որ այն ընկալվում է ինչպես կրթական ծրագիր կամ իրավաբանական կրթության բաղադրիչ, այնպես էլ անվճար իրավաբանական օգնություն ապահովող հաստատություն:

Իրավաբանական կլինիկան որպես կրթական գործունեություն

Ըստ Եվրոպական իրավաբանական կլինիկական կրթության ցանցի (ENCLE)՝ «Իրավաբանական կլինիկական կրթությունը» սահմանվում է որպես փորձառական ուսուցման վրա հիմնված իրավաբանական դասավանդման մեթոդ, որն ուժեղացնում է գիտելիքները, անձնական հմտությունները և արժեքները՝ միաժամանակ խթանելով սոցիալական արդարությունը: Այս մոտեցումը կիրառում է պրակտիկորեն ուղղված, ուսանողակենտրոն, խնդիրների վրա հիմնված և ինտերակտիվ ուսուցման մեթոդներ: Այն ներառում է ուսանողների պրակտիկ աշխատանք իրական գործերի և սոցիալական խնդիրների շուրջ՝ փորձառու մասնագետների վերահսկողության ներքո: Այս կրթական գործունեության նպատակն է ձևավորել պրոֆեսիոնալ վերաբերմունք և բարելավել ուսանողների գործնական հմտությունները՝ ընդգծելով արդի, սոցիալապես ուղղված իրավաբանի դերը իրավունքի գերակայության, արդարադատության հասանելիության, հակամարտությունների խաղաղ կարգավորման և սոցիալական խնդիրների լուծման գործընթացում[8]:

Այլ կերպ ասած՝ մեր օրերում իրավաբանական կլինիկան իրավաբանական բուհում գործնական ուղղվածությամբ կրթության ամենաարդյունավետ բաղադրիչներից մեկն է[9]: Ուստի իրավաբանական կլինիկայի կրթական գործառույթը այն համընդհանուր նպատակի մասն է, որի միջոցով իրավաբան ուսանողը ոչ միայն տեսական գիտելիքներ է ձեռք բերում, այլև սովորում է դրանք կիրառել իրական իրավիճակներում:

Այս համատեքստում, ի թիվս այլնի, իրավաբանական կլինիկաների հիմնական խնդիրներից են ուսանողների ինքնուրույն աշխատելու կարողությունների զարգացումը, տեսական առարկաների ուսումնասիրման արդյունավետության բարձրացումը, իրավական մշակույթի ձևավորումը, շրջանավարտների մրցունակության բարձրացումը աշխատաշուկայում, տեղեկատ-

---

[8] Տե՛ս **Rusi N., Melo I. K.,** Clinical Legal Education: The role and challenges in enhancing access to justice, Journal of educational and social research, (2025), 15(1), էջ 212:

[9] Տե՛ս **Трофимова М. С.,** Механизмы взаимодействия юридических клиник и государственных органов: правовые, организационные и этические проблемы, Правовое государство: Теория и практика, (2021), 3 (65), էջ 211:

վական համակարգերի հետ աշխատելու համար անհրաժեշտ հմտությունների ձևավորումը, իրավաբանական առարկաների խորացված ուսուցումը՝ դրանց գործնական յուրացման համատեքստում[10]:

Ս. Ուիզները, անդրադառնալով այն հարցին, թե ինչ են ուսանողները սովորում իրավաբանական կլինիկայում հաճախորդներին ներկայացնելու գործընթացում, ինչը չէին սովորի ակադեմիական դասընթացների ընթացքում, նշում է, որ, նախ և առաջ, նրանք հասկանում են, որ սոցիալապես անապահով անձանց բազմաթիվ խնդիրներ հնարավոր է լուծել: Երկրորդ՝ նրանք սովորում են, որ իրավաբանական ներկայացուցչությունը նույնքան անհրաժեշտ է սոցիալապես անապահով խմբերի բարդ իրավական խնդիրների լուծման համար, որքան ապահով մարդկանց: Երրորդ՝ նրանք սովորում են իրավական տեսությունը մշակել և կիրառել՝ հաճախորդներին ներկայացնելու միջոցով: Չորրորդ՝ նրանք սովորում են, թե ինչպես օգտագործել իրավական համակարգը՝ հասնելու սոցիալական փոփոխության: Եվ վերջապես՝ նրանք հասկանում են իրավունքի սահմանները անհատական և հասարակական խնդիրների լուծման գործընթացում: Այս փորձառության միջոցով ուսանողները հաճախ նաև բախվում են սոցիալական և տնտեսական անարդարությանն ու գործնականում իրականացնում փաստաբանի մասնագիտական պարտականությունը՝ ներգրավվելով հանրօգուտ ծառայության մեջ և իրավաբանական օգնություն տրամադրելով նրանց, ովքեր ի վիճակի չեն վճարել դրա համար[11]:

«Իրավաբանորեն մտածել սովորելու» նպատակը այստեղ ընդլայնվում է՝ ընդգրկելով նաև ուսանողի անձնային, վերլուծական և պաշտպանական հմտությունները, ինչպես նաև նրա վստահելիությունը, արժեքներն ու աշխատանքային սովորությունները՝ մեկ ամբողջական պրոֆեսիոնալի ձևավորման համար[12]:

Միևնույն ժամանակ, որոշ երկրներում իրավաբանական կլինիկան դիտարկվում է որպես ուսումնական ծրագիր: Օրինակ՝ ԱՄՆ-ում այդ նպատակով ստեղծվում են հատուկ ուսումնական ծրագրեր, որոնք ուղղված են ուսանողների դատական գործերին մասնակցելու, հաճախորդների հետ աշխատելու, իրավաբանական փաստաթղթեր պատրաստելու փորձի ձեռքբերմանը[13]: Մեկ այլ կարծիքի համաձայն՝ ապագա իրավաբանների պատրաստումը հնարավոր չէ առանց ուսումնառության գործընթացում հատուկ ծրագրերի ներդրման, որոնք նպատակ ունեն զարգացնելու գործնական հմտությունները: Այդ

---

[10] Տե՛ս **Тишкович К. С.** Инновационный подход к юридическому клиническому обучению: Проблемы и перспективы, Вестник Омского университета, Серия «Право», (2021), 18 (1), էջ 106:

[11] Տե՛ս **Wizner S. ,** The Law School Clinic: Legal Education in the Interests of Justice, 70 Fordham L. Rev., (2002), էջ 1935:

[12] Տե՛ս **Suellyn S.**, The role of clinical programs in legal education, Mich. B. J. 77, (1998), № 7, էջ 674:

[13] Տե՛ս **Ситникова К. О. , Котряхов Н. В. ,** Обучающая функция юридической клиники, Концепт, (2017), (12), էջ 238:

ծրագրերի շարքում, անկասկած, առանձնահատուկ տեղ է զբաղեցնում իրավաբանական կլինիկան[14]:

Իրավաբանական կլինիկան որպես անվճար իրավաբանական օգնության ապահովման լրացուցիչ կառուցակարգ

Սահմանադրության[15] 64-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով սահմանված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին:

Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը ներառում է՝ նախ, որակյալ իրավաբանական ծառայություն ստանալու հնարավորություն, և երկրորդ, պետության պարտականությունը՝ ապահովելու այդպիսի անվճար օգնություն կարիք ունեցող անձանց համար[16]: Մեկ այլ որոշման շրջանակներում Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ իրավաբանական օգնություն ստանալու՝ անձի սահմանադրական իրավունքի օրենսդրական երաշխիքները պետք է մեկնաբանվեն իրավաբանական օգնության լիարժեքության սկզբունքի հիման վրա՝ նկատի ունենալով, որ իրավաբանական օգնությունը տրամադրվում է օրենքով չարգելված ցանկացած ձևով և եղանակով՝ ներառելով, սակայն չսահմանափակվելով իրավաբանական խորհրդատվությամբ և ներկայացուցչությամբ[17]:

Նշվածը կոչված է ապահովելու Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի[18] 6-րդ հոդվածում ամրագրված արդար դատաքննության իրավունքը, որը ենթադրում է, որ արդար դատաքննությունը պետք է լինի ոչ միայն իրավական առումով հասանելի, այլև փաստացի իրագործելի:

Հիշյալ պարտականության կատարումը կենսագործելու նպատակով Օրենքը սահմանում է հանրային պաշտպանության՝ օրենքով նախատեսված դեպքերում անձանց անվճար իրավաբանական օգնության տրամադրման հնարավորությունը, որը ներառում է.

1) խորհրդատվությունը՝ հայցադիմումների, դիմումների, բողոքների և այլ իրավաբանական բնույթի դատավարական փաստաթղթերի կազմում, ներառյալ՝ իրավաբանական տեղեկատվության տրամադրում.

---

[14] Տե՛ս **Федюнина, Т. В.**, Правовая клиника как образовательный проект в подготовке будущих юристов, Вестник Южно-Уральского государственного гуманитарно-педагогического университета, (2014), (4), էջ 158:

[15] Ընդունվել է 05.07.1995: Ամբողջությամբ վերաշարադրվել է 06.12.2015: Տե՛ս ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում: Հոդ. 1118:

[16] Տե՛ս Սահմանադրական դատարանի 2008 թ. հոկտեմբերի 8-ի թիվ ՍԴՈ-765 որոշումը:

[17] Տե՛ս Սահմանադրական դատարանի 2025 թ. ապրիլի 16-ի ՍԴՈ-1776 որոշումը:

[18] Ընդունվել է 04. 11. 1950: Տե՛ս ՀՀՊՏ 2002.06.05/17(192): Հոդ. 367:

2) ներկայացուցչությունը կամ պաշտպանությունը՝ քրեական վարույթներով, քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով:

Հանրային պաշտպանությունը ապահովվում է հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով, որում աշխատող փաստաբանների քանակը սահմանվում է փաստաբանների պալատի խորհրդի կողմից՝ պետական բյուջեի միջոցների հաշվին ֆինանսավորման սահմաններում: Այլ կերպ ասած՝ հանրային պաշտպանի գրասենյակը օրենսդրությամբ դիտարկվում է անվճար իրավաբանական օգնության ապահովման հիմնական կառուցակարգը:

Մյուս կողմից, սակայն, ակնհայտ է, որ բյուջետային միջոցների սահմանափակվածության պայմաններում կարող են առաջանալ անվճար իրավաբանական օգնության տրամադրման դժվարություններ, որոնց հաղթահարմանն էլ ուղղված է իրավաբանական կլինիկաների գործունեությունը: Ընդ որում, ի տարբերություն հանրային պաշտպանի գրասենյակի, իրավաբանական կլինիկաների ստեղծումը և գործունեությունը այն հիմնադրող բարձրագույն ուսումնական հաստատության հայեցողության տիրույթում է, և, ըստ այդմ, դրանց գործունեության համար միջոցների հատկացման բեռը դրված չէ պետության վրա:

Նշյալ հանգամանքը զգալի կարևորություն է տալիս իրավաբանական կլինիկաների գոյությանը՝ դրանք իրապես դարձնելով անվճար իրավաբանական օգնության լրացուցիչ կառուցակարգ:

Իրավաբանական կլինիկաների գործունեության արդյունավետությունը պայմանավորող նախադրյալները և դրանց իրավական ամրագրման անհրաժեշտությունը

Ընդհանուր առմամբ, արդյունավետությունը իր սկզբնական իմաստով վերաբերում է ցանկալի արդյունքի հասնելու ունակությանը: Այն արտացոլում է ոչ միայն այն, թե ինչքանով է կազմակերպությունը հասնում իր նպատակներին, այլև կազմակերպության գոյության պատճառը, այն արդյունքները, որոնց այն փորձում է հասնել, և դրա հատուկ նշանակությունը[19]:

Իրավաբանական կլինիկաների գործունեության արդյունավետությունը, նախ և առաջ, ենթադրում է վերջինիս գործառութային, կառուցակարգային, ընթացակարգային և նյութական համապատասխան նախադրյալների հստակություն և պատշաճ ընթացակարգերի առկայություն:

Ինչպես նշվեց, իրավաբանական կլինիկաները իրականացնում են երկու հիմնական գործառույթ՝ կրթական և սոցիալական, որոնցից վերջինը ուղղակիորեն արտացոլված է Օրենքում, իսկ կրթական գործառույթը ունի անուղղակի ամրագրում և բխում է նույն Օրենքում առկա՝ «Հայաստանի Հանրապե-

[19] Տե՛ս **Lin L. ,** Research on the specificity, orderliness, and effectiveness of legal clinic education, Higher education and practice, 2024, Vol. 1, No. 5, էջ 17:

տությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների … կողմից կազմակերպվող իրավաբանական կլինիկաների ուսանողների (ունկնդիրների)» ձևակերպումից:

Կառուցակարգային նախադրյալը վերաբերում է իրավաբանական կլինիկայի՝ բարձրագույն ուսումնական հաստատության կառուցվածքում ունեցած բնույթին (կառուցվածքային ստորաբաժանում և այլն), այսինքն՝ ինստիտուցիոնալ կարգավիճակին, ինչպես նաև կառավարման ներքին մեխանիզմներին, ինչը ներկայումս օրենսդրորեն հստակեցված չէ:

Ընթացակարգային նախադրյալը ենթադրում է իրավաբանական կլինիկայի աշխատակարգային հարաբերությունների կարգավորվածությունը, որը, ի թիվս այլնի, ներառում է մասնագիտական վարքագծի կանոնների ամբողջությունը, որը կարգավորում է իրավաբանական կլինիկաների գործունեության ապահովման ընթացքը, այդ թվում՝ խորհրդատուի և վստահորդի միջև վստահության հետ կապված խնդիրները, համապատասխան այլ կառույցների հետ համագործակցությունը և այլն:

Այս տեսանկյունից իրավաբանական կլինիկաների համար նախատեսված չեն համապատասխան վարքագծի կանոններ, և վերջիններիս գործունեության իրականացման գործընթացը սահմանափակվում է բացառապես բարձրագույն ուսումնական հաստատությունների ներքին վարքագծային կանոններով, ինչն ակնհայտորեն բավարար չէ իրավաբանական կլինիկաների գործունեության արդյունավետությունը ապահովելու տեսանկյունից:

Հատկանշական է, որ մասնագիտական գրականության մեջ Տ. Խուդոյկինան և Օ. Կուպցովան առաջարկել են նաև այսպես կոչված «իրավաբանական կլինիկայի մասնագիտական էթիկայի օրենսգիրք», որպես տվյալ իրավաբանական անձի (կամ բուհի կառուցվածքային ստորաբաժանման) անդամներին ուղղված բարոյական պահանջների արտահայտման ձև, որը անբաժանելի հիմք է կազմում կլինիկական իրավաբանական պրակտիկայի համար[20]:

Իրավաբանական կլինիկաների արդյունավետ գործունեության խնդիրներից մեկը կարելի է համարել խորհրդատուի և վստահորդի միջև վստահության հետ կապված հարաբերությունները: Կ. Տիշկովիչը նշում է, որ կլինիկական գործունեության ընթացքում բավականին մեծ մաս են կազմում այնպիսի իրավիճակները, երբ հաճախորդը, չնայած օգնություն ստանալու անհրաժեշտությանը, հրաժարվում է, քանի որ անհրաժեշտ է ստորագրել համաձայնություն անձնական տվյալների մշակման վերաբերյալ կամ թաքցնում է գործի համար անհրաժեշտ տեղեկատվություն, հրաժարվում է ծանոթանալ գործի համար կարևոր փաստաթղթերին, ինչը մեծապես դժվարացնում է խորհրդատուի աշխատանքը: Դրանից ելնելով՝ վստահության ձևավորումը իրավաբանական

[20] Տե՛ս **Худойкина Т. В. , Купцова О. В. ,** Этический кодекс как корпоративный акт юридической клиники, Пробелы в российском законодательстве, Юридический журнал, (2015), (5), էջ 193:

օգնություն ստանալու գործընթացում շատ կարևոր և միաժամանակ երկարատև և բարդ գործընթաց է, որը պահանջում է հաշվի առնել օգնություն ստանալու համար դիմող քաղաքացիների շրջանակի առանձնահատկությունները, ինչպես նաև ուսանողների հատուկ պատրաստվածությունը, այդ թվում՝ հատուկ տեսական դասընթացի անցկացումը, որը նախորդում է պրակտիկային, և ուսուցիչների հատուկ գիտելիքների առկայությունը[21]:

Հատկանշական է, որ տեսության մեջ խոսվում է նաև այն մասին, որ իրավաբանական կլինիկաները պարտավոր են հաճախորդներին տրամադրել տվյալների գաղտնիության վերաբերյալ տեղեկատվություն այն պահին, երբ նրանցից հավաքում են անձնական տվյալներ[22]:

Վերոգրյալի լույսի ներքո հատկանշական է, որ Օրենքը, ի թիվս այլնի, նախատեսում է փաստաբանի գործունեության երաշխիքները, որոնք վերաբերում են փաստաբանի անկախությանը, փաստաբանական գործունեության միջամտության անթույլատրելիությանը, խուզարկության և առգրավվման առնչությամբ սահմանափակումներին և այլն: Օրենքով սահմանվել է նաև փաստաբանի իրավունքը դիմելու պետական, տեղական ինքնակառավարման մարմիններին, անհատ ձեռնարկատերերին և իրավաբանական անձանց (այսուհետ՝ տնտեսավարող սուբյեկտներ)՝ իրավաբանական օգնություն ցույց տալու համար անհրաժեշտ փաստաթղթեր (տեղեկություններ) ստանալու պահանջով, փաստաբանի վարքագծի կանոնները: Մինչդեռ անվճար իրավաբական օգնություն տրամադրելու շրջանակներում գործունեություն ծավալող իրավաբանական կլինիկաների համար նման դրույթներ առկա չեն:

Ուշադրության արժանի հաջորդ հանգամանքը դատական ներկայացուցչության մասով օրենսդրական սահմանափակումն է:

Ինչպես իրավացիորեն նշում է Մ. Տրոֆիմովան, ոչ բոլոր իրավաբանական կլինիկաներն են հնարավորություն տալիս ուսանողներին իրականացնելու դատական ներկայացուցչություն, ինչը հնարավորություն չի տալիս ապագա իրավաբաններին ամբողջությամբ ձեռք բերելու քաղաքացու հիմնարար իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հմտություններ: Այս խնդրի պատճառները ակնհայտորեն միայն իրավաբանական կլինիկաների սահմանափակ հնարավորություններում չեն, այլ նաև դատավարական օրենսդրության մեջ սերտորեն սահմանված մասնագիտական մենաշնորհներում՝ դատական ներկայացուցչության վերաբերյալ[23]:

Մասնավորապես, եթե կլինիկաների ուսանողները ձեռք են բերում միայն խորհրդատվության և դատավարական փաստաթղթերի պատրաստման

---

[21] Տե՛ս **Тишкович К. С.,** Феномен доверия как фактор эффективности правовой помощи в практике юридических клиник, Прикладная юридическая психология, (2023), 1 (62), էջ 25:

[22] Տե՛ս The clinical legal education handbook, edited by **Thomas L., Johnson N.,** Institute of Advanced Legal Studies, University of London Press, 2020, էջ 194:

[23] Տե՛ս **Трофимова М. С.,** նշվ. աշխ.:

հմտություններ, ապա չի իրականացվում կլինիկական կրթության գլխավոր ուսումնական նպատակը՝ իրավաբանի համալիր գործնական մասնագիտական հմտությունների ձևավորումը: Դատավարական գործընթացներում մասնակցությունը, հանրային ելույթների հմտությունները, ապացույցների վերլուծությունը, դատական ճառերում ելույթ ունենալու կարողությունը այն ամենաարդյունավետ և բարդ համալիր գործնական հմտություններն են, որոնք պահանջում են նախնական պատրաստություն հենց կլինիկական իրավաբանական ծրագրերի իրականացման ընթացքում:

Քեմբրիջի համալսարանի պրոֆեսոր Ուիլսոնը նշում է, որ արդարադատության հասանելիության թեման ունի խորը արմատներ գրեթե բոլոր իրավական համակարգերում, իսկ այն միտքը, որ իրավաբանական կլինիկաները կարող են մեծ ներդրում ունենալ առաջընթացի գործում, համապատասխանում է զարգացող անվճար իրավաբանական օգնության մասին օրենսդրությանը[24]:

Ստացվում է, որ իրավաբանական կլինիկաների արդյունավետ գործունեության տեսանկյունից իրավաբանական օգնության տրամադրումը միջոց է, իսկ կրթությունը՝ նպատակ: Ընդ որում, հենց իրավաբանական կլինիկայի սոցիալական գործառույթն է նպաստում կրթական բաղադրիչի հզորացմանը:

Այս համատեքստում ուշագրավ է նաև միջազգային փորձը: Այսպես, Արևելյան Եվրոպայում գործող իրավաբանական կլինիկաների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեև իրավաբանական ծառայությունները կարող են տարբեր երկրներում զգալիորեն տարբերվել, իրավաբանական կլինիկաները սովորաբար տրամադրում են իրավաբանական խորհրդատվություն, դատարանում ներկայացուցչություն և հակամարտությունների լուծմանն ուղղված հաշտարարական ծառայություններ[25]:

Չիկագոյի Քենթ իրավաբանական քոլեջում գործող քրեական գործերով իրավաբանական կլինիկան հնարավորություն է տալիս ուսանողներին իրականացնելու քրեական գործերով ներկայացուցչություն: Այդ նպատակով ուսանողները, նախ և առաջ, պետք է դիմեն 711 արտոնագիր ստանալու համար, որը թույլ է տալիս նրանց ներկայացնել հաճախորդներին քրեական դատարաններում, իհարկե, դասախոս-համակարգողի հսկողության ներքո[26]:

Հունգարիայի քրեական օրենսգրքում կատարված փոփոխությունները ինչոր չափով անդրադարձան նաև իրավաբանական կլինիկաներին, մասնավորապես՝ ուսանողներին տրվեց հնարավորություն ներկայացնելու հաճախորդներին դատարանում[27]:

---

[24] Տե՛ս **Wilson R.,** The global evolution of clinical legal education: More than a method, Cambridge, Cambridge University Press, 2017, էջ 348:

[25] Տե՛ս **Winkler E. ,** Clinical legal education, A report on the concept of law clinics, 2013, էջ 12:

[26] Տե՛ս **Kemp V., Munk T., Gower S.,** Clinical legal education and experiential learning: Looking to the future, 2016, էջ 9:

[27] Տե՛ս **Kivalov S. ,** Legal clinics as an important element of human right for free legal aid, Revista de Derecho, (2019), Vol. 8, էջ 173:

Ինչ վերաբերում է ներպետական օրենսդրությանը, ապա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի[28] 52-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ, որպես կանոն, դատարանում ներկայացուցչությունն իրականացնում են փաստաբանները, այդ թվում՝ օրենքով սահմանված կարգով հավատարմագրված օտարերկրյա փաստաբանները: Նույնաբովանդակ կարգավորումներ են նախատեսված նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով[29]:

ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը[30] փաստացի սահմանափակումներ չի դնում դատարանում ներկայացուցչի վերաբերյալ, ինչը էական տարբերություն է գործող քաղաքացիական և քրեական դատավարությունների օրենսգրքերից: Մասնավորապես, վարչական դատավարության դեպքում կողմն իրավունք ունի դատարանում դատավարական գործողություններ կատարելու անձամբ կամ մեկ կամ մի քանի ներկայացուցչի միջոցով: Այլ կերպ ասած՝ վարչական դատավարությունում չի խոսվում ներկայացուցչի՝ պարտադիր փաստաբան լինելու մասին, ինչը, ի տարբերություն մյուս դատավարությունների, իրավաբանական կլինիկաներին թույլ է տալիս իրականացնել նաև դատական ներկայացուցչություն:

Իրավաբանական կլինիկաների նյութական նախադրյալը ենթադրում է պատշաճ տարածքի, տեխնիկական սարքավորումների, աշխատանքային գործընթացի ապահովման համար անհրաժեշտ նյութերի, կլինիկայի ղեկավարության և վարչական անձնակազմի պատշաճ վարձատրության և նմանատիպ այլ հարցերի լուծում, որոնք ևս չունեն որոշակի իրավական ամրագրում:

Վերոշարադրյալը թույլ է տալիս պնդելու, որ իրավաբանական կլինիկաների գործունեության արդյունավետությունը կախվածության մեջ է մի շարք նախադրյալների առկայությունից, որոնց ինստիտուցիոնալ բնույթ հաղորդելու ընդունելի ճանապարհը դրանց օրենսդրական ամրագրումն է, որը կապահովի ոլորտի զարգացումը և ինստիտուցիոնալ կայունությունը:

Եզրակացություն

Այսպիսով, կատարված հետազոտության հիման վրա կարելի է անել հետևյալ հիմնական եզրահանգումները.

1. «Իրավաբանական կլինիկա» հասկացությունը ունի երկակի բովանդակություն. մի դեպքում այն ընկալվում է որպես կրթական ծրագիր կամ իրավաբանական կրթության բաղադրիչ, մյուս դեպքում՝ որպես անվճար իրավաբանական օգնություն ապահովող հաստատություն:

---

[28] Ընդունվել է 09. 02. 2018: Ուժի մեջ է մտել 09. 04. 2018: Տե՛ս ՀՀՊՏ 2018.03.05/16(1374): Հոդ. 208:

[29] Ընդունվել է 30. 06. 2021: Ուժի մեջ է մտել 01. 07. 2022: Տե՛ս Միասնական կայք 2021.07.26-2021.08.08: Պաշտոնական հրապարակման օրը՝ 28.07.2021:

[30] Ընդունվել է 05. 12. 2013: Ուժի մեջ է մտել 07. 01. 2014: Տե՛ս ՀՀՊՏ 2013.12.28/73(1013).1: Հոդ.1186.1:

2. Իրավաբանական կլինիկաները իրականացնում են երկու հիմնական գործառույթ՝ կրթական և սոցիալական, որոնք հանդես են գալիս որպես անբաժանելի միասնություն և փոխլրացնում են միմյանց: Ընդ որում, ուսանողների կողմից անվճար իրավաբանական օգնության տրամադրումը միջոց է, իսկ կրթությունը՝ նպատակ:

3. Իրավաբանական կլինիկայի սոցիալական գործառույթը դրսևորվում է սոցիալապես անապահով խմբերին անվճար իրավաբանական օգնության տրամադրմամբ՝ հանդիսանալով անվճար իրավաբանական օգնության երաշխավորման պետության պոզիտիվ պարտականության կատարման լրացուցիչ կառուցակարգ:

4. Իրավաբանական կլինիկաների գործունեության արդյունավետությունը անհրաժեշտաբար ենթադրում է գործառութային, կառուցակարգային, ընթացակարգային և նյութական համապատասխան նախադրյալների առկայություն: Ընդ որում, քննարկվող բոլոր նախադրյալները կդառնան հռչակագրային, եթե չունենան պատշաճ իրավական ամրագրում:

5. Հրատապ է օրենսդրական մակարդակով իրավաբանական կլինիկաների գործունեությանն առնչվող այնպիսի հարցերի լուծումը, ինչպիսիք են՝ իրավաբանական կլինիկաների ինստիտուցիոնալ կարգավիճակի, մասնագիտական վարքագծի կանոնների, գործունեության երաշխիքների և անհրաժեշտ գործիքակազմի, այդ թվում՝ տեղեկատվություն ստանալու, դատական ներկայացուցչություն իրականացնելու սահմանումը:

ТИГРАН МАРКОСЯН, НАРЕ ПАРОНЯН – ***Правовые основы деятельности юридических клиник в Республике Армения.***– Юридические клиники традиционно выполняют две основные миссии — образовательную и социальную, являясь особой формой юридического образования и предоставления правовой помощи. В то же время очевидно, что эффективность деятельности юридических клиник в основном обусловлено наличием необходимых и достаточных функциональных, институциональных, процедурных и материальных предпосылок. При этом, чтобы придать этим предпосылкам институциональный характер, необходимо их надлежащее правовое закрепление.

На основе теоретических источников, отечественного законодательства, а также международного и внутригосударственного опыта в статье представлены роль и значение юридических клиник, содержание понятия «юридическая клиника», проанализированы их образовательные и социальные функции, а также рассмотрены предпосылки, определяющие эффективность деятельности юридических клиник.

Особое внимание уделено недостаточному уровню нормативного регулирования деятельности юридических клиник, в том числе на ограничения студентов, ,осуществляющих судебное представительство, отсутствию эффективных механизмов получения доказательств для оказания юридической помощи, а также отсутствию требований, обеспечивающих доверие клиентов в отношении клиники, как например, кодекс профессиональной этики клиники и т.п.

Авторы статьи представляют ряд научно-практических выводов, которые могут служить ориентирами для повышения эффективности деятельности юридических клиник и дальнейшего развития системы клинического образования.

Ключевые слова: *юридическая клиника, клиническое образование, образовательная программа, учебное заведение, бесплатная юридическая помощь, социально уязвимые группы, публичная защита, судебное представительство, дополнительный механизм, кодекс поведения.*

TIGRAN MARKOSYAN, NARE PARONYAN – *Legal Foundations of Legal Clinics' Activities in the Republic of Armenia*.– Legal clinics traditionally fulfill two main missions- educational and social- serving as a unique model of legal education and of legal aid provision. At the same time, it is evident that the effectiveness of legal clinics' activities is largely conditioned by the presence of necessary and sufficient functional, structural, procedural, and material prerequisites. Moreover, in order to grant these prerequisites an institutional character, it is essential to provide them with appropriate legal regulation.

Based on theoretical sources, Armenian legislation, and both international and domestic practices, this article presents the role and significance of legal clinics, explores the content of the concept of a "legal clinic," analyses their educational and social functions, and discusses the essential preconditions for their effective operation.

A separate subject of discussion has been the insufficient level of legislation regulating the activities of legal clinics, including limitations on students involved in legal clinics to carry out court representation, the absence of effective tools for obtaining evidence necessary for legal assistance, the lack of requirements ensuring client confidence in the clinic, such as professional conduct rules for the clinic, and others.

In the article, the authors present a number of scientific-practical conclusions that can serve as guidelines for improving the effectiveness of legal clinics' activities and further development of the clinical education system.

Key words: *legal clinic, clinical legal education, educational program, educational institution, free legal aid, socially vulnerable groups, public defense, court representation, supplementary mechanism, code of conduct.*

References

Hayastani Hanrapetutyan Sahmanadrutyun, yndunvel e 05.07.1995 t. Amboghjutyamb verasharadrvel e 06.12.2015 t. Tes HHPT 2015.12.21/ Hatuk togharkum Hod. 1118:

Mardu iravunqneri yev himnarar azatutyunneri pashtpanutyan masin yevropakan konventsia, yndunvel e 04.11.1950 t. Tes HHPT 2002.06.05/17(192) Hod. 367:

HH qaghaqaciakan datavarutyan orensgirq, yndunvel e 09.02.2018 t. Uzhi mej e mtel 09.04.2018 t. Tes HHPT 2018.03.05/16(1374) Hod. 208:

HH qreakan datavarutyan orensgirq, yndunvel e 30.06.2021 t'. Uzhi mej e mtel 01.07.2022 t. Tes Miasnakan kayq 2021.07.26–2021.08.08, Pashtonakan hraparakman ory 28.07.2021:

HH varchakan datavarutyan orensgirq, yndunvel e 05.12.2013 t. Uzhi mej e mtel 07.01.2014 t. Tes HHPT 2013.12.28/73(1013).1 Hod. 1186.1:

«Pastabanutyan masin» orenk, yndunvel e 14.12.2004 t. Uzhi mej e mtel 22.01.2005 t. Tes HHPT 2005.01.21/6(378) Hod. 102:

««Pastabanutyan masin» orenkum popokhutyunner yev lracumner katarelu masin» orenk', yndunvel e 05.10.2022 t. Uzhi mej e mtel 06.11.2022 t. Tes Miasnakan kayq 2022.10.17–2022.10.30:

Sahmanadrakan datarani 2008 t. hoktemberi 8-i tiv SDO-765 voroshum:

Sahmanadrakan datarani 2025 tvakani aprili 16-i tiv SDO-1776 voroshum:

Akashkina T. G., Byshov D. V., Funktsii yuridicheskoy kliniki, Ogaryov-Online, (2015), 5 (46).

Fedyunina T. V., Pravovaya klinika kak obrazovatelnyy proekt v podgotovke budushchikh yuristov, Vestnik Yuzhno-Uralskogo gosudarstvennogo gumanitarno-pedagogicheskogo universiteta, (2014), (4).

Franz H., Clinical legal education as an instrument to address access to justice: A critical analysis of the clinical movement in Germany, International Journal of Clinical Legal Education, Practice Report, 2023.

Kemp V., Munk T., Gower S., Clinical legal education and experiential learning: Looking to the future, 2016.

Khudoykina T. V., Kuptsova O. V., Eticheskiy kodeks kak korporativniy akt yuridicheskoy kliniki, Problemi v rossiyskom zakonodatelstve, Yuridicheskiy zhurnal, (2015), (5).

Kivalov S., Legal clinics as an important element of human right for free legal aid, Revista de Derecho, (2019), Vol. 8.

Klimkina Yu. A., Deyatelnost yuridicheskikh klinik v otnoshenii nesovershennoletnikh lits, Nauka i obrazovanie segodnya, (2016), 7 (8).

Lin L., Research on the specificity, orderliness, and effectiveness of legal clinic education, Higher Education and Practice, 2024, Vol. 1, No. 5.

Ozernikova T. G., Smirnova I. G., Teterina L. A., Osobennosti razvitiya yuridicheskikh klinik v sovremennykh usloviyakh i ikh mesto v obrazovatelnom klastere, Izvestiya Baykalskogo gosudarstvennogo universiteta, (2015), 25 (2).

Panga E. V., Konokin D. V., Organizatsiya raboty studentov v yuridicheskoy klinike i ikh motivatsiya: Osobennosti okazaniya besplatnoy pravovoy pomoshchi naseleniyu, Pravo i upravlenie, (2023), (9).

Sitnikova K. O., Kotryakhov N. V., Obuchayushchaya funktsiya yuridicheskoy kliniki, Kontsept, (2017), (12).

Suellyn S., The role of clinical programs in legal education, Mich. B. J. 77, (1998), no. 7.

The Clinical Legal Education Handbook, edited by Thomas L., Johnson N., Institute of Advanced Legal Studies, University of London Press, 2020.

Tishkovich K. S., Fenomen doveriya kak faktor effektivnosti pravovoy pomoshchi v praktike yuridicheskikh klinik, Prikladnaya yuridicheskaya psikhologiya, (2023), 1 (62).

Tishkovich K. S., Innovatsionnyy podkhod k yuridicheskomu klinicheskomu obucheniyu: Problemy i perspektivy, Vestnik Omskogo universiteta, Seriya «Pravo», (2021), 18 (1).

Trofimova M. S., Mekhanizmy vzaimodeystviya yuridicheskikh klinik i gosudarstvennykh organov: pravovye, organizatsionnye i eticheskie problemy, Pravovoe gosudarstvo: Teoriya i praktika, (2021), 3 (65).

Wilson R., The global evolution of clinical legal education: More than a method, Cambridge, Cambridge University Press, 2017.

Winkler E., Clinical legal education: A report on the concept of law clinics, 2013.

Wizner S., The Law School Clinic: Legal Education in the interests of justice, 70 Fordham L. Rev., (2002).

Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն
2026, Vol. 2: SPECIAL ISSUE, հունվար, 37-46
https://doi.org/10.46991/BYSU.C/2026.SP2.037

«ԻՐԱՎՈՒՆՔ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳԻՐԸ ՈՐՊԵՍ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

ՔՆԱՐԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ[*], **ՍԱԹԵՆԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ**[**]
Երևանի պետական համալսարան

Սույն հոդվածում դիտարկվում են «Իրավունք բոլորի համար» ծրագրի նշանակությունն ու արժեքը որպես այլընտրանքային իրավաբանական կրթության ձևաչափ և հասարակության իրավագիտակցության բարձրացման արդյունավետ միջոց: Հեղինակները վերլուծում են այլընտրանքային կրթության առաջացման պատմական ուղին, դրա առանձնահատկություններն ու կիրառման մեթոդները՝ ընդգծելով դրանց համադրումը իրավաբանական կլինիկական կրթության մոդելի հետ:
Հոդվածում խորությամբ լուսաբանվում է ծրագրի երկկողմ ազդեցությունը. մի կողմից՝ այն ուսանողներին ապահովում է գործնական հմտությունների ձևավորման հարթակ, մյուս կողմից՝ նպաստում է իրավական իրազեկվածության բարձրացմանը այն սոցիալական խմբերում, որոնք չունեն մասնագիտական իրավաբանական կրթություն:
Տեսական հիմնավորումներին զուգահեռ՝ ներկայացված են նաև գործնական դիտարկումներ, որոնց հիման վրա հեղինակները եզրակացնում են, որ «Իրավունք բոլորի համար» ծրագիրը հանդես է գալիս ոչ միայն որպես նորարարական կրթական

[*] **Քնարիկ Վարդանյան –** իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի դոցենտ, ԵՊՀ իրավաբանական կլինիկայի տնօրեն
Кнарик Варданян – кандидат юридических наук, доцент кафедры европейского и международного права ЕГУ, директор юридической клиники ЕГУ
Knarik Vardanyan – Candidate of Legal Sciences, Associate Professor at the Chair of European and International Law, Head of the YSU Legal clinic
Էլ. փոստ՝ knarikvardanyan@ysu.am. ORCID ID: https://orcid.org/0000-0002-2632-3778
[**] **Սաթենիկ Մկրտչյան –** ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ, ԵՊՀ իրավաբանական կլինիկայի մասնագետ
Сатеник Мкртчян – Соискатель кафедры уголовного права ЕГУ, специалист юридической клиники ЕГУ
Satenik Mkrtchyan – PhD student at the Chair of Criminal Law of YSU, Specialist of the YSU Legal Clinic
Էլ. փոստ՝ satenmkrtchyan@ysu.am. ORCID ID: https://orcid.org/0009-0008-5690-2974

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 11.07.2025
Գրախոսվել է՝ 07.01.2026
Հաստատվել է՝ 13.01.2026
© The Author(s) 2026

գործիք, այլև որպես հասարակական ներգրավվածություն խթանող և իրավագիտակցություն ձևավորող արդյունավետ հարթակ, որը միտված է իրավական պետության ամրապնդմանը և քաղաքացիական պատասխանատվության խորացմանը:

Բանալի բառեր – *իրավագիտակցություն, այլընտրանքային կրթություն, իրավաբանական կլինիկա, «Իրավունք բոլորի համար», իրավական կրթություն, կրթական մեթոդաբանություն, իրավական իրազեկում, կրթության համակարգ, սոցիալական ներգրավվածություն, իրավունքի մատչելիություն, հանրային իրազեկում*

Ներածություն

Հասարակության բնականոն զարգացման կարևորագույն շարժիչներից մեկը կրթությունն է: Հարյուրամյակներ շարունակ աշխարհում կրթական գործընթացը կազմակերպվել է հստակ սահմանված նորմատիվներով, սահմանափակ և կոնկրետ ձևաչափերով և, որ ամենախնդրահարույցն է, հասարակության ընտրյալ անդամների ընդգրկմամբ (ազնվականներ, տղամարդիկ և այլք): Հանրության լայն շերտերի կրթական մակարդակի զարգացման դրսևորումներ սկսեցին երևան գալ քսաներորդ դարի երկրորդ կեսին՝ նորմավորված կրթական ծրագրերից անցնելով այլընտրանքային կրթական ծրագրերի:

Արդի աշխարհում այլընտրանքային կրթությունը ուղղված է հասարակության լայն և բազմազան խմբերի, այդ թվում ՝ երիտասարդների, տարեցների, կանանց և այլ թիրախային խմբերի կրթական մակարդակի բարձրացմանը: Ընդ որում՝ այլընտրանքային կրթական ծրագրերը ներառում են դասավանդման թե՛ ավանդական, թե՛ նորարարական մեթոդներ: Այս ամենին զուգահեռ՝ ժամանակակից հասարակության մարտահրավերներից է շարունակում մնալ հանրության տարբեր, հատկապես թիրախային խմբերի իրավագիտակցության բարձրացումը: Սոցիալական տարբեր խմբերի ցածր իրավագիտակցությունը կարող է խնդրահարույց լինել ցանկացած երկրում՝ անկախ սոցիալական կամ տնտեսական պայմաններից: Առողջ և ինքնաբավ հասարակության գրավականներից մեկը բարձր իրավագիտակցությունն է, որը ենթադրում է բնական իրավունքի, մշտական բնակության վայր հանդիսացող պետության իրավական և արդարադատության համակարգերի, առօրյա կյանքում անհրաժեշտ օրենսդրական կարգավորումների վերաբերյալ նվազագույն տեղեկատվության տիրապետում և օգտագործում: «Իրավունք բոլորի համար» ծրագիրը հասարակության զարգացման վերը շարադրված երկու բաղադրիչների (այլընտրանքային կրթություն և իրավագիտակցություն) մեկտեղումը ապահովող գործիքներից մեկն է քսանմեկերորդ դարում:

Սույն հոդվածում քննարկվում են այլընտրանքային կրթության և «Իրավունք բոլորի համար» կլինիկական ծրագրի պատմական զարգացման, նշանակության ու գործածության սկզբունքներին և վերջինների միջոցով հասարակության իրավագիտակցության բարձրացմանն առնչվող հարցեր:

Այլընտրանքային կրթության և «Իրավունք բոլորի համար» ծրագրի զարգացման պատմությունը, էությունը, նպատակներն ու ազդեցությունը

Համաշխարհային կրթական ճգնաժամի մասին բուռն քննարկումները թափ հավաքեցին քսաներորդ դարակեսին: Համարվում է՝ թեմայի վերաբերյալ որոշիչ քննարկում տեղի ունեցավ 1967 թվականին Ամերիկայի Միացյալ Նահանգների Ուիլիամսբուրգ քաղաքում, որտեղ կայացած միջազգային կոնֆերանսի ընթացքում մի շարք գաղափարներ հնչեցին կրթական ճգնաժամի, դրա պատճառների, ինչպես նաև կանխարգելման եղանակների վերաբերյալ: Հենց այդ ժամանակ ձևավորվեց ելակետային կարծիք, որ ֆորմալ և նորմավորված կրթության համակարգերը շատ «դանդաղ են», դժվարությամբ են հարմարվում աշխարհի փոփոխություններին և հասարակությանը համընթաց չեն զարգանում: Այստեղից էլ ծնվեց այլընտրանքային կամ ոչ ֆորմալ կրթության գաղափարը[1]:

Այսպիսով, այլընտրանքային կամ ոչ ֆորմալ կրթությունը կարելի է բնորոշել հետևյալ ընդհանրական հասկացությամբ. *կրթական պահանջմունքների բավարարմանը միտված ցանկացած կազմակերպված գործունեություն, որը դուրս է ավանդական կրթական համակարգերի ստանդարտներից, կարող է իրագործվել և՛ առանձին ծրագրերի տեսքով, և՛ որպես որոշակի կայուն կրթական համակարգի բաղադրիչ, ուղղված է հասարակության տարբեր խմբերի կրթական մակարդակի համաչափ զարգացմանը:*

Կրթական պահանջմունքները, իհարկե, բազմաշերտ են, և դրանց մի մասն են կազմում իրավունքի, օրենսդրության, արդարադատության համակարգի և իրավական այլ ընդգրկուն ինստիտուտների վերաբերյալ գիտելիքներ ձեռք բերելու կարիքները:

Վերոնշյալ կարիքների բավարարման բազմաթիվ մեթոդներ և ձևաչափեր կարելի է թվարկել, բայց հատկապես ուշագրավ է հայերեն թարգմանությամբ, այսպես կոչված, «Իրավունք բոլորի համար» ծրագիրը: Այս ծրագրի իրականացման գաղափարը ծնունդ է առել Ջորջթաունի համալսարանում: Համալսարանի Իրավաբանական կենտրոնի (ֆակուլտետի) մի քանի ուսանողներ 1972 թվականին փորձարարական կրթական ծրագիր են մշակում, որն առաջին անգամ ներդրվում է Կոլումբիայի ավագ դպրոցի աշակերտներին իրավունքի և իրավական համակարգի վերաբերյալ գիտելիքներ փոխանցելու նպատակով: Դասընթացը այնքան պրակտիկ և մատչելի է լինում, որ աշակերտներն այն անվանում են «Street Law»՝ «Փողոցային իրավունք»[2]: Հետագայում «Street Law» ծրագիրը, դուրս գալով ԱՄՆ սահմաններից, տարածվում է

---

[1] Տե՛ս **Coombs P.** (1968) The World Educational Crisis, New York, Oxford University Press: Fordham, P.E. (1993) "Informal, non-formal and formal education programmes" in YMCA George Williams College ICE301 Lifelong Learning Unit 2, London: YMCA George Williams College:

[2] https://streetlaw.org/who-we-are/about/history/:

աշխարհում և սկսում է լայնորեն կիրառվել հատկապես իրավաբանական կլինիկաների կողմից: Ծրագրի հիմնական հայեցակարգը դրսևորվում է իրավագիտություն ուսումնասիրող ուսանողների կողմից ավագ դպրոցների աշակերտների և/կամ համայնքային այլ թիրախային խմբերի համար իրավական տարատեսակ թեմաներով դասընթացներ և իրենց իրավունքների, պետական ու իրավական կարգի, մարդու իրավունքների և այլնի վերաբերյալ իրազեկումներ կազմակերպելով: Այսպիսով, «Street law» ծրագրերը ուղղված են իրավունքի հետ կապված կրթության իրականացմանը (Law Related Education (LRE))[3]: LRE-ն տերմին է, որով նկարագրվում է ոչ իրավաբան ուսանողների իրավական կրթությունը[4]: Պահպանելով ծրագրի էությունը՝ իրականացման մոդելները իրավագիտություն դասավանդող տարբեր կառույցներում կարող են տարբեր լինել: «Street law» ծրագիրը կարող է իրականացվել կամավորության հիմունքներով և ղեկավարվել ամբողջությամբ այն իրականացնող ուսանողների կողմից, ովքեր պարբերաբար անցկացնում են իրավաբանական սեմինարներ տարբեր լսարանների համար[5]: Մեկ այլ մոդելի դեպքում ծրագրի իրականացման աշխատանքներին ներգրավված ուսանողներին շնորհվում են ակադեմիական կրեդիտներ[6]: Որոշ կլինիկաների դեպքում ծրագիրը գտնվում է իրավագիտության ֆակուլտետի դասախոսի մասնակի կամ ամբողջական վերահսկողության ներքո[7]:

Ծրագրի բառացի թարգմանությունը գործածելու փոխարեն դրա էությունը լավագույնս ընդգծելու համար տարբեր երկրներում այն ստացել է տարբեր անվանումներ՝ հաշվի առնելով տվյալ երկրի լեզվամտածողության առանձնահատկությունները (հայերենում՝ «Իրավունք բոլորի համար», ռուսերենում՝ «Право на каждый день», և այլն):

Առանձնահատուկ ուշադրություն ենք ուզում հրավիրել նմանատիպ ծրագիր իրականացնելու գաղափարի առաջացման թվագրությանը: Ակնհայտ է, որ «Իրավունք բոլորի համար» ծրագրի ձևաչափով իրավական կրթությունը հասանելի դարձնելը կրթության ճգնաժամից ազատվելու և այլընտրանքային կրթական ծրագրերի զարգացման զարթոնքի դրսևորումներից մեկն է:

Ավելի լավ պատկերացնելու համար քննարկենք այլընտրանքային կրթական ծրագրերի իրականացման ընթացքում կիրառվող առանձնահատուկ գործիքները և/կամ մեթոդները:

---

[3] Տե՛ս Georgetown University Law Center. Clinical Graduate Fellowship Opportunities In Teaching And Advocacy (1996):

[4] Տե՛ս **Mark C. Alexander,** Law-Related Education: Hope for Today's Students, 20 OHIO N.U.L. Rev. 57, 57 (1993):

[5] Տե՛ս Directory of Registered Law School-Based Street Law Programs, StreEt L., https://streetlaw.org/en/Page/858/Directory_of_Registered_Law_SchoolBased_Street_%20Law_Programs

[6] Տե՛ս Steps for Starting a Program, Street L., http://www.streetlaw.org/en/ ProgramStart

[7] Տե՛ս Starting a Street Law Program, Street L., http://www.streetlaw.org/en/Page/22/Starting_a_Street_Law_Program

Այսպես, այլընտրանքային և ավանդական, ստանդարտացված կրթական ծրագրերն ունեն հետևյալ հիմնական տարբերակիչ հատկանիշները.

1. ինտերակտիվություն. ունկնդիրների առավելագույն ներգրավվածություն դասապրոցեսին՝ քննարկումների, բանավեճերի, խաղերի միջոցով,
2. կենտրոնացում փաստական կոնկրետ խնդրի և գործնականում դրա հնարավոր լուծումների վրա,
3. թիմային աշխատանքները, որոնք ավանդական կրթության ծրագրերի շրջանակներում հաճախ կազմակերպելը սովորաբար հնարավոր չի լինում,
4. տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը դասապրոցեսը կազմակերպելու համար, ինչպես նաև դրանցից օգտվելու հմտությունների փոխանցումը[8]:

Վերոնշյալ թվարկմամբ փորձել ենք հնարավորության սահմաններում համընդգրկուն ներկայացնել այն կրթական հեղափոխությունը, որի սկիզբը դրեց այլընտրանքային կրթությունը: Անշուշտ, այս բոլոր մեթոդները գործածվում են նաև «Իրավունք բոլորի համար» ծրագրի շրջանակներում շահառուների համար դասընթացներ վարելիս, որի ազդեցության վերաբերյալ ավելի մանրամասն կխոսվի ստորև, սակայն ներկայացվող հարցի համատեքստում կարևոր ենք համարում քննարկել այս ծրագրի ևս մեկ առանձնահատկություն:

«Իրավունք բոլորի համար» ծրագիրը յուրահատուկ է նաև այն բանի շնորհիվ, որ այլընտրանքային կրթական ծրագիր է համարվում ոչ միայն ծրագրի շահառուների, այլև ծրագիրն իրականացնողների համար: Արդեն խոսեցինք այն մասին, որ այս ծրագիրը կիրառվում է հիմնականում իրավաբանական կլինիկաների կողմից, իսկ կլինիկաները բարձրագույն իրավաբանական կրթություն տվող կառույցների ներսում գործող ստորաբաժանումներ են, որոնց գործունեությունն ունի երկու հիմնական բաղադրիչ՝ կրթական և սոցիալական, և սրանցից առաջինը հավաստում է, որ ծրագրի իրականացման շրջանակներում ապագա իրավաբանները գտնվում են ուսումնառության պրոցեսում: Սույն հոդվածի մեջ կատարված ուսումնասիրությունների արդյունքում առանձնացրել ենք այն նույնանման նպատակները, որոնք հետապնդում են իրավաբանական կլինիկաները «Իրավունք բոլորի համար» ծրագրի՝ որպես այլընտրանքային կրթական մեթոդի գործածմամբ.

- պատրաստել ելույթներ,
- հանրության առաջ ելույթ ունենալ,
- բարելավել բանավոր խոսքը,
- պարզ և մատչելի ներկայացնել իրավական կարգավորումները ունկնդիրներին,
- խորացնել գիտելիքները իրավունքի տարբեր ճյուղային ոլորտներում,
- փնտրել, հավաքել, ֆիլտրել անհրաժեշտ ինֆորմացիան,

---

[8] Տե՛ս UNESCO-Non-Formal Education: A Conceptual Exploration, OECD-The Definition and Selection of Competencies (DeSeCo), https://www.hmhco.com/

- վեր հանել ոլորտային խնդիրներ և գտնել լուծման հնարավոր ուղիներ,
- գրագետ փոխանցել ստացած գիտելիքները,
- լինել կրեատիվ:

Վերը թվարկված բոլոր այս հմտությունները, ըստ էության, միտված են մրցունակ իրավաբաններ կրթելուն:

Ինչպես նշվեց, իհարկե, «Իրավունք բոլորի համար» ծրագիրը այլընտրանքային կրթության տեսակ է նաև ծրագրի շահառուների համար:

Այսպես, փորձենք հասկանալ, թե ինչպիսի ազդեցություն է ունենում այն ծրագրի ոչ իրավաբան ունկնդիրների հատկապես իրավական գիտակցության զարգացման հարցում: Անհատի կամ հասարակության իրավագիտակցության ձևավորման վրա ազդող մի շարք գործոններ կան, որոնք կարելի է բաժանել մի քանի հիմնական խմբերի՝ հոգեբանական, սոցիալական, իրավական, կրթական և մշակութային:

Այս գործոնների ներքո կարող ենք հասկանալ դաստիարակությունը ընտանիքում և ընտանիքից դուրս, ընտանիքում սերմանվող արժեքները և վերաբերմունքը այլոց իրավունքների և իրավական համակարգի նկատմամբ, կրթությունը դպրոցներում, բուհերում, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում և այլն, ինչպես նաև՝ այլընտրանքային կրթական ծրագրերի միջոցով իրավական գործող կարգավորումների վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը, իրավաբանական օգնության մատչելիությունը, սոցիալական ցանցերի ազդեցությունը, ազգային ավանդույթները արժեհամակարգը, իրավունքի վերաբերյալ պատմական ընկալումները և այլն[9]:

Ինչպիսի՞ խնդիրներ է լուծում «Իրավունք բոլորի համար» ծրագիրը հասարակության համար.

1. փոխանցում է գիտելիքներ իրավական համակարգի, օրենսդրության, որոշակի սոցիալական խմբի առնչվող իրավակարգավորումների վերաբերյալ,
2. հասանելի է դարձնում իրավական նորմերի և ակտերի մեկնաբանումը՝ այդպիսով ապահովելով իրավունքի մատչելիությունը հասարակության տարբեր խմբերի համար,
3. նպաստում է հանցավորության դեմ պայքարին հատկապես անչափահասների շրջանում՝ սերմանելով դրական վերաբերմունք իրավական համակարգի նկատմամբ,
4. նպաստում է քաղաքացիների կողմից թույլ տրվող իրավախախտումների թվի նվազեցմանը՝ հատկապես հաշվի առնելով, որ շատ դեպքերում այդպիսիք տեղի են ունենում տարբեր սոցիալական խմբերի շրջանում վերաբերելի տեղեկատվության բացի կամ բացակայության հետևանքով,

---

[9] Տե՛ս Sociology of legal consciousness and hegemony: Patricia Ewick, Susan Silbey, **Малько А. В.** Теория государства и права. М., Проспект, 2025, **Վաղարշյան Ա.,** Պետության և իրավունքի տեսություն, Եր., 2011 և այլն:

5. բարձրացնում է հետաքրքրությունը իրավունքի նկատմամբ, ինչը կարող է հետագա մասնագիտական կողմնորոշման հիմք դառնալ ունկնդրի համար՝ վերջինի իրավագիտակցության մակարդակը բարձրացնելով առօրեականից մասնագիտականի:

Նշված խնդիրների իրականացումը, անշուշտ, չի կարող ունենալ ակնթարթային դրսևորում: Հասարակության իրավագիտակցության մակարդակի բարձրացումը երկարատև գործընթաց է: Ավելին՝ «Իրավունք բոլորի համար» ծրագրի շրջանակներում իրականացվող դասընթացները կարող են ազդել ոչ թե ամբողջ խմբի, այլ լսարանում գտնվող որոշակի անձանց իրավագիտակցության վրա՝ ձևավորելով վերջիններիս անհատական իրավագիտակցությունը:

Հասարակական իրավագիտակցությունը առավել լայն հասկացություն է, քան անհատական իրավագիտակցությունը: Սակայն հասարակական իրավագիտակցությունը զարգանում է առանձին անհատի իրավագիտակցության միջոցով[10]:

Հարկ է նշել, որ ծրագրի շահառուների թիվը սահմանափակված չէ որևէ սոցիալական խմբի ներկայացուցիչներով, սակայն արդի պրակտիկան, հատկապես Հայաստանում, զարգացել է այն ուղղությամբ, որ քննարկվող ծրագրի շահառուներ, որպես կանոն, դառնում են դպրոցահասակները, ինչը հասարակության իրավագիտակցության ձևավորման և զարգացման համատեքստում կարևոր նշանակություն ունի: Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի իրավաբանական կլինիկայի օրինակով կարող ենք փաստել, որ մինչբուհական ուսումնական հաստատությունները տարեցտարի ավելի են արժևորում «Իրավունք բոլորի համար» ծրագրի համատեքստում կառուցվող բուհ-դպրոց համագործակցությունը, որի առնչությամբ ստորև ներկայացված են որոշ տվյալներ:

- 2020-21 ուսումնական տարի՝ 17 այցելություն,
- 2021-22 ուսումնական տարի՝ 26 այցելություն,
- 2022-23 ուսումնական տարի՝ 30 այցելություն,
- 2023-24 ուսումնական տարի՝ 20 այցելություն,
- 2024-25 ուսումնական տարի՝ 32 այցելություն:

Իրավաբանական կլինիկայի ուսանողները ներկայացնում են իրավական թեմաներով դասախոսություններ և՛ մայրաքաղաքի, և՛ ՀՀ մարզերի դպրոցներում: Առանձին դեպքերում դասախոսությունները ներկայացվում են իրավագիտության ֆակուլտետում կազմակերպվող իրազեկման այցերի ընթացքում: Այսպիսով, ԵՊՀ իրավաբանական կլինիկան միջին հաշվով իրականացնում է

[10] Տե՛ս **Վաղարշյան Ա.,** Պետության և իրավունքի տեսություն, էջեր 230-231:

տարեկան մոտ 25 այցելություն «Իրավունք բոլորի համար» ծրագրի շրջանակներում: Հարկ է նշել, որ մեկ այցելության ընթացքում կարող են իրականացվել մեկից ավելի իրավական թեմաներով դասընթացներ[11]:

Եզրակացություն

Ժամանակակից պետության կայունության և զարգացման անկյունաքարերից է իրավագիտակցությամբ հագեցած, իրավական արժեքներն ընկալող և դրանք գործնականում կիրառելու ունակ հասարակության ձևավորումը: Իրավագիտակցության մակարդակի բարձրացումը, մի կողմից, քաղաքացուն հնարավորություն է տալիս արդյունավետ իրացնելու իր իրավունքներն ու ազատությունները, իսկ մյուս կողմից՝ ամրապնդում է իրավական պետության հիմքերը՝ խթանելով իրավունքի գերակայության իրական կիրարկումը:

Սույն աշխատանքի շրջանակներում կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ «Իրավունք բոլորի համար» ծրագիրը, հանդես գալով որպես այլընտրանքային կրթության յուրահատուկ տեսակ, հաջողությամբ լուծում է միաժամանակ կրթական և հասարակական մի շարք խնդիրներ: Այդ ծրագիրը ոչ միայն հնարավորություն է ընձեռում իրավաբանական կրթություն ստացող երիտասարդներին՝ խորացնելու իրենց տեսական գիտելիքները և ձևավորելու գործնական հմտություններ, այլև նպաստում է հասարակության տարբեր խմբերի, մասնավորապես՝ դպրոցահասակ երեխաների իրավական իրազեկվածության բարձրացմանը:

Իրավաբանական կլինիկաների միջոցով իրականացվող դասընթացները՝ հիմնված ինտերակտիվ մեթոդաբանության, հասկանալի լեզվով մատուցման և թեմատիկ մոտեցման վրա, դրական ազդեցություն են ունենում ունկնդիրների իրավական մտածողության և իրավունքի նկատմամբ գիտակցված վերաբերմունքի ձևավորման վրա: Կարևոր է ընդգծել, որ ծրագիրն ընդգրկում է ինչպես իրավունքի բովանդակային բանախոսություններ, այնպես էլ իրավական արժեքների՝ արդարության, հավասարության, իրավունքի առջև պատասխանատվության կարևորության ընկալում:

Միաժամանակ, պետք է արձանագրել, որ հասարակության իրավագիտակցության բարձրացման գործընթացը շարունակական և փուլային բնույթ ունի: Այդ գործընթացում «Իրավունք բոլորի համար» ծրագրի դերն անուրանալի է, քանի որ այն կարող է դառնալ երկարաժամկետ և կայուն ներգործող միջոց իրավունքի հանրահռչակման և իրավունքի մատչելիության ապահովման տեսանկյունից:

Այսպիսով, «Իրավունք բոլորի համար» ծրագիրը պետք է դիտարկել ոչ միայն որպես իրավական կրթության այլընտրանքային մոդել, այլև որպես հա-

---

[11] Տվյալները վերցված են ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի իրավաբանական կլինիկայի նախորդ հինգ տարիների տարեկան հաշվետվություններից:

սարակության իրավաբանական մշակույթի ձևավորման և ամրապնդման կայուն միջոց: Այդպիսի ծրագրերի լայն կիրառումը կարող է էականորեն նպաստել իրավագիտակցության բարձր մակարդակ ունեցող հասարակության ձևավորմանը, որն էլ իր հերթին ժողովրդավարական և իրավական պետության անքակտելի բաղադրիչ է:

КНАРИК ВАРДАНЯН, САТЕНИК МКРТЧЯН – ***Программа «право на каждый день» как вид альтернативного образования и средство повышения правосознания общества.***– В данной статье рассматриваются значение и ценность программы «Право для всех» как альтернативного формата юридического образования и эффективного средства повышения правосознания населения. Автор анализирует исторический путь становления альтернативного образования, его особенности и методы применения, подчеркивая их сочетание с моделью юридического клинического образования.

В статье подробно рассматривается двойное воздействие программы: с одной стороны, она предоставляет студентам площадку для развития практических навыков, а с другой – способствует повышению правосознания в социальных группах, не имеющих профессионального юридического образования.

Параллельно с теоретическими обоснованиями представлены и практические наблюдения, на основе которых автор приходит к выводу, что программа «Право для всех» выступает не только как инновационный образовательный инструмент, но и как эффективная платформа для повышения общественной активности и формирования правосознания, направленная на укрепление верховенства права и углубление гражданской ответственности.

Ключевые слова: *Правосознание, альтернативное образование, юридическая клиника, "Право на каждый день", юридическое образование, методика обучения, правосознание, система образования, социальная инклюзия, доступность права, информированность общественности*

KNARIK VARDANYAN, SATENIK MKRTCHYAN – ***The Street Law Program as a Type of Alternative Education and a Means of Raising Legal Awareness in Society.***– This article explores the Street Law program implemented by the Legal Clinic as a compelling model of alternative legal education and an effective instrument for raising public legal awareness. It delves into the origins and development of non-formal education, shedding light on its unique characteristics and the methods of its application—particularly within the framework of clinical legal education.

Special attention is given to the dual educational effect of the program: on one hand, it equips law students with hands-on, practice-oriented training, and on the other, it helps enhance legal literacy among diverse social groups that may lack access to formal legal education.

Grounded in both theoretical insights and practical experiences, the article argues that Street Law serves not merely as an innovative pedagogical tool, but also as a powerful vehicle for advancing the rule of law, nurturing civic engagement, and cultivating a legally informed society.

Key words: *Legal consciousness, non-formal education, alternative education, legal clinic, "Street Law", legal education, educational methodology, legal awareness, education system, social inclusion, access to law, public awareness.*

References

Coombs P. (1968) The World Educational Crisis, New York, Oxford University Press:
Directory of Registered Law School-Based Street Law Programs, Street L., https://streetlaw.org/en/Page/858/Directory_of_Registered_Law_SchoolBased_Street_%20Law_Programs
Fordham, P.E. (1993) "Informal, non-formal and formal education programmes" in YMCA George Williams College ICE301 Lifelong Learning Unit 2, London: YMCA George Williams College.
Georgetown University Law Center. Clinical Graduate Fellowship Opportunities in Teaching and Advocacy (1996)
https://streetlaw.org/who-we-are/about/history/:
Mark C. Alexander, Law-Related Education: Hope for Today's Students, 20 OHIO N.U.L. Rev. 57, 57 (1993)
Patricia Ewick, Susan Silbey, "Sociology of legal consciousness and hegemony"
Starting a Street Law Program, Street L., http://www.streetlaw.org/en/Page/22/Starting_a_Street_Law_Program
Steps for Starting a Program, Street L., http://www.streetlaw.org/en/ ProgramStart
UNESCO-Non-Formal Education: A Conceptual Exploration, OECD-The Definition and Selection of Competencies (DeSeCo), https://www.hmhco.com/
Vagarshyan A., Petutyan ev iravunqi tesutyun, Yer., 2011.
Малько А. В. Теория государства и права. М., Проспект, 2025.

Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն
2026, Vol. 2: SPECIAL ISSUE, հունվար, 47-55
https://doi.org/10.46991/BYSU.C/2026.SP2.047

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱՅԻ ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՐԹԱԿ

ՄԱՆԵ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ*
ՀՀ փաստաբանական ակադեմիա

Սույն հոդվածում քննարկվում են Փաստաբանական ակադեմիայի իրավաբանական կլինիկայի՝ որպես կրթական և իրավաբանական անվճար օգնության տրամադրման համատեղ հարթակ, վերջինիս հիմնական առանձնահատկությունները, ինչպես նաև նմանությունները և տարբերությունները բարձրագույն ուսումնական հաստատությունների իրավաբանական կլինիկաների համեմատությամբ:
Ներկայացված են նաև իրավաբանական կլինիկայի ձևավորման պատմությունը և զարգացումը, իրավաբան գիտնականների մոտեցումները իրավաբանական կլինիկայի դերի, նշանակության և գործառույթների մասին:
Առաջարկվում է ներդնել կլինիկա դիմած անձանց նախապես գրանցվելու և իրավական խնդիրը նախապես գրավոր ներկայացնելու մոդելը՝ թողնելով գրանցման ձևաչափի և ժամկետների սահմանումը կլինիկական գործունեություն իրականացնող կազմակերպության հայեցողությանը, որն էլ կնպաստի ավելի որակյալ իրավաբանական օգնության տրամադրմանը և ժամանակի առավել արդյունավետ կառավարմանը:

Բանալի բառեր – *իրավաբանական կլինիկա, Փաստաբանական ակադեմիա, փաստաբան, փորձաշրջան, իրավաբանական խորհրդատվություն, անվճար իրավաբանական օգնություն, կրթություն, վերապատրաստում*

* **Մանե Կարապետյան –** իրավաբանական գիտությունների թեկնածու, ՀՀ փաստաբանական ակադեմիայի գիտագործնական հարցերով պրոռեկտոր
Мане Карапетян – кандидат юридических наук, проректор по научно-практическим вопросам Академии адвокатов РА, преподаватель кафедры гражданского права ЕГУ
Mane Karapetyan – Candidate of Legal Sciences, Vice-rector of Practice and Science of the Academy of Advocates of the RA, Lecturer at the Chair of Civil Law of YSU
Էլ. փոստ՝ mane.karapetyan@advocates.am, mane.karapetyan@ysu.am
ORCID ID: https://orcid.org/0009-0009-4989-3851

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 31.07.2025
Գրախոսվել է՝ 09.01.2026
Հաստատվել է՝ 13.01.2026
© The Author(s) 2026

Ներածություն

Իրավաբանական կլինիկան ի սկզբանե ձևավորվել և հետագայում լայն տարածում է ստացել զարգացած և զարգացող մի շարք երկրներում՝ որպես հասարակության անապահով խավին անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու միջոցով իրավաբանական կրթություն ստացող անձի տեսական գիտելիքը պրակտիկ փորձի վերածելու հարթակ:

ՀՀ փաստաբանական ակադեմիայի իրավաբանական կլինիկան (այսուհետ՝ նաև Կլինիկա) արդեն երկար տարիներ է, ինչ շաբաթը մեկ օր անվճար իրավաբանական օգնություն է տրամադրում իրեն դիմած անձանց և, ի տարբերություն բարձրագույն ուսումնական հաստատությունների իրավաբանական կլինիկաների, որտեղ ղեկավարի հսկողությամբ ուսանողներն են տրամադրում իրավաբանական օգնություն, այստեղ փաստաբան ղեկավարի հսկողությամբ անվճար իրավաբանական օգնություն են տրամադրում բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող անձինք:

Այս հարթակը խիստ կարևոր է ինչպես քաղաքացիներին իրավաբանական օգնություն ցուցաբերելու, այնպես էլ ունկնդիրների կողմից ապագա փաստաբան դառնալու համար անհրաժեշտ հմտություններ ձեռք բերելու տեսանկյունից: Իրավաբանական կլինիկան, որպես ուսուցման մեթոդ, հնարավորություն է տալիս ուսանողներին ծանոթանալու իրավակիրառ պրակտիկայի խնդիրներին և գտնելու լուծումներ՝ արթնացնելով իրավունքի առավել հետաքրքիր և գործնական կողմը[1]:

Հետազոտության հիմնական ուղղությունները

Իրավաբանական կլինիկան, որպես ուսուցման մոդելի պիլոտային ծրագիր, առաջին անգամ փորձարկվել է 1870 թ. ԱՄՆ-ում Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Լանգդելի կողմից[2]: Ավելի ուշ՝ 1900 թ., պրոֆեսոր Ջորջ Ֆրոմգոլդն առաջին անգամ օգտագործել է «իրավաբանական կլինիկա» տերմինը գերմանական «Ֆեդերալ իրավունք» թերթում տպագրած «Իրավաբանական կլինիկա» հոդվածում: Այստեղ գերմանացի պրոֆեսորն առաջարկել է բժշկական ֆակուլտետներում գործող կլինիկաների օրինակով ձևավորել կլինիկաներ նաև իրավաբանական ֆակուլտետներում, որտեղ ուսանողները ուսուցիչների ղեկավարմամբ կլուծեն ձևական կամ ժամկետն անցած, սակայն «իրական» գործեր[3]:

---

[1] Տե՛ս **Mimoso, M.J., Anjos, M.R. & Miranda, C** (2018). Legal clinics, a challenge for the teaching of law. New Trends and Issues Proceedings on Humanities and Social Sciences, ISSN 2547-8818, էջ 105:

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 104:

[3] Տե՛ս **Goncharenko, V.O.** Legal Clinic. History and definitions. Practice of Legal Clinics of Ukraine, 1, 2004:

Իրավաբանական կլինիկայի կրթական ծրագիրը մշակվել է ԱՄՆ-ում 1960 ական թվականներին, որը պատասխանն էր համալսարանական ծրագիրը իրական կյանքին մոտեցնելու հրամայականին և կոչված էր մեկ քայլ առաջ անելու ապագա իրավաբաններին իրական շուկային մոտեցնելու հարցում[4]:

1960-ականներին ավելի քան 30 իրավաբանական կլինիկա էր գործում ԱՄՆ բարձրագույն ուսումնական հաստատություններում, որտեղ ուսանողները իրենց դասախոսների և փաստաբանների ղեկավարությամբ տրամադրում էին իրավաբանական անվճար օգնություն ցածր եկամուտներ ունեցող անձանց[5]:

Առաջին իրավաբանական կլինիկաները՝ որպես կառուցվածքային ստորաբաժանում, ի հայտ եկան Ջորջ Վաշինգտոնի և Կոլումբիայի համալսարաններում[6]:

Ինչպես տեսնում ենք, իրավաբանական կլինիկայի ձևավորումն ի սկզբանե հետապնդել է կրթական նպատակ: 1900 թ. պրոֆեսոր Ջորջ Ֆրոմզոլդն առաջարկում էր փորձարկել ուսանողների գիտելիքները ժամկետանց գործերի քննությամբ, որպիսի պարագայում ակնհայտ է, որ որևէ քաղաքացի չէր կարող օգտվել իրավաբանական կլինիկային ներգրավված ուսանողների գիտելիքներից:

Իրականում իրավաբանական կլինիկան ցանկացած պարագայում կազմակերպվում է համապատասխան կրթական կազմակերպության կողմից հենց իր ուսանողների շրջանում մասնագիտական հմտություններ ձևավորելու և դրանք կատարելագործելու նպատակով, այլ խնդիր է, որ այդ նպատակի իրականացումը զուգորդվում է նաև սոցիալական գործառույթով:

Բացառություն չէ նաև Կլինիկան, որը նույնպես ձևավորվել է ՀՀ փաստաբանական ակադեմիայի ունկնդիրներին մասնագիտական փորձառություն ուսուցանելու նպատակով:

Իրավաբանական կլինիկայի գործառույթները

Ընդունված է տարանջատել իրավաբանական կլինիկայի երկու գործառույթ՝ կրթական և սոցիալական[7]:

Մենք համամիտ ենք մասնագիտական գրականության մեջ շրջանառվող այն դիտարկմանը, որ իրավաբանական կլինիկան ոչ այլ ինչ է, քան իրավական գիտության գործնական կիրառում[8]:

---

[4] Տե՛ս The Legal Clinic. The Idea, Organization, Methodology, Warsaw 2005, ISBN 83-7387-685-5, էջ 16:

[5] Տե՛ս **Polyakov, M.B.** (2010). The history of legal clinics and clinical legal education. *Russian Law Journal, 2*, էջ 6-68:

[6] Տե՛ս **Kozenko, Y.** (2009). Law clinics: learning by helping. *Law Student, 6*(5), էջ 22-23:

[7] Տե՛ս **Валериевна Г.Ю., Нариманович М.Р.,** Юридическая клиника как метод практического обучения будущих юристов. Мир науки. Педагогика и психология, 2019, №5, Том 7, ISSN 2558-6282:

[8] Տե՛ս The Legal Clinic. The Idea, Organization, Methodology, Warsaw 2005, ISBN 83-7387-685-5, էջ 17:

Այդուհանդերձ, թեև իրավաբանական կլինիկաների հիմնական նպատակը ուսանողներին փորձառություն ուսուցանելն է, սակայն կլինիկաները համատեղում են կրթական և իրավաբանական օգնության տրամադրման սոցիալական գործառույթները:

Ս. Կիվալովի կարծիքով՝ իրավաբանական կլինիկան ունի սոցիալական շատ գործառույթներ, որոնցից հիմնականը փոքր եկամուտ ունեցող քաղաքացիներին անվճար իրավաբանական օգնություն տրամադրելն է և դրան զուգահեռ՝ ուսանողների գործնական հմտությունները զարգացնելը, որի կարիքը նրանք կունենան ավարտելուց հետո[9]:

Կլինիկան մի կողմից խիստ արժեքավոր գիտելիքներ է փոխանցում ապագա փաստաբանին ժամանակը ճիշտ կառավարելու, վստահորդների հետ ճիշտ հարաբերություններ կառուցելու և իրավական խնդիրներին հնարավորինս արդյունավետ լուծումներ գտնելու տեսանկյունից, իսկ մյուս կողմից այն իրականացնում է հսկայական սոցիալական գործառույթ՝ հասարակության անապահով խավին տրամադրելով իրավաբանական անվճար օգնություն:

Հատկանշական է, որ, անկախ Կլինիկայի ձևավորման նպատակից, վերջինիս սոցիալական գործառույթը ամենևին չի զիջում կրթականին:

Կլինիկայում ներգրավված ունկնդիրները և նրանց ղեկավար փաստաբանը անհատական մոտեցում են ցուցաբերում Կլինիկա դիմած յուրաքանչյուր քաղաքացու նկատմամբ և հանգամանալից պատասխանում նրան հուզող բոլոր հարցերին:

Այս առումով առաջանում է մեծ խնդիր Կլինիկա դիմած անձանց հոսքի կառավարման տեսանկյունից, քանի որ մուտքն ազատ է բոլոր քաղաքացիների համար, ինչը նշանակում է, որ հնարավոր է՝ մեկ օր Կլինիկա այցելի մոտ 100 քաղաքացի, մեկ այլ օր՝ 150, և այլն, ինչը նախապես կանխատեսելի չէ:

Բացի այդ, հնարավոր չէ նաև նախապես տեղեկանալ, թե ինչ խնդիրներով են քաղաքացիները դիմելու Կլինիկա, ուստի և մոտավոր հաշվարկել այն ժամանակը, որը ծախսվելու է համապատասխան քաղաքացուն իրավաբանական օգնություն տրամադրելու համար:

Այս համատեքստում, մեր կարծիքով, Կլինիկայի կազմակերպման արդյունավետության տեսանկյունից առավել նպատակահարմար կլինի իրավաբանական օգնություն տրամադրել նախապես գրանցված քաղաքացիներին և այն ժամին, երբ քաղաքացին գրանցվել է:

Իհարկե, այս մոդելին անցումը նախնական փուլում կարող է մեծ անհարմարություններ պատճառել Կլինիկայի շահառուներին՝ հաշվի առնելով նրանց հիմնական տարիքային շեմը և սոցիալական դրությունը, սակայն երկարաժամկետ հաշվարկով, կարծում ենք, որ այս մոդելի կիրառումը էականապես կբարձրացնի Կլինիկայի աշխատանքների արդյունավետությունը:

---

[9] Տե՛ս **Serhii Kivalov.** Legal Clinics as an important element of human right for free legal aid. 2019, ISSN: 1370-7794, էջ 171:

Իրավաբանական կլինիկայի առանձնահատկությունները

Դեռևս 1901 թ. պրոֆեսոր Ա. Ի. Լյուբլինսկին առաջ է քաշել իրավաբանական կլինիկայի հետևյալ առանձնահատկությունները՝

- իրավաբանական կլինիկա կարող են դիմել իրավական օգնություն հայցող բոլոր անձինք, ընդ որում, իրավաբանական օգնությունը տրամադրվում է անհատույց հիմունքներով,
- հաշվի առնելով, որ իրավաբանական օգնությունը տրամադրվում է դեռևս չդիպլոմավորված մասնագետ ուսանողների կողմից՝ դասախոսի ղեկավարմամբ, այն չպետք է անցնի կրթական գործընթացի սահմանները,
- իրավաբանական կլինիկան բարեգործության յուրահատուկ դրսևորում է, քանի որ դրան դիմող անձանց հիմնական մասը նյութապես անապահով բնակչությունն է,
- քանի որ իրավաբանական կլինիկայի շրջանակում գործունեության համար անհրաժեշտ են տեսական խորը գիտելիքներ, կրթական այս հարթակը խելամիտ է կիրառել միայն բարձր կուրսի ուսանողների համար[10]:

Վերը նշված առանձնահատկությունների մի մասը արդիական է նաև այսօր և կիրառելի ՀՀ փաստաբանական ակադեմիայի կլինիկայի նկատմամբ, մյուս մասը՝ ոչ:

Օրինակ՝ Կլինիկան չի ստուգում իրավաբանական օգնության համար դիմած անձի սոցիալական ապահովությունը և տրամադրում է իրավաբանական օգնություն իրեն դիմած բոլոր անձանց, սակայն փորձը ցույց է տալիս, որ Կլինիկա դիմողների մեծամասնությունը հասարակության սոցիալապես անապահով խավից են:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ Կլինիկայում չի կիրառվում մասնագիտական գրականության մեջ տեղ գտած այն թեզը, որ առաջնորդվելով առաջին հերթին կրթական և ոչ թե բարեգործական նպատակներով՝ իրավաբանական կլինիկայի ղեկավարը պետք է մանրակրկիտ ուսումնասիրի կլինիկային ուղղված գործի նյութերը և ընդունի միայն այն գործերը, որոնք կլինիկայի համար մեծ կամ փոքր հետաքրքրություն են ներկայացնում, իսկ մնացած դիմողներին ուղղորդի վճարովի կամ անվճար փաստաբանական օգնությանը[11]:

Այս թեզն ինքնին մեզ համար ընդունելի է միայն այն պարագայում, երբ կրթական գործընթացն ունի գերակայություն անվճար իրավաբանական օգնության գործառույթի նկատմամբ:

---

[10] Տե՛ս **Люблинский А.И.** О юридических клиниках. Российское понимание термина «юридическая клиника» // А. И. Люблинский // Журнал Министерства Юстиции.-1901.-КН. 1.-С. 175-181// https://codolc.com/bookslib/O_juridicheskikh_klinikakh/O_yuridicheskih_klinikah_rossiyskoe_ponimanie_termina (03.04.2025)

[11] Տե՛ս նույն տեղը:

Փաստաբանական ակադեմիայի իրավաբանական կլինիկայի համար այս երկու գործառույթները համարժեք են, և որևէ մեկին չի տրվում առավելություն մյուսի նկատմամբ։

Իհարկե, «առանց սահմանների իրավաբանական օգնության տրամադրումը» շատ ավելի արդյունավետ կարող է լինել, երբ իրավաբանական օգնության համար դիմած անձը նախապես, նախքան խորհրդատվության օրը բարձրաձայնի իրեն հուզող հարցը, և իրավաբանական օգնություն տրամադրող անձն էլ ունենա ժամանակ խնդրի արդյունավետ լուծումը գտնելու համար։

Կլինիկայում սա արվում է անմիջապես տեղում, ինչն էլ առանձին, խիստ բարդ և խճճված խնդիրների դեպքում հանգեցնում է ժամանակի ոչ արդյունավետ օգտագործմանը։

Այդուհանդերձ, հաշվի առնելով Կլինիկա դիմած անձանց սոցիալական վիճակը, նման պահանջի սահմանումն այս պահին կարող է հանգեցնել անվճար իրավաբանական օգնության համար դիմած անձանց համար որոշ անհարմարությունների։

Միևնույն ժամանակ, մեր համոզմամբ, այն կլինիկաները, որոնք որդեգրել են անվճար իրավաբանական օգնության տրամադրումն առանց սահմանների մոդելը, պետք է ներդնեն նախապես հարցը որևէ գրավոր ձևով ուղարկելու վերաբերյալ շահառուներին ներկայացվող պարտադիր պահանջ և ընդունեն խորհրդատվության միայն այն անձանց, ովքեր իրենց խնդիրը նախապես են ներկայացրել։ Այս ընդհանուր կանոնից կարող է լինել բացառություն միայն խիստ անհետաձգելի դեպքերի համար, որոնց առկայության կամ բացակայության վերաբերյալ դիրքորոշում կհայտնի կլինիկայի համակարգողը։

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք առանձնացնել ՀՀ փաստաբանական ակադեմիայի կլինիկային բնորոշ հետևյալ հատկանիշները.

- ՀՀ փաստաբանական ակադեմիայի իրավաբանական կլինիկան տրամադրում է անվճար իրավաբանական օգնություն իրեն դիմած ցանկացած անձի՝ առանց ստուգելու տվյալ անձի վճարունակ կամ անվճարունակ լինելու փաստը.
- ՀՀ փաստաբանական ակադեմիայի կողմից տրամադրվում է իրավաբանական օգնություն շաբաթական մեկ անգամ պարբերականությամբ.
- ՀՀ փաստաբանական ակադեմիայի կլինիկայի շրջանակներում տրամադրվում է պրոֆեսիոնալ իրավաբանական օգնություն ըստ քաղաքացիաիրավական (վարչաիրավական) և քրեաիրավական մասնագիտացումների.
- ՀՀ փաստաբանական ակադեմիայի կլինիկայի շրջանակներում տրամադրվում է պրոֆեսիոնալ իրավաբանական օգնություն առանց ոլորտային կամ այլ սահմանափակումների։

2023 մարտ - 2024 մարտ հաշվետու ժամանակահատվածում ՀՀ փաստաբանական կլինիկան սպասարկել է 1444 այցելուի[12], իսկ 2024 մարտ - 2025

[12] https://advocates.academy/hy/file/be7a3c46-b7cb-4af6-a1c0-93c87c5cefef

մարտ հաշվետու ժամանակահատվածում՝ 1271 այցելուի[13]: Ինչպես տեսնում ենք, վիճակագրական տվյալներն արդեն իսկ փաստում են ՀՀ փաստաբանական կլինիկայի ծանրաբեռնվածությունը:

Իրավաբանական կլինիկաների տեսակները

Իրավաբան գիտնականների կողմից տարածված է իրավաբանական կլինիկաների տարանջատումը ըստ մատուցվող իրավական օգնության տեսակի: Այս առումով տարանջատվում են երեք խմբի կլինիկաներ, որոնք՝

1. տրամադրում են իրավաբանական տեղեկատվություն, խորհրդատվություն և պարզաբանում.
2. կազմում են իրավաբանական բնույթի փաստաթղթեր.
3. իրականացնում են ներկայացուցչություն[14]:

Փաստաբանական ակադեմիայի կլինիկան այս երեք խմբի իրավաբանական օգնության տեսակներից տրամադրում է առավելապես իրավաբանական տեղեկատվություն և խորհրդատվություն, սակայն առանձին դեպքերում կազմվում են նաև իրավաբանական բնույթի փաստաթղթեր:

Դատական ներկայացուցչություն չի տրամադրվում և չի էլ կարող տրամադրվել, քանի որ նախ՝ կլինիկայի աշխատանքներում ներգրավված ունկնդիրները չունեն փաստաբանի արտոնագիր, որպեսզի իրականացնեն դատական ներկայացուցչություն, և երկրորդ՝ միջին դատական գործի տևողությունն էապես գերազանցում է ՀՀ փաստաբանական ակադեմիայում կրթական գործընթացի փորձաշրջանի փուլի տևողությունը, որը երեք ամսից վեց ամիս է տևում:

Մեր կարծիքով՝ ներկայացուցչությունը չպետք է ներառվի կլինիկայի գործունեության շրջանակներում, քանի որ այն պահանջում է շատ ավելի մեծ փորձառություն և պրոֆեսիոնալիզմ, քան կարող են տիրապետել կլինիկայում ներգրավված անձինք, իսկ նրանց ղեկավարը կարող է հսկել խորհրդատվության տրամադրումը կամ ստուգել կազմված փաստաթղթերը, սակայն եթե ներգրավվի նաև դատական նիստերին, ապա դա նույնը կլինի, որ ներկայացուցչություն իրականացնում է ուսանողի ղեկավարը և ոչ թե ուսանողը:

Այս առումով, մեր կարծիքով, որպես կլինիկայի տեսակ պետք է բացառել ներկայացուցչության իրականացման մոդելը:

Եզրակացություն

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք փաստել, որ իրավաբանական կլինիկաների գործունեությունը որպես կրթական գործունեության բաղադրիչ, գոր-

---

[13] https://advocates.academy/hy/file/2352fd13-2a1e-45e0-87a6-174e276ba6be

[14] Տե՛ս **Dubchak, N.S.** (2012). Classification of legal clinics: a theoretical analysis. Bulletin of the Academy of Advocacy of Ukraine, 25(3), էջ 198-200:

ծուն միջոց է իրավական կրթության որակի բարձրացման և գործնական պահանջների համապատասխանության ապահովվման տեսանկյունից, որը, իհարկե, զուգակցվում է սոցիալական բաղադրիչով՝ անվճար իրավաբանական օգնության տրամադրմամբ:

ՀՀ փաստաբանական ակադեմիայի իրավաբանական կլինիկան իր ռեսուրսներով արդեն տարիներ շարունակ շաբաթը մեկ օր տրամադրում է քաղաքացիներին անվճար իրավաբանական օգնություն և դրան զուգահեռ՝ ձևավորում ու զարգացնում է իր ունկնդիրների մեջ փաստաբանական գործունեության համար անհրաժեշտ մասնագիտական հմտություններ: Կլինիկան ապահովում է անվճար իրավաբանական օգնության տրամադրման պրոֆեսիոնալիզմը՝ ըստ քրեաիրավական կամ քաղաքացիաիրավական (վարչաիրավական) մասնագիտացումների, և չի սահմանափակում իրեն դիմած անձանց խնդիրների բնույթը և բովանդակությունը:

Այդուհանդերձ, կլինիկական գործունեության, այդ թվում նաև Կլինիկայի զարգացման համատեքստում մենք առաջարկում ենք ներդնել նախապես գրանցվելու և իրավական խնդիրը նախապես գրավոր ներկայացնելու մոդելը՝ թողնելով գրանցման ձևաչափի և ժամկետների սահմանումը կլինիկական գործունեություն իրականացնող կազմակերպության հայեցողությանը:

МАНЕ КАРАПЕТЯН – ***Роль и значение юридической клиники академии адвокатуры РА как неотъемлемой части образовательного процесса и платформы для оказания бесплатной юридической помощи.*** – В данной статье рассматривается Юридическая клиника Академии адвокатов как совместная площадка для образовательных целей и оказания бесплатной юридической помощи, её основные особенности, а также сходства и различия по сравнению с юридическими клиниками высших учебных заведений.
В статье также представлены история и развитие юридической клиники, подходы различных правоведов к роли, значению и функциям юридической клиники.
В статье представлено предложение о внедрении модели предварительной регистрации лиц, обращающихся в клинику, и предварительного изложения правовой проблемы в письменной форме, оставив определение формата регистрации и сроков на усмотрение организации, осуществляющей деятельность клиники, что, в свою очередь, будет способствовать оказанию более качественной юридической помощи и более эффективному управлению временем.

Ключевые слова: *Юридическая клиника, клиника, Академия адвокатов, юрист, испытательный срок, оказание бесплатной юридической помощи, бесплатная юридическая помощь, юридическая консультация*

MANE KARAPETYAN – ***The Role and Significance of the Legal Clinic of the Academy of Advocates of RA as an Integral Part of the Educational Process and Platform for Providing Free Legal Aid.*** – This article presents the Legal Clinic of the Academy of Advocacy as an educational and free legal assistance platform, its main features, as well as similarities and differences in comparison with legal clinics of higher educational institutions.
The article also presents the history and development of the formation of the legal clinic, the approaches of various legal scholars to the role, significance and functions of the legal clinic.

The article presents a proposal to introduce a model for pre-registration of persons applying to the clinic and the preliminary presentation of the legal problem in writing, leaving the definition of the registration format and deadlines to the discretion of the organization carrying out clinical activities, which in turn will contribute to the provision of higher-quality legal assistance and more effective time management.

Key words: *Legal clinic, clinic, Academy of Advocates, lawyer, probationary period, providing free legal aid, free legal aid, legal advice.*

References

Валериевна Г.Ю., Нариманович М.Р., Юридическая клиника как метод практического обучения будущих юристов. Мир науки. Педагогика и психология, 2019, №5, Том 7, ISSN 2558-6282

Люблинский А.И. О юридических клиниках. Российское понимание термина «юридическая клиника» // А.И.Люблинский//Журнал Министерства Юстиции.-1901.-КН. 1.-С. 175-181//https://codolc.com/bookslib/O_juridicheskikh_klinikakh/O_yuridicheskih_klinikah_rossiyskoe_ponimanie_termina

Dubchak, N.S. (2012). Classification of legal clinics: a theoretical analysis. Bulletin of the Academy of Advocacy of Ukraine, 25(3), 198-200

Goncharenko, V.O. Legal Clinic. History and definitions. Practice of Legal Clinics of Ukraine, 1, 2004

Mimoso, M.J., Anjos, M.R. & Miranda, C (2018). Legal clinics, a challenge for the teaching of law. New Trends and Issues Proceedings on Humanities and Social Sciences, ISSN 2547-8818

The Legal Clinic. The Idea, Organization, Methodology, Warsaw 2005, ISBN 83-7387-685-5

Polyakov, M.B. (2010). The history of legal clinics and clinical legal education. Russian Law Journal, 2, 6-68.

Kozenko, Y. (2009). Law clinics: learning by helping. Law Student, 6(5), 22-23.

Serhii Kivalov. Legal Clinics as an important element of human right for free legal aid. 2019, ISSN: 1370-7794

Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն
2026, Vol. 2: SPECIAL ISSUE, հունվար, 56-67
https://doi.org/10.46991/BYSU.C/2026.SP2.056

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱՆԵՐԻ ԴԵՐԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ
(ԵՄՀ իրավաբանական կլինիկայի օրինակով)

ԶՈՀՐԱԿ ԱՊՐԵՍՅԱՆ[*], **ՆՈՒՆԵ ՋՈՄԱՐԴՅԱՆ**[**], **ԼԻԱ ԹԵՎՈՍՅԱՆ**[***]
Եվրասիա միջազգային համալսարան

Սույն հոդվածում քննարկվում է իրավաբանական կրթության դասավանդման առկա վիճակը՝ ընդգծելով տեսական ուսուցման և գործնական հմտությունների զարգացման միջև առկա բացը: Մինչ համալսարանները հակված են գերագնահատելու տեսական գիտելիքները, վերջին կրթական բարեփոխումները, ինչպիսին է Բոլոնիայի գործընթացը, երբեմն խաթարում են ապագա իրավաբանների մասնագիտական զարգացման համար անհրաժեշտ հիմնարար իրավական տեսությունների ու

[*] **Զոհրակ Ապրեսյան –** իրավաբանական գիտությունների թեկնածու, Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի և իրավաբանական կլինիկայի դասախոս, ՀՀ փաստաբանների պալատի անդամ
Зограк Апресян – кандидат юридических наук, преподаватель юридического факультета и юридической клиники Международного университета Евразия, член Палаты адвокатов РА
Zohrak Apresyan – Candidate of Legal Sciences, Lecturer of the Law Department and Legal Clinic at the Eurasia International University, Member of the Chamber of Advocates of the RA
Էլ.փոստ՝ zohrak.apresyan@eiu.am ORCID ID: https://orcid.org/0009-0003-6486-3083
[**] **Նունե Ջոմարդյան –** Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի վարիչի տեղակալ, իրավաբանական կլինիկայի տնօրեն, դասախոս
Нуне Джомардян – заместитель заведующего кафедрой права, директор юридической клиники и преподаватель Международного университета Евразия
Nune Jomardyan – Deputy Head of the Law Department, Director of the Law Clinic and Lecturer at the Eurasia International University
Էլ.փոստ՝ nune.jomardyan@eiu.am ORCID ID: https://orcid.org/0009-0003-8619-5645
[***] **Լիա Թևոսյան –** Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի և ԵՄՀ իրավաբանական կլինիկայի դասախոս, ԵՊՀ գիտական քաղաքականության վարչության առաջատար մասնագետ
Лия Тевосян – преподаватель юридического факультета и юридической клиники Международного университета Евразия, ведущий специалист управления научной политики ЕГУ
Lia Tevosyan – Lecturer of the Law Department and Legal Clinic at the Eurasia International University, Leading Specialist of the Science Policy Department of YSU
Էլ.փոստ՝ lia.tevosyan@eiu.am ORCID ID: https://orcid.org/0000-0002-8117-8358

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 17.07.2025
Գրախոսվել է՝ 09.01.2026
Հաստատվել է՝ 13.01.2026
© The Author(s) 2026

արժեքների ընկալումը։ Ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է իրավաբանական կրթությունը մարդու իրավունքների պաշտպանության, սոցիալական արդարության խթանման և խտրականության վերացման պահանջներին համապատասխանեցնելու հրատապ անհրաժեշտությամբ։ Ուսումնասիրության նպատակն է առաջարկել բարեփոխումների մոդել, որը կվերացնի տեսության և պրակտիկայի միջև առկա անջրպետը՝ ինտեգրելով իրավաբանական կլինիկաները ուսումնական ծրագրի մեջ։ Հոդվածի հեղինակները պնդում են, որ իրավաբանական կլինիկաները ծառայում են որպես կրթական արդյունավետ գործիք, որը թույլ է տալիս ուսանողներին ներգրավվել իրական գործերի մեջ, քննադատաբար գնահատել իրավական համակարգը և զարգացնել իրավաբանին անհրաժեշտ կարողությունները։ Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ կլինիկաները ոչ միայն բարելավում են ուսանողների գործնական կարողությունները, այլև նպաստում են իրավաբանական աշխատանքի էթիկական և սոցիալական տեսանկյունների ավելի խորը ըմբռնմանը։ Սույն աշխատանքը կխթանի իրավաբանական կլինիկաների՝ որպես փորձառական կրթության մոդելի վերաբերյալ քննարկումները։

Բանալի բառեր – *իրավաբանական կլինիկա, գիտելիք, գործնական հմտություններ, կարողություններ, խորհրդատվություն, պաշտպանություն, մարդու իրավունքներ*

Ներածություն

Արդար և ժողովրդավարական հասարակության ստեղծման պահանջներից է այնպիսի իրավաբանական համայնքի առկայությունը, որը կկարողանա կյանքի կոչել մարդու իրավունքների պաշտպանության, սոցիալական արդարության և մարդասիրական հասարակության կայացման արժեքները։ Այս գործառույթը հնարավոր է իրականացնել միայն տեսական գիտելիքներով զինված, գործնական հմտություններին արհեստավարժ տիրապետող և սահմանադրական արժեքներն ու սկզբունքները կյանքի կոչելու կարողություններին տիրապետող իրավաբանների շնորհիվ, որի լուծման հարցում մեծ է իրավաբաններ պատրաստող բարձրագույն ուսումնական հաստատությունների դերակատարությունը։

Սակայն, թե՛ երկար տարիներ համալսարաններում դասավանդվող տեսական խորը գիտելիքների վրա հիմնված ուսուցումը, թե՛ վերջին շրջանում Բոլոնիայի գործընթացով նախատեսված վերջնարդյունքահեն իրավաբանական կրթությունը չկարողացան ապահովել նման մասնագետների պատրաստումը։ Դրա արդյունքում իրավաբանական կրթության կառուցվածքը համարվեց հատվածավորված (սեգմենտացված), թեև իրական աշխարհի իրավաբանական պրակտիկան չի գործում տեսությունից մեկուսացված։

Սույն հոդվածում ընդգծվում է կլինիկական իրավաբանական կրթության կարևոր դերը՝ տեսական իրավաբանական կրթության և իրավունքի գործնական կիրառման միջև եղած բացը լրացնելու գործում։ Հիմնավորվում է այն մոտեցումը, որ իրավաբանական կլինիկաները տրամադրում են գործնական

փորձ՝ խթանելով սահմանադրական արժեքների, մարդու իրավունքների և սոցիալական արդարության ավելի խորը և միասնական ըմբռնումը:

Հոդվածը Եվրասիա միջազգային համալսարանի կլինիկայի օրինակով ներկայացնում է նաև կլինիկական կրթության առկա հնարավորությունները և ներկայացնում է առաջարկություններ՝ բարելավելու կրթական բաղադրիչի արդյունավետությունը՝ ուղղված ուսանողների կարողությունների զարգացմանը իրավունքների պաշտպանության ոլորտում:

Նպատակների իրագործման համար կիրառվել են համակարգակառուցվածքային, կառուցողական քննադատության և փաստաթղթերի ուսումնասիրության մեթոդները:

Բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդվող և գործնականում կիրառվող իրավունքի միջև բացը

Բոլոնիայի գործընթացին միանալուց հետո Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի զարգացումն ընթանում է վերջնարդյունքահեն կրթության ապահովման ճանապարհով, որը վերջին տարիներին առավելապես հիմնված է որակավորումների արժանահավատության վրա: Այդ որակավորումները պետք է լինեն արդիական և համապատասխանեն հաստատված չափանիշներին՝ ապահովելով կոնկրետ մասնագիտական ոլորտում ակնկալվող անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների և կարողունակությունների ձևավորումը:

Այդուհանդերձ, ըստ մի շարք մասնագետների՝ այս գործընթացն ունի նաև որոշակի թերություններ: Հետազոտողների մի մասը նշում է, որ «Բոլոնիայի օրակարգը զբաղվածությունն ու արդյունավետությունը վեր է դասում քննադատական մտածողությունից և քաղաքացիական պատասխանատվությունից»[1]: Իրավաբանական կրթության մեջ դա հաճախ հանգեցնում է տեխնիկական ուսուցման՝ ի վնաս նորմատիվիստական կամ գործնական ուսումնառության: Կրթական գործընթացը հիմնվում է ոչ թե ուսումնառողների մեջ «իրավական համակարգի կառուցվածքի վերաբերյալ հիմնարար գիտելիքների և մասնագիտության հիմնասյուները կազմող հասկացությունների, իրավունքի ճյուղերի և ինստիտուտների խորը իմացության»[2], այլ ավելի շուտ իրավունքի ոլորտի սովորական տեխնիկական մասնագետներ պատրաստելու գաղափարի վրա: Իրավաբան մասնագետների պատրաստման գործընթացը

---

[1] **Tomusk, V**. (2006). The Bologna Process and the Enlightenment Project: A Bird's Eye View from the Bottom of the Slope. *European Education,* 38(4), p. 13–27, DOI:10.2753/EUE1056-4934400201 (վերջին մուտք՝ 02.07.2025); Garben, S. (2012). The Bologna Process: From a European Law Perspective. *European Law Journal,* 18(3), p. 382–403, DOI: 10.1111/j.1468-0386.2009.00503.x (վերջին մուտք՝ 03.07.2025).

[2] **García De Enterría, Luis Díez-Picazo, Aurelio Menéndez, Francisco Laporta, Enrique Gimbernat, Francesc de Carreras, Tomás-Ramón Fernández, Santiago Muñoz Machado, and Manuel Atienza** (2009). Saquemos los estudios de derecho del proceso de Bolonia. *El Cronista del Estado Social y Democrático de Derecho,* №. 6 (Junio), p. 5, http://www.lapaginadefinitiva.com/aboix/?cat=8 (վերջին մուտք՝ 03.07.2025).

«տրանսֆորմացվում է իրավաբանների պատրաստման «շուկայական-ցիվիլիստական», ձեռնարկատիրական մոդելի»[3]: Անդրես Գասկոն Կուենկայի կարծիքով՝ Բոլոնիայի գործընթացը ապագա շրջանավարտներին դիտարկում է որպես զուտ իրավաբաններ, որոնց խնդիրն է «կատարել իրենց մասնագիտական գործառույթները՝ չքննադատելով համակարգը կամ ստատուս քվոն և առանց ակտիվ դերակատարման հիմնական իրավունքների պաշտպանության գործում»[4]: Վերջինս կարծում է, որ տվյալ գործընթացն իրականացվում է «կրթության և գիտելիքի արժեքի՝ որպես անհատի զարգացման ընդհանուր և կառուցվածքային բարիքների հաշվին, որի հետևանքով երկրորդ պլան են մղվում իրավաբանի ձևավորման համար կարևոր նշանակություն ունեցող առարկաներ, այդ թվում՝ իրավունքի փիլիսոփայությունը, տեսությունը, իրավական էթիկան և այլն»[5]:

Համաձայնելով ընդհանուր քննադատություններին՝ մենք գտնում ենք, որ Բոլոնիայի գործընթացն ունի նաև առավելություններ, քանի որ կրթական ծրագրերի վերջնարդյունքները ներառում են ընդհանրական և մասնագիտական հմտությունների և կարողունակությունների ձևավորում: Խնդիրն այստեղ այն է, որ այդ պահանջները հիմնականում իրականացվում են միայն լսարանում՝ դասավանդման ընթացքում: Ուսանողների կողմից վերլուծվող իրավիճակային խնդիրները դասախոսը հարմարեցնում է ուսումնասիրվող թեմայի պահանջներին, ինչի արդյունքում ուսումնառողների հմտությունների ձևավորումը մնում է թերի և կրում է հատվածական բնույթ:

Բացի այդ, կարևոր է հաշվի առնել մեկ այլ հանգամանք ևս: Իրավաբանական կրթությունը երկար ժամանակ, ի տարբերություն բժշկական և բնագիտական մասնագիտությունների, դասավանդվել է համալսարանների պատերի ներսում՝ հետապնդելով բացառապես տեսական գիտելիքների փոխանցման նպատակ: Իրավաբանական կրթության մեջ տեսության և պրակտիկայի միջև առկա այս անհամապատասխանությունը քննարկվել և փաստագրվել է մի շարք մասնագետների կողմից[6]: Ըստ այդ քննադատական մոտեցումների՝ ա-

---

[3] **Бондарь, Н. С.** (2023). Конституционализм — базовое начало юридического образования // *Вестник Московского университета. Серия 11. Право.* № 6, с. 21, DOI: 10.55959/MSU0130-0113-11-64-6-1 (վերջին մուտք՝ 01.07.2025).

[4] **Andrés Gascón Cuenca (2022).** El currículo del grado en derecho, los valores fundamentales del ordenamiento jurídico y la educación jurídica clínica: una reformulación de prospectiva. *Revista de educación y derecho.* Número 25 Abril 2022 - Septiembre, p. 9, DOI: 10.1344/REYD2022.25.35970 (վերջին մուտք՝ 03.07.2025).

[5] Նույն տեղում:

[6] Տե՛ս, օրինակ, **Stuckey, Roy** (2007). Best Practices for Legal Education / by Roy Stuckey and Others; Поляков, М. Б. (2010). История возникновения юридических клиник и клинического юридического образования // *Российский юридический журнал.* № 2, էջ 66–68, https://cyberleninka.ru/article/n/istoriya-vozniknoveniya-yuridicheskih-klinik-i-klinicheskogo-yuridicheskogo-obrazovaniya/viewer (վերջին մուտք՝ 01.07.2025):

պագա իրավաբանները հաճախ ավարտում են ուսումնական հաստատությունը խորը տեսական գիտելիքներով, բայց ոչ համարժեք գործնական հմտություններով՝ ունենալով սահմանափակ պատկերացումներ մասնագիտական էթիկայի, պատասխանատվության, սոցիալական և մարդկային տեսանկյունների վերաբերյալ:

Այս անջրպետը հաճախ ավելի է խորանում, երբ ներպետական իրավունքի համակարգի առաջատար ճյուղը հանդիսացող սահմանադրական իրավունքը դասավանդվում է մեկուսացված՝ որպես առանձին առարկա՝ կտրված իրավական այլ ոլորտներից:

Սակայն, այստեղ պետք է հաշվի առնել, որ իրավունքի տվյալ ճյուղի նորմատիվային հիմքը կազմող, բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող Սահմանադրությունը պարզապես վերացական սկզբունքների ամբողջություն չէ: Այն կենդանի փաստաթուղթ է, որը կանխորոշում է իրավունքի բոլոր ճյուղերի նորմերի մեկնաբանությունն ու կիրառումը: Արժեքները, ինչպիսիք են՝ մարդու արժանապատվությունը, սոցիալական արդարությունը, խտրականության բացառումը և բազմակարծությունը, չպետք է սահմանափակվեն սահմանադրական իրավունքի դասընթացով, այլ պետք է ինտեգրվեն քաղաքացիական, քրեական, վարչական և իրավունքի այլ ճյուղերի ուսումնասիրության մեջ: Առանց այս ինտեգրման իրավաբանական կրթությունը վտանգում է ստեղծել մասնատված գիտելիք, որը չի կարող բավարարել ամբողջական իրավական համակարգի իրագործումը:

Կլինիկական իրավաբանական կրթությունը որպես փոխակերպող հայեցակարգ

Ներկայիս կրթական համակարգում վեր հանված բացերն ու սահմանափակումները կարող են հաղթահարվել կլինիկական իրավական կրթության միջոցով՝ մի կողմից սերմանելով սահմանադրական արժեքներ, իսկ մյուս կողմից՝ առերեսելով ուսանողներին իրական կյանքի խնդիրների հետ: Ի տարբերություն տեսական դասընթացների, կլինիկաներն ուսանողներին ներգրավում են իրական իրավական խնդիրների մեջ՝ պահանջելով նրանց կողմնորոշվել ոչ միայն օրենքների և նախադեպային որոշումների, այլև ինստիտուցիոնալ ընթացակարգերի, հաճախորդների անհատական կարիքների և էթիկական խնդիրների մեջ[7]:

Իրավաբանական կլինիկաների հիմնական խնդիրներից մեկն է դառնում սահմանադրական սկզբունքների ամուր ըմբռնումը՝ ապահովելով հիմնարար իրավունքների պաշտպանությունը և ժողովրդավարական կառավարումը: Դա էլ իր հերթին ազդում է կրթական ոլորտի ինչպես հանրային-իրավական, այնպես էլ անձնական տեսանկյունների վրա: Իրավաբանական կրթության

[7] Տե՛ս **Giddings, Jeff** (2013). *Promoting Justice Through Clinical Legal Education.* Justice Press.

այս «երկընդհանուր արժեքային սկզբունքներն իրենց ֆորմալ-իրավական արտահայտությունն են գտնում սահմանադրական կարգի հիմունքների (հանրային իրավական բաղադրիչի) և անձի սահմանադրական կարգավիճակի (սուբյեկտիվ-անձնական բաղադրիչի) ինստիտուտների մեջ»[8]: Այս բաղադրիչների օգնությամբ էլ ուսանողները ծանոթանում են իրական գործերի հետ, որոնք ներառում են սահմանադրության մեկնաբանումը, դատական պրակտիկայի վերահսկողությունը և հիմնարար իրավունքների ապահովումը: Նման դեպքերի հետ աշխատելը ուսանողներին թույլ է տալիս յուրացնել այնպիսի հայեցակարգեր, ինչպիսիք են իրավունքի գերակայությունը, իշխանությունների բաժանումը և պատշաճ ընթացակարգերը՝ խթանելով սահմանադրական շրջանակների ավելի խորը ընկալումը: Ստեղծվում են բարենպաստ պայմաններ սահմանադրական արժեքները գործնականում վերլուծելու համար: Արժեքային սկզբունքների նման ամբողջությունը հնարավորություն է տալիս հաղթահարելու իրավաբանական կրթության հատվածային (ֆրագմենտար) մոդելը և գեներացնելու տեսական ու գործնական կողմերի միասնական ինտեգրացիոն կրթական համակարգ:

Հիմնվելով վերը շարադրվածի վրա՝ կարող ենք նշել, որ կլինիկական իրավաբանական կրթությունը արդի իրավաբանական կրթության բովանդակային ու մեթոդաբանական հիմնախնդիրների լուծմանն ուղղված արդյունավետ միջոց է: Այն կատարում է և՛ ակադեմիական, և՛ քաղաքացիական առաքելություն, նպաստում է «ուսանողների մասնագիտական ինքնության զարգացմանը՝ ներառյալ էթիկական պատասխանատվությունը, հաճախորդակենտրոն խնդիրների լուծմանը»[9], օգնում հաղթահարել կրթական սահմանափակումները՝ առաջարկելով համալիր և միջառարկայական մոտեցում: Այդ իսկ տեսակետից կլինիկաների գործունեությունը պետք է համարվի ոչ թե հավելյալ գործընթաց, այլ դիտարկվի որպես ուսումնական պլանների մեջ ներառված հիմնական կրթական բաղադրիչ:

Կլինիկաների ինտեգրումը ուսումնական պլաններում կարող է իրականացվել տարբեր եղանակներով՝ կախված նրանից, թե ինչ նպատակ է հետապնդում տվյալ կրթական ծրագիրը: Մոդելները բազմաթիվ են: Դրանցից առավել քննարկվողներն են հետևյալ չորսը.

1. Տեղեկատվական գործառույթ իրականացնող կլինիկա (Street Law), որի նպատակն է իրավական գիտելիքներ չունեցող անձանց, մասնավորապես դպրոցականներին և կարիքավոր թիրախային խմբերին փոխանցել իրենց խնդիրներին առնչվող գործնական իրավական գիտելիքներ՝ օգտագործելով համագործակցային մեթոդներ:

---

[8] **Бондарь, Н. С.** (2023). Конституционализм - базовое начало юридического образования // *Вестник Московского университета. Серия 11. Право.* № 6, с. 20, DOI: 10.55959/MSU0130-0113-11-64-6-1 (վերջին մուտք՝ 01.07.2025).

[9] **Hamilton, N., Bilionis, L.** (2022). Law Student Professional Development and Formation, p. 7, https://doi.org/10.1017/9781108776325 (վերջին մուտք՝ 01.07.2025).

2. Իրավաբանական խորհրդատվություն տրամադրող կլինիկա, որի հիմնական նպատակն է խորհրդատվությունների տրամադրումն ու հարցազրույցների կազմակերպումը:

3. Հետազոտական իրավաբանական կլինիկա, որն ունի քիչ տարածվածություն, բայց ավելի արժեքավոր է, քանի որ այստեղ ուսանողները ՀԿ-ների, հանրային շահերի խմբերի կամ պետական մարմինների անունից զբաղվում են իրավական հետազոտություններով, քաղաքականության վերլուծությամբ կամ օրենսդրության մշակմամբ: Այս կլինիկաները հաճախ չեն ներառում հաճախորդների հետ անմիջական շփում, այլ կենտրոնանում են համակարգային փոփոխությունների և իրավական բարեփոխումների վրա:

4. Համայնքային ծառայություններ տրամադրող կլինիկա, որը կենտրոնանում է խոցելի խմբերին արտադատական իրավական աջակցություն ցուցաբերելու վրա՝ տվյալ համայնքի ներգրավվածության, կրթության, լիազորությունների հզորացման և պաշտպանության միջոցով: Ի տարբերություն հաճախորդակենտրոն մոդելների, այն առաջնահերթություն է տալիս կոլեկտիվին և հաճախ միջառարկայական է[10]:

Անկախ այն հանգամանքից, թե կլինիկական կրթության որ մոդելն է նախընտրում իրավաբանական կրթություն տրամադրող հաստատությունը, այն նոր հնարավորություններ է ստեղծում ինչպես ուսանողների, այնպես էլ դասախոսների համար, նպաստում համապատասխան ուսումնական հաստատության սոցիալական պատասխանատվության բարձրացմանը:

Եվրասիա միջազգային համալսարանի Իրավաբանական կլինիկայի առանձնահատկությունները

Եվրասիա միջազգային համալսարանի իրավաբանական կլինիկան (այսուհետև՝ նաև Կլինիկա) ձևավորվել է 2011 թ. որպես հիբրիդ մոդել՝ ներառելով խորհրդատվություն տրամադրող և տեղեկատվական գործառույթ իրականացնող կլինիկաների տարրեր: Համաձայն Կլինիկայի կանոնադրության՝ վերջինիս գործունեության հիմնական նպատակներն են՝

- նպաստել Իրավաբանական կլինիկայի ուսանողների գործնական հմտությունների զարգացմանը,
- տրամադրել անվճար իրավաբանական խորհրդատվություն սոցիալապես անապահով անձանց,
- ապահովել իրավական գիտելիքների տարածումը քննարկումների, հանդիպումների, շնորհանդեսների և այլ միջոցառումների միջոցով:

Առաջին նպատակի իրագործման համար ուսուցումը կլինիկայում բաժանվում է տեսական և գործնական մասերի:

---

[10] Տե՛ս **Bloch, F. S.** (2011). The global clinical movement: Educating lawyers for social justice. Oxford University Press. Տե՛ս նաև Giddings, Jeff (2013). Promoting Justice Through Clinical Legal Education. Justice Press:

Տեսական մասը ներառում է դասընթացներ, որոնք բաց են ամբիոնի բոլոր ուսանողների համար և առնչվում են հետևյալ թեմաներին՝

- հարցազրույց հաճախորդի հետ.
- գործի վերլուծություն.
- հաճախորդի խորհրդատվություն.
- իրավաբանական տեխնիկայի հիմունքներ.
- մասնագիտական էթիկա.
- գործնական հմտություններ (ըստ անհրաժեշտության):

Գործնական մասը ներառում է իրավախորհրդատվության տրամադրում: Հարցազրույցներ և խորհրդատվություն կազմակերպելու համար ուսանողները բաժանվում են 2-3 անձից կազմված խմբերի: Յուրաքանչյուր խումբ հետազոտում է կոնկրետ գործը, նախապատրաստում խորհրդատվության նյութերը, քննարկում դրանք Կլինիկայի դասախոսի հետ և պատրաստում վերջնական պատասխանը: Յուրաքանչյուր դեպքի համար կազմվում է առանձին գործ:

Կլինիկայում պարբերաբար կազմակերպվում են գործնական քննարկումներ, խորհրդակցություններ՝ աշխատանքները քննարկելու և պլանավորելու համար: Անհրաժեշտության դեպքում իրականացվում են այցելություններ դատարան և այլ պետական մարմիններ ու հաստատություններ: Բացի այդ, Կլինիկայի համագործակցությունը մի շարք պետական կառույցների և փաստաբանական գրասենյակների հետ հնարավորություն է տալիս ուսանողներին իրականացնելու հավելյալ պրակտիկա նշված կառույցներում:

Ուսանողները վարում են օրագիր կատարված աշխատանքների վերաբերյալ և ներկայացնում ամսական հաշվետվություն, կիսամյակի վերջում անցնում են թեստավորում և աշխատանքի գնահատում: Ավարտական հավաստագիր է տրվում այն ուսանողներին, որոնց աշխատանքը գնահատվել է դրական:

Ուսուցման գործընթացի կազմակերպման առումով Իրավաբանական կլինիկան մինչև 2023 թվականը ներառված չէր ուսումնական պլանում որպես առանձին դասընթաց, այլ արտադրական և նախաավարտական պրակտիկայի իրականացման ձև էր և ուսանողների մասնակցության համար առանձին կրեդիտներ չէր նախատեսում: Կլինիկայի աշխատանքներին կարող էին մասնակցել երրորդ, չորրորդ կուրսերում կամ մագիստրատուրայում սովորող ուսանողները: Ընդ որում, տեսական մասի պարապմունքները բաց էին իրավագիտության ամբիոնի բոլոր ուսանողների համար, իսկ գործնական խորհրդատվական աշխատանքներին մասնակցում էին միայն մրցույթով ընտրված ուսանողները՝ ներկայացրած դիմումի և հարցազրույցի արդյունքների հիման վրա, որն անցկացվում էր Կլինիկայի տնօրենի, փաստաբանի, համակարգողի և դասախոսի կողմից:

Վերահիմաստավորելով Կլինիկայի դերի կարևորությունը՝ ԵՄՀ իրավագիտության ամբիոնը կլինիկական կրթության մոդելը ներառեց 2024-2025 թթ. ուսումնական տարվա պլանի մեջ որպես ընտրովի առարկա 3-4-րդ կուրսերի և

մագիստրատուրայի ուսանողների համար՝ տրամադրելով 3 կրեդիտ յուրաքանչյուր կիսամյակում կատարած աշխատանքների համար։ Բարեփոխման արդյունքում Կլինիկայի խորհրդատվական աշխատանքներին մասնակցելու և Կլինիկայի դասախոսների հետ սերտորեն աշխատելու հնարավորություն ստացան բոլոր ուսանողները։ Հետագա բարելավումների համար առաջարկվում է կլինիկական դասավանդման մոդելի տարրեր ներառել ուսումնական ծրագրի բոլոր առարկաներում։

Կլինիկայի երկրորդ նպատակի իրագործումը ապահովում է Համալսարանի սոցիալական պատասխանատվությունը հասարակության առջև և իրավունքների պաշտպանության հնարավորություն է ստեղծում այն անձանց համար, որոնք չեն կարող օգտվել վճարովի իրավաբանական ծառայություններից։

Կլինիկան չունի հատուկ մասնագիտացվածություն և խորհրդատվություն է տրամադրում քրեական, քաղաքացիական, ընտանեկան, աշխատանքային և սոցիալական ապահովության իրավունքի բնագավառներում։ Բայցևայնպես, Կլինիկայի գործերը կարող ենք ընդգրկել երկու խոշոր խմբի մեջ՝ խորհրդատվություններ՝ ուղղված խախտված իրավունքների վերականգնմանը, որոնց մեջ առանձնանում են հակահիրավական տարբեր արարքներից տուժած անձանց տրված խորհրդատվությունները, ալիմենտային գործերը, կենսաթոշակային ու սոցիալական ապահովության հարցերը, սեփականության իրավունքի պաշտպանությունը և խորհրդատվությունները՝ ուղղված տնտեսական ակտիվության խթանմանը, ի մասնավորի՝ այն գործերը, որոնք վերաբերում են անհատ ձեռներեցների, տարբեր իրավաբանական անձանց պետական գրանցմանը, ապրանքային նշանի գրանցմանն ու դրանց հետ կապված վեճերի լուծմանը։

Տրամադրելով խորհրդատվություն՝ ուսանողները սովորում են համակարգված մոտենալ հաճախորդի, մասնագիտական պատասխանատվության և դատարան դիմելու մատչելիության խնդիրներին, գործել իրավաբանական էթիկայի կանոններին համապատասխան՝ խստիվ պահպանելով գաղտնիությունը և հաճախորդի շահերը։

Ուսանողների կողմից կատարվող աշխատանքներն իրականացվում են դասախոսների անմիջական վերահսկողությամբ և մենթորությամբ։ Դրա առավելությունն այն է, որ Կլինիկայում աշխատող դասախոսները միաժամանակ գործող փաստաբաններ են և օգնում են ուսանողներին ոչ միայն խորհրդատվություն տրամադրելու, այլև հայցադիմումներ կազմելու ու դատարան ներկայացնելու հարցերում։

Կլինիկական կրթությունն օգնում է նաև դասախոսներին հաղթահարելու դասավանդման մեջ տեսության և պրակտիկայի միջև եղած բացը, նպաստում է դասավանդման նոր մոդուլների մշակմանը։ Որպես օրինակ կարող ենք նշել 2024-2025 թթ. ուսումնական պլանում ներդրված «Իրավական վերլուծություն

և փաստարկում», «Իրավաբանական էթիկա և պատասխանատվություն» պարտադիր առարկաները:

Կլինիկայի նշված նպատակի արդյունավետության համար առաջարկվում է ակտիվացնել դասախոս – ուսանող հետազոտական աշխատանքները՝ ուղղված հաճախորդների կամ համայնքների կողմից բարձրաձայնված իրական իրավական խնդիրների լուծմանը: Բարելավման մեկ այլ կարևոր ուղղություն կարող է դիտարկվել միջառարկայական խորհրդատվությունների կազմակերպումը համալսարանի կառավարման ամբիոնի հետ, ինչը կնպաստի ձեռնարկատիրությամբ զբաղվել ցանկացող անձանց համալիր խորհրդատվության տրամադրմանը:

Կլինիկայի երրորդ նպատակի ապահովման միջոցառումները կրում են տեղեկատվական բնույթ և կոչված են բարձրացնելու սոցիալական առանձին խմբերի, դպրոցականների, փախստականների իրազեկվածությունն իրենց հուզող խնդիրների վերաբերյալ: Գիտելիքների տարածումն իրականացվում է ինչպես քննարկումների, հանդիպումների, շնորհանդեսների, այնպես էլ փորձարարական և ներգործական միջոցառումների միջոցով: Վերջիններիս շարքում են քրեական, քաղաքացիական և ընտանեկան գործերով դատախաղերը, դերախաղերը, տարբեր իրավիճակների մոդելավորումները: Բոլոր միջոցառումները կազմակերպվում են ինչպես համալսարանում, այնպես էլ համալսարանից դուրս: Այս գործընթացի առավելությունն այն է, որ ուսանողները, իրազեկելով այլ անձանց, միևնույն ժամանակ խորացնում են սեփական գիտելիքները, սովորում են պարզեցնել իրավական հասկացությունները և դրանք մատչելի դարձնել լայն լսարանին:

Իրազեկման աշխատանքների հետագա ընդլայնման նպատակով առաջարկվում է խորացնել համագործակցությունը հասարակական միավորումների, հատկապես «ՍՕՍ-Մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի հետ՝ նպաստելու համապատասխան շահառուների իրազեկության բարձրացմանը:

Ամփոփելով Եվրասիա միջազգային համալսարանի կլինիկայի առանձնահատկությունների քննարկումը՝ նշենք, որ, ըստ ԵՄՀ կարիերայի զարգացման և գործատուների հետ կապի կենտրոնի ներկայացրած տվյալների, կլինիկական կրթությանը մասնակցած շրջանավարտների 70%-ը աշխատում է տարբեր փաստաբանական գրասենյակներում, ինչը վկայում է կլինիկական կրթության արդյունավետության մասին: Ըստ շրջանավարտներից մեկի՝ Կլինիկան դարձավ այն հենակետը, որտեղ ձեռք բերված փորձը հնարավորություն տվեց հաջողությամբ անցնելու աշխատանքի փաստաբանական գրասենյակում և միաժամանակ սովորելու փաստաբանական ակադեմիայում: Շրջանավարտների մի մասի կարծիքով էլ կլինիկական կրթությունը հնարավորություն է տալիս ուսումնառության ընթացքում ձեռք բերելու նաև հմտություններ, որոնք երիտասարդ մասնագետներին բուհն ավարտելուց անմիջապես հետո աշխատաշուկայում դարձնում են մրցունակ:

Եզրակացություն

Հիմնվելով վերոշարադրյալի վրա՝ կարող ենք փաստել, որ իրավաբանական կրթության գործող մոդելը չի բավարարում այնպիսի ուսանողների պատրաստմանը, որոնք ունակ կլինեն լուծելու իրական իրավական խնդիրներ: Նշված թերությունների վերացման արդյունավետ միջոց են իրավաբանական կլինիկաները, որոնք.

- ուսանողների համար հնարավորություններ են ստեղծում իրավական գիտելիքները կիրառելու իրական կյանքի իրավիճակներում՝ այդպիսով ամրապնդելով իրենց գործնական կարողությունները,
- խրախուսում են իրավական համակարգի գործունեության վերաբերյալ քննադատական մտածողությունը՝ ուսանողներին զինելով կառուցվածքային խնդիրները վեր հանելու և դրանց դեմ պայքարելու կարողություններով,
- ինտեգրվելով իրավագիտության մասնագիտական կրթական ծրագրերի մեջ՝ ապագա իրավաբանների պատրաստումը իրավունքի սոցիալական գործառույթի (մարդու իրավունքների պաշտպանության, արդարադատության խթանման) հետ համապատասխանեցման մեթոդ են:

Այս արդյունքները ամբողջության մեջ կլուծեն մեր կողմից նշված խնդիրը՝ լրացնելով իրավաբանական կրթության մեջ տեսական ուսուցման և իրավունքի գործնական կիրառման միջև եղած բացը:

ЗОГРАК АПРЕСЯН, НУНЕ ДЖОМАРДЯН, ЛИЯ ТЕВОСЯН – *Прогресс в юридическом образовании: роль юридических клиник в продвижении конституционных ценностей, прав человека и профессионального мастерства (на примере юридической клиники МУЕ).* – В данной статье рассматривается современное состояние юридического образования, и подчеркивается разрыв между теоретическим обучением и развитием практических навыков. В то время как университеты склонны переоценивать значение теоретических знаний, недавние образовательные реформы, такие как Болонский процесс, иногда подрывают понимание фундаментальных правовых теорий и ценностей, необходимых для профессионального развития будущих юристов. Актуальность исследования заключается в острой необходимости согласования юридического образования с требованиями защиты прав человека, содействия социальной справедливости и ликвидации дискриминации. Цель исследования — предложить модель реформы, которая позволила бы преодолеть разрыв между теорией и практикой путем интеграции юридических клиник в учебную программу. Авторы статьи утверждают, что юридические клиники служат эффективным образовательным инструментом, позволяющим студентам участвовать в реальных делах, критически оценивать правовую систему и развивать компетенции, необходимые юристу. Результаты исследования показывают, что юридические клиники не только улучшают практические навыки студентов, но и способствуют более глубокому пониманию этических и социальных аспектов юридической работы. Исследование вносит вклад в обсуждение юридических клиник как модели практического образования, а также рассматривается как стратегия совершенствования подготовки юристов, приводящая ее в соответствие с потребностями современного общества.

Ключевые слова: *юридическая клиника, знания, практические навыки, умения, консультация, защита, права человека.*

ZOHRAK APRESYAN, NUNE JOMARDYAN, LIA TEVOSYAN – *Advances in Legal Education: The Role of Law Clinics in Promoting Constitutional Values, Human Rights, and Professional Excellence (Using the EIU Law Clinic as an Example).* – This article discusses the current state of legal education, highlighting the gap between theoretical instruction and the development of practical skills. While universities tend to overemphasize theoretical knowledge, recent educational reforms - such as the Bologna Process - sometimes undermine the understanding of fundamental legal theories and values essential for the professional development of future lawyers.

The relevance of this study lies in the urgent need to align legal education with the demands of human rights protection, the promotion of social justice, and the elimination of discrimination. The aim of the study is to propose a reform model that bridges the gap between theory and practice by integrating legal clinics into the curriculum.

The authors argue that legal clinics serve as effective educational tools, allowing students to engage with real cases, critically assess the legal system, and develop the skills necessary for legal practice. The findings of the study show that clinics not only enhance students' practical abilities but also foster a deeper understanding of the ethical and social dimensions of legal work.

This study contributes to the discourse on legal clinics as a model of experiential education and is also considered a strategy for improving the training of legal professionals to better meet the needs of contemporary society.

Key words: *legal clinic, knowledge, practical skills, abilities, consultation, protection, human rights.*

References

Бондарь, Н. С. (2023). Конституционализм - базовое начало юридического образования // *Вестник Московского университета. Серия 11. Право.* № 6, с. 4-28, DOI: 10.55959/MSU0130-0113-11-64-6-1 (01.07.2025).

Поляков, М. Б. (2010). История возникновения юридических клиник и клинического юридического образования // *Российский юридический журнал.* № 2, с. 66–68, https://cyberleninka.ru/article/n/istoriya-vozniknoveniya-yuridicheskih-klinik-i-klinicheskogo-yuridicheskogo-obrazovaniya/viewer (01.07.2025).

Andrés Gascón Cuenca (2022). El currículo del grado en derecho, los valores fundamentales del ordenamiento jurídico y la educación jurídica clínica: una reformulación de prospectiva. *Revista de educación y derecho.* Número 25 Abril 2022-Septiembre, DOI: 10.1344/REYD2022.25.35970 (03.07.2025).

Bloch, F. S. (2011). The global clinical movement: Educating lawyers for social justice. Oxford University Press.

Garben, S. (2012). The Bologna Process: From a European Law Perspective. *European Law Journal,* 18(3), էջ 382–403, DOI: 10.1111/j.1468-0386.2009.00503.x (03.07.2025).

García De Enterría, Luis Díez-Picazo, Aurelio Menéndez, Francisco Laporta, Enrique Gimbernat, Francesc de Carreras, Tomás-Ramón Fernández, Santiago Muñoz Machado, and Manuel Atienza (2009). Saquemos los estudios de derecho del proceso de Bolonia. *El Cronista del Estado Social y Democrático de Derecho,* Nº. 6 (Junio), էջ 4-5, http://www.lapaginadefinitiva.com/aboix/?cat=8 (03.07.2025).

Giddings, Jeff (2013). *Promoting Justice Through Clinical Legal Education.* Justice Press.

Hamilton, N., Bilionis, L. (2022). Law Student Professional Development and Formation. https://doi.org/10.1017/9781108776325 (01.07.2025).

Stuckey, Roy (2007). Best Practices for Legal Education / by Roy Stuckey and Others.

Tomusk, V. (2006). The Bologna Process and the Enlightenment Project: A Bird's Eye View from the Bottom of the Slope. *European Education,* 38(4), էջ 13–27, DOI: 10.2753/EUE1056-4934400201 (02.07.2025).

Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն
2026, Vol. 2: SPECIAL ISSUE, հունվար, 68-77
https://doi.org/10.46991/BYSU.C/2026.SP2.068

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ԹԵՀՄԻՆԵ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ*, ԱՆԻ ԽԵՉՈՅԱՆ**
Հյուսիսային համալսարան

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է իրավաբանական կլինիկայի գործունեության հիմնախնդիրների և դրանց հաղթահարմանն ուղղված գործուն մեխանիզմների ներդրման անհրաժեշտությամբ բարձրագույն կրթության համակարգում, որոնք կարող են հիմնված լինել եվրոպական իրավաբանական կլինիկաների գործունեության լավագույն փորձի վրա, որն էլ ուսումնասիրվել է սույն հետազոտության մեջ:
Հետազոտության նպատակն է իրավաբանական կլինիկաների գործունեության հիմնախնդիրների բացահայտումը և դրանց լուծմանն ուղղված մեխանիզմների առաջարկումը ՀՀ–ում իրավաբանական կլինիկական կրթության հեռանկարային զարգացման համատեքստում:
Հեղինակային արդյունքները հանգում են հետազոտության ներածության մեջ առաջ քաշված հետևյալ եզրահանգումների հիմնավորմանը.
1. ՀՀ բուհերում իրավաբանական կլինիկական դասընթացները նպատակահարմար է նախատեսել ուսումնական պլանով, ինչը կնպաստի ավելի արդյունավետ ընթացակարգերով և մեծ թվով ուսանողների ներգրավմանը, ինչպես նաև իրավաբանական կլինիկական կրթության ծրագրերում,

* **Թեհմինե Բաղդասարյան –** Հյուսիսային համալսարանի իրավաբանական կլինիկայի ղեկավար
Техмине Багдасарян – заведующая юридической клиникой Северного университета
Tehmine Baghdasaryan – head of the legal clinic of Northern University
Էլ. փոստ՝ tehminebaghdasaryan2@gmail.com ORCID ID: https://orcid.org/0009-0007-8732-5877
** **Անի Խեչոյան –** իրավաբանական գիտությունների թեկնածու, Հյուսիսային համալսարանի իրավագիտության և հասարակագիտական առարկաների ամբիոնի վարիչ
Ани Хечоян – кандидат юридических наук, заведующая кафедрой права и социальных наук Северного университета
Ani Khechoyan – Candidate of Legal Sciences, Head of the Chair of Law and Social Science Subjects of the Northern University
Էլ. փոստ՝ anykhechoyan@gmail.com ORCID ID: https://orcid.org/0009-0008-0830-6473

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 31.07.2025
Գրախոսվել է՝ 17.10.2025
Հաստատվել է՝ 13.01.2026
© The Author(s) 2026

2. բուհերի իրավաբանական կլինիկաները պետք է ֆինանսական կամ այլ բնույթի աջակցություն ստանան պետությունից, ինչը կհանգեցնի կլինիկաների գործունեության խթանմանը, պետության և բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև կապի ամրապնդմանը:
Հետազոտության տեսական արդյունքները կարող են կիրառվել իրավաբանական կլինիկական կրթության հիմնախնդիրներին նվիրված տեսական հետազոտություններում, ինչպես նաև իրավաբանական կլինիկաների վերաբերյալ օրենսդրության մշակման գործընթացում:

Բանալի բառեր – *իրավաբանական կլինիկական կրթություն, անվճար իրավաբանական օգնություն, հանրության խոցելի խմբեր, սիմուլյացիոն կլինիկաներ, «Իրավունք բոլորի համար» ծրագիր իրականացնող կլինիկաներ, փորձի վրա հիմնված կլինիկաներ, արդարադատության մատչելիություն*

Հետազոտության մեջ առաջ են քաշվում հետևյալ թեզերը՝ իրավաբանական կլինիկական կրթությունը ՀՀ բուհերում պետք է լինի ուսումնական պլանով նախատեսված պարտադիր դասընթաց, ինչը կնպաստի ավելի մեծ թվով ուսանողների ներգրավմանը իրավաբանական կլինիկական կրթական ծրագրերում, պետությունը պետք է ֆինանսական և այլ առումներով աջակցի բուհերի իրավաբանական կլինիկաների գործունեությանը, ինչը կնպաստի վերջիններիս զարգացմանը:

Արդիականության հիմնավորումը: Իրավաբանական կլինիկաների արդյունավետ գործունեությունը էապես կարող է նպաստել արդարադատության հասանելիությանը, որը հասարակության անկյունաքարերից մեկն է և կարևոր դեր է կատարում օրենքի գերակայության հաստատման, մարդու իրավունքների պաշտպանության գործում: Չնայած Հայաստանի Հանրապետությունում իրականացված բարեփոխումներին իրավական և սոցիալական ոլորտներում՝ արդարադատությանը լիարժեք և հավասար հասանելիությունը շարունակում է խնդիր լինել հասարակության խոցելի խմբերի համար: Մեր հանրապետությունում անհատների և հասարակության լայն հատվածի համար դեռևս օրակարգային են արդարադատության հասնելու հարցում ֆինանսական ռեսուրսների, իրավական գիտելիքների, արդյունավետ իրավական աջակցության խնդիրները: Այս համատեքստում իրավաբանական կլինիկական կրթությունը հանդես է գալիս որպես նշված մարտահրավերներին դիմակայելուն կոչված արդյունավետ մեխանիզմ, ինչով էլ պայմանավորված է հետազոտության թեմայի ուսումնասիրման արդիականությունը: Այս իմաստով՝ ՀՀ իրավաբանական ֆակուլտետների շրջանակներում գործող իրավաբանական կլինիկաները ոչ միայն լրացուցիչ կրթական հնարավորություններ են ստեղծում ուսանողների համար, այլև իրականացնում են կարևոր սոցիալական գործառույթներ՝ կապող օղակ հանդիսանալով համալսարանների, պետության և հասարակության միջև: Իրավաբանական կլինիկաները հնարավորություն են

տալիս ուսանողներին ներգրավելու իրավական պրակտիկ գործերում և իրավաբանական խորհրդատվություն տրամադրելու այն մարդկանց, ովքեր հնարավորություն չունեն վճարովի իրավաբանական խորհրդատվության կամ ներկայացուցչության: Միավորելով տեսությունը պրակտիկայի հետ՝ իրավաբանական կլինիկաները օգնում են ուսանողների մեջ ձևավորելու գործնական հմտություններ և մասնագիտական էթիկա՝ միաժամանակ օժանդակելով արդարադատության մատչելիությանը հասարակության լայն հատվածի համար:

Նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է եղել ներկայացնել իրավաբանական կլինիկայի գործունեության հիմնախնդիրները բարձրագույն կրթության համակարգում:

Հետազոտության խնդիրն է եղել առաջարկել վերը նշված հիմնախնդիրների լուծման ուղիներ՝ հաշվի առնելով եվրոպական իրավաբանական կլինիկական կրթության լավագույն փորձը:

Մեթոդները: Հետազոտության ընթացքում օգտագործվել են ճանաչման համագիտական դիալեկտիկական մեթոդը, նաև մասնավոր մեթոդները, առաջին հերթին՝ համակարգային վերլուծության, համեմատական մեթոդները:

Միջազգային փորձը: Եվրոպական մի շարք երկրներում գործում են իրավաբանական կլինիկաների ցանցեր, որոնք օժանդակություն են ստանում պետությունից և հասարակությունից, այլ երկրներում կլինիկաները բախվում են նյութական և մարդկային ռեսուրսների պակասի, կլինիկաների ոչ հստակ իրավական կարգավիճակից բխող խնդիրների: Այս խնդիրները խոչընդոտում են ոչ միայն վերջիններիս կողմից հանրության խոցելի խմբերին արդյունավետ իրավաբանական օգնության տրամադրումը, այլև իրավաբանական կլինիկաների հնարավորությունը՝ լիարժեքորեն իրացնելու իրենց ներուժը որպես երկրում իրավաբանական կրթությունը զարգացնող կենտրոններ:

Պետք է նշել, որ եվրոպական երկրներում իրավաբանական կլինիկական կրթությունը ունի էական առանձնահատկություններ ամերիկյան կլինիկական կրթության համեմատությամբ: Ի տարբերություն ամերիկյան մոդելի, որում շեշտը դրվում է իրական գործերի վրա հիմնված կլինիկական կրթության (real-case law clinics) վրա, բազմաթիվ եվրոպական երկրներ ունեն ինտեգրված միասնական կլինիկական կրթության ուսումնական ծրագիր, որում շեշտը դրվում է ոչ միայն մտացածին գործերի ուսումնասիրության, այլև հետազոտությունների իրականացման վրա՝ իրական գործերի քննարկմամբ: Մի շարք երկրներում, ինչպիսիք են, օրինակ, Չեխիան, Ալբանիան, իրավաբանական կլինիկաները հիմնականում կենտրոնացած են կրթական ծրագրերի իրականացման վրա[1]: Ի հակադրություն դրա՝ իրավաբանական կլինիկաների գործունեությունը Միացյալ Նահանգներում, Չեռնոգորիայում. Խորվաթիայում,

[1] Օրինակ՝ Ալբանիայում իրավաբանական կլինիկական կրթությունը ձևավորվել և կայացել է ամերիկյան հիմնադրամների միջոցով, ինչպիսիք են Սորոսի հիմնադրամը, Ֆորդի հիմնադրամը և այլն: Տե՛ս Clinical Legal Education in Central and Eastern Europe: Selected Case Studies.DOI:

Լեհաստանում առավելապես ուղղված է հասարակության խոցելի խմբերի իրավական օժանդակությանը: Եվրոպական տարբեր երկրներում հասարակության տարբերակված վերաբերմունքը խոցելի խմբերի նկատմամբ ևս պայմանավորում է իրավաբանական կլինիկական կրթության տարբեր ձևաչափերի ընտրությունը:

Աշխարհում իրավաբանական կլինիկաները տարբերվում են իրենց կառուցվածքով, գործունեության մեթոդաբանությամբ և ուղղություններով: Իրավաբանական կլինիկաների հիմնական մոդելները հետևյալն են՝ իրական հաճախորդների ծառայություններ մատուցող իրավաբանական կլինիկաներ, սիմուլյացիոն կլինիկաներ, փորձի վրա հիմնված կլինիկաներ:

Իրավաբանական կլինիկական կրթությունը իրականացվում է նաև իրավաբանական ֆակուլտետների շրջանակներից դուրս, օրինակ՝ իրավաբանական ընկերություններում՝ հիմնված համագործակցության պայմանագրերի վրա:

Իրավաբանական կլինիկական կրթության կարևոր մասն են նաև այսպես կոչված «Իրավունք բոլորի համար» ծրագիր իրականացնող կլինիկաները, որոնց գործունեությունը կենտրոնացված է հանրության իրավաբանական կրթության և տեղեկացվածության զարգացման վրա[2]:

Թեև համարվում է, որ իրավաբանական կլինիկաների գործունեությունը ուղղված է ուսանողներին գործնական հմտություններով օժտելուն, սակայն իրավագետների մի մասը ընդգծում է իրավաբանական կլինիկաների ավելի կարևոր նշանակությունը՝ որպես արդարադատության մատչելիությանը նպաստող մեխանիզմներ: Ինչպես նշում է իրավագետ Ս. Բարտոլին, թեև Բոլոնիայի հռչակագիրը ուղղակիորեն չի նշում համալսարանների սոցիալական ուղղվածության մասին, դրա ընդունմանը հաջորդած գիտական կոնֆերանսներում ընդգծվում է սոցիալական պատասխանատվության սկզբունքը, որը համալսարանները իրականացնում են իրավաբանական կլինիկական կրթության միջոցով[3]:

Եվրոպական կլինիկական կրթության փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ինչպես աշխարհում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական կլինիկական կրթության համակարգը կարիք ունի կառուցվածքային վերակազմավորման, որը վերաբերում է և՛ իրավաբանական կլինիկաների իրավական կարգավիճակին վերաբերող նորմերի ավելի համա-

---

10.4324/9781003348399-11Marianna Rostas, Barbara Namyslowka. Oxford Academic. November 10, p. 11. academic.oup.com

[2] Տե՛ս Journal of Educational and Social Research, www.richtmann.org, Vol 15, No 1, January 2025, Clinical Legal Education: The Role and Challenges in Enhancing Access to Justice.https:doi.org/10,36941/lesr-2025-0016 Nadia Rusi1 Ilda Kovaçi Melo2 file, p. 42, (accessed on 26.03.2025):

[3] Տե՛ս **Bartoli, C.** (2016). Legal Clinics in Europe: For a Commitment of Higher Education in Social Justice. Diritto&QuestioniPubbliche, Special Issue, May 2016, p. 22, https://iris.unipa.it/handle/10447/355007(access 26.03.2025).

կողմանի սահմանմանը, և՛ կլինիկաների ֆինանսական աջակցության ավելացմանը, և՛ կլինիկայի աշխատանքներին մասնակցելու հարցում բուհերի ուսանողների ու դասախոսների մոտիվացմանը:

Մեկ այլ կարևոր խնդիր է իրավաբանական կլինիկաների համագործակցությունը այլ իրավաբանական կլինիկաների, պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների, հեղինակավոր իրավաբան-մասնագետների հետ, ինչը կարող է զգալիորեն ավելացնել կլինիկաների ոչ միայն գործնական հմտությունները, այլև հետազոտական կարողություններ զարգացնելու ներուժը: Օրինակ՝ իրավաբանական կլինիկաների ցանցի ստեղծումը, ինչպիսին է «Կլինիկական իրավաբանական կրթության եվրոպական ցանցը», նպաստում է եվրոպական իրավաբանական կլինիկաների միջև լավագույն փորձի փոխանակմանը և մեծացնում իրավաբանական կլինիկաների գործունեության արդյունավետությունը:

Գործնական մարտահրավերներ

Իրավաբանական կլինիկական կրթության համար էական խոչընդոտ է նաև կլինիկաների, այսպես կոչված, կենսունակության հարցը: Կլինիկաների գործունեության ընթացքում հիմնական խնդիրը այս առումով մնում է դրանց գործունեության ֆինանսավորման հարցը: Կլինիկաների մեծ մասի բյուջեն հիմնականում կախված է համալսարանների բյուջեներից և հաճախ անբավարար է կլինիկական կրթության բոլոր ծախսերը հոգալու համար: Խորվաթիայում, օրինակ, համալսարանների հանրային ֆինանսավորման մի մասը ուղղվում է համալսարանական կլինիկաների աջակցությանը[4]: Այլ խոսքով՝ իրավաբանական կլինիկաները պետք է դիվերսիֆիկացնեն իրենց ռեսուրսների ձեռքբերման աղբյուրները և ներգրավեն ֆինանսավորման նոր աղբյուրներ: Դա կնպաստի ոչ միայն իրավաբանական կլինիկաների գործունեության հուսալիությանը, այլև կլինիկաների շահառուների շրջանում կլինիկաների գործունեության հանդեպ վստահության ամրապնդմանը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը իրավաբանական կլինիկաների գործունության մեջ կարող է կրճատել վերջիններիս ծախսերը՝ միաժամանակ ընդլայնելով կլինիկաների կողմից տրամադրվող անվճար իրավաբանական օգնության շրջանակները:

ՀՀ օրենսդրության վերլուծություն

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ-ում անվճար իրավաբանական օգնությունը ներառում է՝ 1) խորհրդատվությունը՝ հայցադիմումների, դիմումների, բողոքների և այլ իրավաբանական բնույթի դա-

---

[4] Տե՛ս Clinical Legal Education in Croatia. From providing legal assistance to the poor to practical education of students. DOI:10,19164/ijcle.v19io.36 Barbara Preloznjak. 2014, p. 5, researchgate.net (access 26.03.2025):

տավարական փաստաթղթերի կազմումը, ներառյալ՝ իրավաբանական տեղեկատվության տրամադրումը, ներկայացուցչությունը կամ պաշտպանությունը՝ քրեական, քաղաքացիական, վարչական կամ սահմանադրական գործերով: Օրենքի նշված հոդվածի իմաստով՝ ներկայացուցչությունը կամ պաշտպանությունը իրականացվում է քրեական գործով մինչդատական վարույթում, Հայաստանի Հանրապետությունում առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում, ինչպես նաև ՀՀ Սահմանադրական դատարանում[5]:

Հայաստանի Հանրապետությունում անվճար իրավաբանական օգնության տրամադրման ընդհանուր կարգը սահմանվում է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով, որի 41–րդ հոդվածի իմաստից բխում է, որ անվճար իրավաբանական օգնությունը տրամադրվում է օրենքով նախատեսված գործերով՝ հանրային պաշտպանության իրականացման միջոցով, իսկ ՀՀ Փաստաբանների պալատի խորհրդի 13.01.2023 թվականի թիվ 2/10-Լ որոշմամբ սահմանված կարգի 8-րդ գլխի 80-րդ կետի համապատասխան՝ խորհրդատվության՝ բանավոր խորհրդատվության և իրավաբանական բնույթի փաստաթղթերի կազմման եղանակով:

Շահառուներին տրամադրվող անվճար իրավաբանական օգնությունը Հանրային պաշտպանի գրասենյակը կարող է կազմակերպել նաև՝ Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների և փաստաբանական ակադեմիայի կողմից կազմակերպվող իրավաբանական կլինիկաների ուսանողների (ունկնդիրների) օժանդակության միջոցով: Նշված կարգի համաձայն՝ հանրային պաշտպանի կողմից անվճար իրավաբանական օգնության տրամադրման գործընթացին փաստաբանական ակադեմիայի ունկնդիրները ներգրավվում են հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի և փաստաբանական ակադեմիայի կառավարման խորհրդի կողմից համատեղ սահմանած կարգին համապատասխան, իսկ բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները՝ համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատության և ՀՊԳ փոխհամաձայնությամբ: Բարձրագույն ուսումնական հաստատությունների իրավաբանական կլինիկաներում ներգրավված ուսանողների կողմից շահառուներին անվճար իրավաբանական օգնության տրամադրումը կազմակերպվում է տվյալ ուսումնական հաստատության նախաձեռնությամբ: Շահառուներին իրավաբանական օգնության տրամադրմանը կարող են ներգրավվել իրավագիտության մասնագիտության բակալավրի՝ դիպլոմավորված մասնագետի ծրագրով վերջին կիսամյակում և մագիստրատուրայում սովորող ուսանողները[6]: Ուսանողների օժանդակությամբ շահառուներին անվճար իրավաբանական օգնությունը տրամադրվում է ՀՊԳ ղեկավարի կողմից նշանակված հանրային պաշտպանի կամ փաստաբանի հսկողությամբ:

---

[5] Տե՛ս ՀՀ օրենքը «Փաստաբանության մասին», ընդունված է 2004 թվականի դեկտեմբերի 14-ին, https://www.arlis.am/documentview.aspx?docid=110603 (access 25.03.2025):

[6] https://hpg.am/images/slider/7653e0b91c3d357d25f8fd1e8ffdad8c.pdf (access 10.02.2025)

Թեև մեր հանրապետությունում գոյություն չունի հատուկ օրենք անվճար իրավաբանական օգնության մասին, դրա անհրաժեշտությունը կա, այն իմաստով, որ դրանում կհստակեցվեն և կմանրամասնվեն անվճար իրավաբանական օգնության տրամադրման կարգը և պայմանները, միաժամանակ առավել հստակ և մանրամասն իրավակարգավորման կենթարկվեն պետական մարմինների կողմից իրավաբանական կլինիկաների գործունեության ֆինանսավորման կարգն ու պայմանները, դրանց գործունեության նկատմամբ պետության վերահսկողության մեխանիզմները, ինչը կարող է նպաստել հասարակության տարբեր թիրախային խմբերի համար ոչ միայն անվճար իրավաբանական օգնության մատչելիության ապահովմանը, այլև իրավաբան-ուսանողների մասնագիտական պրակտիկ հմտությունների զարգացմանը և հասարակության լայն շերտերի համար իրավաբանական որակյալ օգնության մատչելիության ապահովմանը:

Եզրակացություն

Պրակտիկայի, տեսական դիրքորոշումների և օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդրորեն իրավաբանական կլինիկաների կարգավիճակի սահմանումը կարևոր է այնքանով, որ ներկայումս մեր հանրապետությունում անվճար իրավաբանական օգնության՝ հասարակության ոչ բոլոր սոցիալական խմբերի համար մատչելիության պայմաններում իրավաբանական կլինիկաների գործունեությունը ձեռք է բերում հատկապես սոցիալական և իրավական կարևոր նշանակություն: Այս համատեքստում հարկ է վկայակոչել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասը, որի իմաստով՝ հանրային պաշտպանի գրասենյակը, բացառությամբ քրեական գործով կասկածյալին կամ մեղադրյալին իրավաբանական օգնություն տրամադրելու, ինչպես նաև սույն հոդվածի 6-րդ մասում նշված դեպքերի, սույն հոդվածով նախատեսված անվճար իրավաբանական օգնությունը տրամադրում է բացառապես որոշակի սահմանափակ կատեգորիայի անձանց, որոնք են Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամները, 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամները, դատապարտյալները, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 0-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամները, Հայրենական մեծ պատերազմի և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակիցները, գործազուրկները, միայնակ բնակվող կենսաթոշակառուները, առանց ծնողական խնամքի մնացած երեխաները, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք, փախստականները և այլն: Ստացվում է, որ անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքից զրկվում են

սոցիալական խմբերին պատկանող այն քաղաքացիները, ովքեր չեն բավարարում Օրենքի վերը նշված հոդվածով սահմանված պայմաններին՝ որպես պետության կողմից տրամադրվող անվճար իրավաբանական օգնության շահառուներ, և ցածր եկամուտ ունենալու պայմաններում չեն կարող օգտվել վճարովի իրավաբանական ծառայություններից:

Հյուսիսային համալսարանում ևս իրավագիտության ֆակուլտետի շրջանակներում գործում է իրավաբանական կլինիկա, որի գործունեության նպատակն է ապահովել ուսանողներին պրակտիկ իրավաբանին անհրաժեշտ գիտելիքներով, կարողություններով և հմտություններով, նպաստել համալսարանի աշխատակիցների, սովորողների և արտաքին շահակիցների իրավագիտակցության բարձրացմանը, ապահովել ՀՀ սոցիալապես անապահով քաղաքացիներին անվճար իրավաբանական ծառայությունների մատուցումը:

Պետք է նշել, որ համալսարանում իրավաբանական կլինիկական դասընթացները ուսումնական ծրագրի պարտադիր բաղադրիչ չեն, ինչը հանգեցնում է այն բանին, որ ուսումնական տարվա ընթացքում հնարավոր չի լինում ապահովել զգալի թվով ուսանողների կայուն և ակտիվ մասնակցություն համալսարանի իրավաբանական կլինիկայի աշխատանքներին: Օրինակ՝ 2024-2025 ուսումնական տարվա կտրվածքով համալսարանի իրավաբանական կլինիկայի աշխատանքներում ներգրավված է եղել 4-10 ուսանող, ովքեր կլինիկայի համապատասխան փաստաբան դասախոսի մասնակցությամբ քաղաքացիներին անվճար իրավաբանական խորհրդատվություն են տրամադրել անձի իրավունքի տարբեր ոլորտներում (հիմնականում՝ քաղաքացիական, վարչական, աշխատանքային). կլինիկական կրթական ծրագրերի շրջանակում ընդհանուր առմամբ քննարկվել է 10 գործ:

Առաջարկություններ

Ամփոփելով իրավաբանական կլինիկական կրթության եվրոպական փորձը, ՀՀ օրենսդրության՝ իրավաբական կլինիկաներին առնչվող դրույթների վերլուծությունը, Հյուսիսային համալսարանում իրավաբանական կլինիկական կրթական ծրագրերի իրականացման փորձը՝ իրատեսական է թվում ՀՀ–ում իրավաբանական կլինիկական կրթական ծրագրերի զարգացման նպատակով առաջարկել հետևյալը.

1. ՀՀ բուհերի զարգացման ռազմավարական ծրագրերում նախատեսել միջոցառումներ և քայլեր ոչ միայն ընդհանրապես բուհերի, այլև դրանց իրավաբանական ֆակուլտետների կլինիկաների զարգացման մասով, որոնք կարող են մասնավորապես ենթադրել հետևյալը՝ իրավաբանական կլինիկայի գործունեության պլանավորում տարեկան կտրվածքով, դրան համապատասխան՝ կլինիկայի բյուջեի կազմում, կլինիկական ծրագրերի իրականացման նպատակով անհրաժեշտ ֆինանսական, նյութական և մարդկային ռեսուրսների ներգրավման աղբյուրների, կլինիկական ծրագրերի իրականացման

նպատակով հնարավոր գործընկերների ներգրավում ոչ միայն ՀՀ բուհերի հետ համագործակցության շրջանակներում, այլև արտասահմանյան բուհերի, որը կարող է ենթադրել համագործակցության նաև այլ ոլորտներ, այդ թվում՝ իրականացվող իրավաբանական կլինիկական ծրագրերի բովանդակության վերաբերյալ տեղեկատվության փոխանակում, համատեղ կլոր սեղանների, տարբեր ձևաչափով քննարկումների իրականացում:

2. ՀՀ-ում Եվրոպական երկրների օրինակով ստեղծել իրավաբանական կլինիկաների ցանց, ինչը կարող է նպաստել կլինիկաների միջև փոխգործակցության ամրապնդմանը, կլինիկական կրթական ծրագրերի իրականացման լավագույն փորձի փոխանակմանը:

ТЕХМИНЕ БАГДАСАРЯН, АНИ ХЕЧОЯН – ***Проблемы и перспективы развития юридических клиник в системе высшего образования.–*** Актуальность исследования определяется существующими проблемами в деятельности юридических клиник и необходимостью внедрения эффективных механизмов их преодоления в системе высшего образования. Эти механизмы могут быть основаны на лучших европейских практиках юридических клиник, которые были изучены в ходе данного исследования.
Цель исследования — выявить проблемы, связанные с деятельностью юридических клиник, и предложить механизмы их решения в контексте перспективного развития юридического клинического образования в Республике Армения.
Результаты исследования позволили авторам обосновать выдвинутые во введении гипотезы, а именно:
1.Курсы по юридическим клиникам в университетах РА должны быть обязательными в учебных программах для мотивации большего количества студентов к участию в деятельности клиник.
2.Юридические клиники при университетах должны получать финансовую или иную поддержку со стороны государства, что усилит связь между государством и высшими учебными заведениями.
Теоретические результаты исследования могут быть использованы в научных работах, посвященных проблемам юридического клинического образования, а также в процессе совершенствования законодательства, касающегося юридических клиник в системе высшего образования Республики Армения.

Ключевые слова: *юридическое клиническое образование, бесплатная юридическая помощь, уязвимые группы населения, имитационные клиники, клиники, ориентированные на стажировку, клиники «Уличное право», доступ к правосудию.*

TEHMINE BAGHDASARYAN ANI KHECHOYAN – ***Problems and Development Prospects of the Legal Clinic in the Higher Education System.–*** The relevance of the research is determined by the problems of legal clinic activities and the need to introduce effective mechanisms aimed at overcoming them in the higher education system, which can be based on the best practices of European legal clinics, which were studied in this research.
The purpose of the research is to identify the problems related to the activities of legal clinics and propose mechanisms aimed at solving them in the context of the prospective development of legal clinical education in the Republic of Armenia.
The authors' results of the research lead to the substantiation of the hypotheses put forward in the introduction of the research, that:
1. legal clinical courses in the RA universities should be mandatory in the curriculum for motivating more students to get involved in the activities of the clinic,

2. legal clinics of universities should receive financial or other support from the state, which will strengthen the relationship between the state and the higher educational institutions.
The theoretical results of the research can be used in the theoretical studies dedicated to the problems of legal clinical education, as well as in the process of improving the legislation regarding the legal clinics in the system of higher education of RA.

Key words: *legal clinical education, free legal aid, vulnerable groups of the society, Simulation Clinics, Externship-Oriented Clinics, Street Law clinics, access to justice*.

References

HH oʿrənkʿə «Pastabanutʿyan masin», əndunvac e 2004 tʿvakani dektemberi 14-in https://www.arlis.am/documentview.aspx?docid=110603

Clinical Legal Education in Central and Eastern Europe: Selected Case Studies. DOI: 10.4324/9781003348399-11Marianna Rostas, Barbara Namyslowka. Oxford Academic. November 10.p.11.academic.oup.com

Journal of Educational and Social Research www.richtmann.org Vol 15 No 1 January 2025 Clinical Legal Education: The Role and Challenges in Enhancing Access to Justice. https:doi.org/10,36941/lesr-2025-0016 Nadia Rusi1 Ilda Kovaçi Melo2 file, p. 42.

Bartoli, C. (2016). Legal Clinics in Europe: For a Commitment of Higher Education in Social Justice. Diritto&QuestioniPubbliche, Special Issue, May 2016 p.22, https://iris.unipa.it/handle/10447/355007

Clinical Legal Education in Croatia. From providing legal assistance to the poor to practical education of students. DOI:10,19164/ijcle.v19io.36 Barbara Preloznjak.2014.p.5, researchgate.net

Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն
2026, Vol. 2: SPECIAL ISSUE, հունվար, 78-89
https://doi.org/10.46991/BYSU.C/2026.SP2.078

ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ՊՐՈԳՐԵՍ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

ԱՆԱՀԻՏ ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ*, ԼԻԼԻԹ ՄՈՒՐԱԴՅԱՆ**
«Պրոգրես» համալսարան

Հոդվածում քննվում են Գյումրիի «Պրոգրես» համալսարանի իրավաբանական կլինիկայի կրթական փորձը և առանձնահատկությունները: Ուսումնասիրվում են կլինիկայի՝ որպես կրթական և սոցիալական հաստատության դերը, նրա գործառույթները, գործունեության մեթոդները և ներդրումը ուսանողների գործնական պատրաստվածության մեջ: Հատուկ ուշադրություն է դարձվում կլինիկայի կրթական և սոցիալական գործառույթներին, ինչպես նաև դրա դերին՝ ապագա իրավաբանների մասնագիտական զարգացման գործում:

Հետազոտության արդիականություն: Ժամանակակից իրավաբանական կրթությունը պահանջում է ոչ միայն տեսական գիտելիքների յուրացում, այլև գործնական հմտությունների զարգացում, որոնք անհրաժեշտ են ապագա մասնագետների համար: Հայաստանում իրավական համակարգի բարեփոխումները և հասարակության մեջ իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը պահանջում են բարձր որակավորում ունեցող իրավաբանների պատրաստում: Այս համատեքստում իրավաբանական կլինիկաները դառնում են կրթական կարևոր հաստատություններ, որոնք միավորում են տեսությունը պրակտիկայի հետ:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել «Պրոգրես» համալսարանի իրավաբանական կլինիկայի՝ որպես կրթական և սոցիալական

* **Անահիտ Ստամբոլցյան** – «Պրոգրես» համալսարանի իրավաբանական ֆակուլտետի դեկան, դոցենտ
Анаит Стамболцян – декан юридического факультета университета «Прогресс», доцент
Anahit Stamboltsyan – Dean of the Law Faculty of "Progress" University, associate professor
astamboltsyan@yandex.ru https://orcid.org/0009-0003-8139-4805
** **Լիլիթ Մուրադյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, «Պրոգրես» համալսարանի իրավաբանական ֆակուլտետի դասախոս
Лилит Мурадян – кандидат юридических наук, преподаватель юридического факультета университета «Прогресс»
Lilit Muradyan – Candidate of Legal Sciences, Lecturer at the Faculty of Law of “Progress” University
muradyan.l@yandex.ru https://orcid.org/0009-0007-0248-4044

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 30.07.2025
Գրախոսվել է՝ 09.01.2026
Հաստատվել է՝ 13.01.2026
© The Author(s) 2026

հաստատության դերը և նշանակությունը: Հատկապես ուշադրության են արժանացել կլինիկայի կրթական և սոցիալական գործառույթները, ինչպես նաև դրանց ներդրումը ուսանողների գործնական պատրաստվածության և հասարակությանը անվճար իրավաբանական օգնություն ցուցաբերելու գործում:

Հետազոտության հեղինակային արդյունքները: Հետազոտությունը ցույց է տվել, որ «Պրոգրես» համալսարանի իրավաբանական կլինիկան հաջողությամբ իրականացնում է և՛ կրթական, և՛ սոցիալական գործառույթներ: Ուսանողները ձեռք են բերում գործնական հմտություններ, ինչպիսիք են հարցազրույց վարելը, փաստաթղթեր պատրաստելը և իրավական խորհրդատվություն տրամադրելը: Միաժամանակ կլինիկան ապահովում է անվճար իրավաբանական օգնություն սոցիալապես անապահով խմբերին, ինչը նպաստում է հասարակության մեջ իրավունքների պաշտպանության մակարդակի բարձրացմանը:

Արդյունքների տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքները ունեն և՛ տեսական, և՛ գործնական նշանակություն: Տեսական առումով դրանք նպաստում են իրավաբանական կրթության մեջ կլինիկական մոդելի դերի և նշանակության բարձրացմանը: Գործնական առումով կլինիկայի փորձը կարող է ծառայել որպես օրինակ այլ բուհերի համար, որոնք ձգտում են բարելավել իրավաբանական կրթության որակը և նպաստել հասարակության մեջ իրավունքների պաշտպանությանը:

Բանալի բառեր – *իրավաբանական կլինիկա, «Պրոգրես» համալսարան, հասարակական կազմակերպություն, կրթական գործառույթ, սոցիալական գործառույթ, ուսանողներ, գործնական հմտություններ, փաստաթղթերի մշակում*

Ներածություն

Ժամանակակից իրավաբանական կրթությունը պահանջում է ոչ միայն տեսական գիտելիքների յուրացում, այլև գործնական հմտությունների զարգացում, որոնք անհրաժեշտ են ապագա մասնագետների համար: Այս համատեքստում իրավաբանական կլինիկաները դառնում են կրթական կարևոր հաստատություններ, որոնք միավորում են տեսությունը պրակտիկայի հետ: Այս հոդվածը նվիրված է Հայաստանում իրավաբանական կլինիկաների դերի և նշանակության ուսումնասիրությանը, մասնավորապես՝ «Պրոգրես» համալսարանի իրավաբանական կլինիկայի փորձին:

Հետազոտության հիպոթեզի ձևակերպում: Հետազոտության հիպոթեզն այն է, որ իրավաբանական կլինիկաները ոչ միայն նպաստում են ուսանողների գործնական հմտությունների զարգացմանը, այլև կարևոր դեր են խաղում սոցիալապես անապահով խմբերին անվճար իրավաբանական օգնություն ցուցաբերելու գործում: «Պրոգրես» համալսարանի իրավաբանական կլինիկան այս գործընթացի հաջող օրինակ է:

Հետազոտության արդիականության հիմնավորում: Իրավաբանական կրթության մեջ գործնական հմտությունների զարգացումը կարևոր է իրավական համակարգի բարեփոխման և հասարակության մեջ իրավունքների

պաշտպանության անհրաժեշտության, ինչպես նաև որակյալ իրավաբանների պատրաստման համար:

Կլինիկական կրթությունը հնարավորություն է տալիս ուսանողներին ձեռք բերելու գործնական փորձ և միաժամանակ նպաստելու իրավական խնդիրների լուծմանը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել «Պրոգրես» համալսարանի իրավաբանական կլինիկայի՝ որպես կրթական և սոցիալական հաստատության դերը և նշանակությունը: Հետազոտության հիմնական խնդիրներն են.

1. Վերլուծել կլինիկայի կրթական և սոցիալական գործառույթները:
2. Ուսումնասիրել կլինիկայի գործունեության մեթոդները և դրա ներդրումը ուսանողների գործնական պատրաստվածության մեջ:
3. Բացահայտել կլինիկայի դերը սոցիալապես անապահով խմբերին անվճար իրավաբանական օգնություն ցուցաբերելու գործում:

Օգտագործված մեթոդներ: Հետազոտության ընթացքում օգտագործվել են հետևյալ մեթոդները.

վերլուծական՝ կլինիկայի գործառույթների և դերի ուսումնասիրության համար,

համեմատական մեթոդ՝ Հայաստանում և միջազգային փորձի համատեքստում կլինիկական կրթության առանձնահատկությունները բացահայտելու համար,

էմպիրիկ մեթոդ՝ ուսանողների և դասախոսների հետ հարցազրույցների և դիտարկումների միջոցով կլինիկայի գործունեության արդյունավետությունը գնահատելու համար:

Գործնականում չկա կյանքի կամ մարդկային գործունեության ոլորտ, որտեղ անհրաժեշտ չլինի իմանալ և կիրառել որոշակի իրավական նորմեր: Անկախ այն բանից՝ մենք խոսում ենք աշխատանքի կամ ուսման, ապրանքներ գնելու կամ վաճառելու, ծառայություններ մատուցելու, պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների հետ կապ հաստատելու, սոցիալական նպաստներ ստանալու և մարդկային գործունեության այլ ոլորտների մասին՝ իրավաբանի որակյալ օգնությունը կարող է պահանջվել ամենուր:

Այսօր իրավաբանական կլինիկան իրավաբանական կրթության այն եզակի հաստատություններից է, որը զարգացնում է ուսանողի մասնագիտական հմտությունները՝ որպես ապագա իրավաբանի:

Իրավաբանական կլինիկայի առանձնահատկությունն այն է, որ այն ուսանողներին թույլ է տալիս ըմբռնել իրավաբանի սոցիալական դերը, օգնում է նրանց տիրապետելու մասնագիտական էթիկային, ինչպես նաև ձեռք բերելու սոցիալապես անապահով մարդկանց հետ աշխատելու փորձ՝ դրանով իսկ ձևավորելով ապագա իրավաբանի անհատականությունը:

«Իրավաբանական կլինիկա» տերմինն այսօր օգտագործվում է երկու իմաստով.

1) որպես կազմակերպչական կառույց,

2) որպես հատուկ կրթական ծրագիր:

Առաջին իմաստով իրավաբանական կլինիկան կառուցվածքային միավոր է, որտեղ ուսանողները զարգացնում են գործնական հմտություններ, սովորում են հարցազրույց վարելու, խորհրդատվություն մատուցելու հմտություններ, հայցադիմումներ, դիմումներ և այլ իրավական փաստաթղթեր կազմելու տեխնիկան:

Երկրորդ իմաստով իրավաբանական կլինիկան հասկացվում է որպես կլինիկական վերապատրաստման ծրագիր, այն է՝ սոցիալական ուղղվածություն ունեցող իրավաբանների մասնագիտական վերապատրաստման կրթական ծրագիր[1]:

Բարձրագույն կրթության առջև դրված խնդիրների լուծման համատեքստում արդիական է դառնում իրավաբանական ֆակուլտետի ուսանողների մասնագիտական գործունեության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ձևավորումը՝ լրացնելով ուսումնական գործընթացի բոլոր փուլերում գործնական հմտությունների բացակայությունը: Բուհում իրավաբանների պրոֆեսիոնալիզմի ձևավորումը պետք է դիտարկել որպես վճռորոշ գործոն այն սերնդի պատրաստման և կրթության գործում, որը պետք է ապրի և աշխատի իրավական պետությունում: Սա նշանակում է, որ փաստաբանն ավելի ու ավելի է դառնում հասարակության ուշադրության առարկան, որին նա կոչված է նվիրաբերելու իր գիտելիքներն ու կարողությունները[2]:

Եթե մի պահ մի կողմ թողնենք տեսությունը, ապա կտեսնենք, որ փորձը ցույց է տալիս, որ այն տեղերում, որտեղ գործում են իրավաբանական կլինիկաներ, ուսանողները հավաստել են, որ այդ աշխատանքը հանդիսացել է իրենց ուսման գործընթացի բարձրակետը: Իրավագիտության տեսական գիտելիքները գործնականում կիրառելը՝ տեսությունը կյանքի կոչելը, հասարակական հարաբերությունների մասին գիտելիքները հարստացնելը, պատասխանատվություն ստանձնելը, այս և այլ պրակտիկ հմտությունների ձեռքբերումը արժևորվում է ուսանողության կողմից:

Վ. Դ. Պերևալովը նշում է, որ իրավաբանական կլինիկաները զգալի դեր են խաղում մասնագիտորեն նշանակալի անհատականությունների, ապագա իրավաբանի որակների ձևավորման գործում, ինչպիսիք են պատասխանատվությունը, հայեցողությունը, կարեկցանքը, մարդուն օգնելու պատրաստակամությունը[3]:

---

[1] Տե՛ս **Акашкина Т.Г., Бышова Д.В.,** Функции юридической клиники// –[էլեկտրոնային աղբյուր]. հասանելի է՝ https://cyberleninka.ru/article/n/funktsii-yuridicheskoy-kliniki/viewer

[2] Տե՛ս **Гайтова Л.Х.-М.** Формирование профессионализма в юридической клинике вуза и его социальная ценность // Право и образование. 2014, № 2, էջ 68:

[3] Տե՛ս **Мычалов А.Н., Коровина И.А., Дуров И.И.** О функциях юридических клиник в России, Вестник Уральского института экономики, управление и права, 2010, էջ 6:

Ինչպես նշվում է իրավական գրականության մեջ, իրավաբանական կլինիկաներն իրականացնում են երկու հիմնական գործառույթ՝ կրթական և սոցիալական:

Այժմ վերլուծենք այդ ասպեկտները: Իրավաբանական կլինիկաները նպաստում են ուսանողների գիտելիքների ավելի խորը յուրացմանը, գործնական հմտությունների ձեռքբերմանը: Բացի այդ, իրավաբանական կլինիկան օգնում է լուծելու մեկ այլ խնդիր՝ կրթական պրակտիկայի խնդիրը: Պրակտիկայի ընթացքում ուսանողը չի մասնակցում կոնկրետ իրավաբանական գործառույթի իրականացմանը, քանի որ նրան չեն վստահում կոնկրետ առաջադրանքներ: Ուսանողներն այս դեպքում ընդամենը մասնագիտական գործունեության դիտորդներ են, ինչը չի հանգեցնում հիմնական մասնագիտական հմտությունների արդյունավետ ձեռքբերմանը: Իսկ իրավաբանական կլինիկան հնարավորություն է տալիս ուսանողների նախնական մասնագիտական կարողությունը զարգացնելու ոչ թե որևէ կազմակերպությունում, այլ հենց բուհում:

Տ. Վ. Խուդոյկինան կարծում է, որ իրավաբանական կլինիկան, որպես իրավաբան ուսանողների վերապատրաստման նորարարական ձև, կազմակերպչական կառույց է, որն ապահովում է կլինիկական իրավաբանական ուսուցում՝ թույլ տալով ուսանողներին ձեռք բերել գործնական (մասնագիտական) հմտություններ «իրական» գործերում և խնդիրներում[4]:

Քաղաքացիների հետ աշխատանքը

Գործնականում կրթական գործառույթի իրականացումն այսպիսի տեսք ունի. կլինիկայում ուսանողի աշխատանքը հաճախորդի (ծրագրային շահառուի) հետ իրականացվում է երկու փուլով.

Առաջին՝ հանդիպման ժամանակ ուսանողը շահառուից միայն տեղեկատվություն է ստանում, նրանից պահանջում ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը, լրացնում է այցելությունների գրանցամատյանը և շահառուի ընդունման քարտը, սահմանում է երկրորդ այցելության ամսաթիվը: Շահառուի հետ առաջին հանդիպման ժամանակ, բացի անհրաժեշտ հարցերի պարզաբանումից, խորհրդատվություն չի տրամադրվում:

Երկրորդ այցելության ժամանակ ուսանողը, ուսումնասիրելով հարցի էությունը, դրա օրենսդրական լուծումը, պատրաստում է անհրաժեշտ փաստաթղթերը և փաստաբանի հետ վերլուծում հարցի բովանդակությունը: Հաստատում ստանալուց հետո միայն ուսանողը կարող է տրամադրել խորհրդատվություն, առաջարկել իր լուծումը, պատրաստված փաստաթղթի նախագիծը: Կարևոր է նշել, որ փաստաբանները չեն տրամադրում պատրաստի լուծումներ, փոխարենը նրանք օգնում են ուսանողներին գտնելու ճիշտ ուղղություն: Այս մոտեցումը խթանում է անկախ մտածողությունը: Ինչպես նշում է

---

[4] Տե՛ս **Худойкина Т. В.** Юридическая клиника как инновационная форма обучения студентов-юристов // Интеграция образования. 2014, т. 18, № 1 (74), էջ 1:

Բլոխը (2004), կլինիկական կրթությունը զարգացնում է ուսանողների վերլուծական հմտությունները և պատասխանատվության զգացումը[5]: Կախված գործի բարդությունից՝ երկրորդ փուլը կարող է ներառել ոչ թե մեկ, այլ մի քանի խորհրդատվություն[6]:

Մեր կարծիքով, միայն տեսական նյութի իմացությունն ուսանողին որակյալ իրավաբան չի դարձնի: Այն իրական շահառուների հետ աշխատանքն է, գործնական խնդիրների լուծումը և քաղաքացիների հետ շփվելու փորձը, որը կհարստացնի ուսանողների տեսական գիտելիքները գործնականում:

Կլինիկայի հիմնադրման պատմություն

Բուհական դիտարկումները, միջազգային փորձի կիրառումն ու Գյումրիի «Պրոգրես» համալսարանի ներդրումները հիմք են հանդիսացել 2003 թ. Գյումրիի «Պրոգրես» համալսարանի իրավաբանական կլինիկայի հիմնադրման համար՝ Ամերիկյան իրավաբանների ընկերակցության (ABA ROLI) աջակցությամբ իրականացնելով որպես փորձնական ծրագիր:

2004 թ. առավել շահավետ և հեռանկարային գործունեություն իրականացնելու համար կլինիկան գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարությունում որպես իրավաբանական անձ՝ հասարակական կազմակերպության կարգավիճակով, ««Ուսանողական իրավաբանական խորհրդատվություն» իրավաբանական կլինիկա» անվամբ[7]:

««ՈւԻԽ» իրավաբանական կլինիկայի» նպատակն է զարգացնել ուսանողի գործնական գիտելիքներն ու հմտությունները, աջակցել ուսանողին ճիշտ պատկերացնել իրավաբանի մասնագիտության դերն ու նշանակությունը:

Կրթական գործառույթ՝ ուսանողների ներգրավման մեխանիզմ

Ուսանողների ընդունելությունը կլինիկա կատարվում է թեստերի և հարցազրույցների միջոցով: Ընդունելությունից հետո 3 ամիս անցնում են փաստաբանական հմտությունների, էթիկայի կանոնների վերաբերյալ դասընթացներ, ինչպես նաև կատարում են գործնական վարժություններ, լուծում խնդիրներ: Դասընթացների փուլը ավարտելուց հետո ուսանողները ստանում են ուսանող-խորհրդատուի կարգավիճակ և հմուտ փաստաբանների օգնությամբ քաղաքացիներին տրամադրում են անվճար իրավաբանական օգնություն: Արդյունքում, ուսանողը կարողանում է լուծել կլինիկա դիմած քաղաքացիների սոցիալական

---

[5] Տե՛ս **Bloch, F. S.** (2004). The Case for Clinical Scholarship. International Journal of Clinical Legal Education, 4, 7-21, – [Էլեկտրոնային աղբյուր], հասանելի է՝ https://www.researchgate.net/publication/307701155_The_case_for_clinical_scholarship

[6] Տե՛ս **Заднепровская М. В.** Юридическая клиника в реализации компетентностного подхода при подготовке юриста. – [Էլեկտրոնային աղբյուր]. – հասանելի է՝ http://elibrary.ru/download/16285226.pdf.

[7] Տե՛ս Գյումրու իրավաբանական կլինիկա. – [Էլեկտրոնային աղբյուր]. հասանելի է՝ http://olp.advocates.am/mod/book/tool/print/index.php?id=61

որոշ խնդիրներ և ձեռք բերած գիտելիքներով ավելի մրցունակ է դառնում աշխատաշուկայում. ըստ Գոլդի և Փլոուդենի (2010)՝ կլինիկաները նպաստում են սոցիալական արդարության խթանմանը[8]:

Կլինիկայում սովորում են համալսարանի երրորդ, չորրորդ կուրսերի և մագիստրատուրայի ուսանողներ:

Իրավաբանական կլինիկայի նախնական ուղղվածությունն ընտրվել է՝ հաշվի առնելով երկրաշարժից հետո Շիրակի մարզում առաջացած խնդիրները հողային, բնակարանային, սեփականության, ժառանգության վերաբերյալ:

Օրենսդրական փոփոխություններից ելնելով՝ կլինիկան ընդլայնեց ուսուցման և խորհրդատվության շրջանակը՝ ընդգրկելով աշխատանքային և ընտանեկան իրավունքների հետ կապված խնդիրների լուսաբանումը և խորհրդատվության տրամադրումը:

«ABA/CEELI» կողմից ֆինանսավորվող «Իրավունք բոլորի համար» ծրագրի շրջանակներում շրջիկ այցելություններ եղան Շիրակի մարզում, որի արդյունքում սեմինարներ և խորհրդատվություն կազմակերպվեցին քառասուն համայնքներում և դպրոցներում:

2013-2016 թթ. կլինիկայի կրթությունը և խորհրդատվությունը նպատակաուղղվեցին Մարդու իրավունքների հետ կապված խնդիրների լուծմանը: Կլինիկայի ուսանողները խորհրդատվություն մատուցեցին քրեական իրավունքի և ՄԻԵԿ-ով նախատեսված՝ Մարդու իրավունքների վերաբերյալ հարցերով: Այս ոլորտում կլինիկայի ուսանողների հաջողության արտահայտությունն էր այն, որ Ս. Թորոսյանի գործով Սահմանադրական դատարանը հակասահմանադրական ճանաչեց քրեական գործերով միայն փաստաբանի կողմից վճռաբեկ բողոք բերելու դրույթը:

Գործնական ծրագրեր և համագործակցություններ

««ՈՒԻԽ» իրավաբանական կլինիկայի»՝ որպես հասարակական կազմակերպության առանձնահատկությունն այն է, որ բացի իրավաբանական կլինիկական կրթություն իրականացնելուց, կարողանում է մասնակցել իրավապաշտպան տարբեր ծրագրերի և համագործակցել տարբեր կառույցների և կլինիկաների հետ, որը բարձրացնում է համալսարանի և կլինիկայի հեղինակությունը: Ուիլսոնը նշում է, որ կլինիկաները կարևոր դեր են խաղում իրավական բարեփոխումների խթանման գործում[9]: Թվարկենք մի քանիսը.

---

[8] Տե՛ս **Gold, N., & Plowden, P.** (2010). Clinical Scholarship and the Development of the Global Clinical Movement. In F. S. Bloch (Ed.), The Global Clinical Movement: Educating Lawyers for Social Justice (pp. 311-321). Oxford University Press. – [Էլեկտրոնային աղբյուր]. հասանելի է՝ https://www.researchgate.net/publication/314550415_THE_GLOBAL_CLINICAL_MOVEMENT_EDUCATING_LAWYERS_FOR_SOCIAL_JUSTICE

[9] Տե՛ս **Wilson, R.** (2010). Beyond Legal Imperialism: US Clinical Legal Education and the New Law and Development. In F. S. Bloch (Ed.), The Global Clinical Movement: Educating Lawyers for Social Justice (pp. 135-150). Oxford University Press. –[Էլեկտրոնային աղբյուր]. հասանելի է՝

- Նորվեգական կառավարության կողմից հայտարարված՝ «Իրավունք բոլորի համար» ծրագիրը, որն իրականացվեց Ամասիա և Աշոցք համայնքներում,
- ԵՄ-ի ֆինանսավորմամբ՝ «Երիտասարդները հանուն տեղեկատվության ազատության» ծրագիրը,
- «ABA/CEELI» ֆինանսավորմամբ՝ «Կանանց իրավունքները որպես հավասարության երաշխիք» ծրագիրը,
- Եվրոպական միության՝ «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիրը, որի իրականացնող գործընկեր կազմակերպություն է ՀԿ-ն:

««ՈՒԻԽ» իրավաբանական կլինիկան» 2018 թվականից ի վեր «Առաքելություն Հայաստան» բարեգործական-հասարակական կազմակերպության գործընկեր կազմակերպություն է՝ ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի ֆինանսական աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև իրականացրել է սոցիալական, առողջապահական, մարդասիրական նախաձեռնությունների և իրավունքների իրազեկման արշավներ:

Սոցիալական գործառույթ

Իրավաբանական կլինիկայի գործունեության սոցիալական ասպեկտը այն է, որ ուսանող-խորհրդատուներն անվճար իրավաբանական օգնություն են տրամադրում (խորհուրդներ են տալիս, փաստաթղթեր են կազմում) շահառուներին: Միաժամանակ ապագա իրավաբանները զարգացնում են իրենց պրակտիկ հմտություններն ու կարողությունները, ձեռք բերված տեսական գիտելիքները լիովին կիրառում կոնկրետ իրավական իրավիճակներ լուծելիս: Հետևաբար, իրավաբանական կլինիկայի գործունեությունը իրական օգուտներ է բերում ինչպես շահառուներին, ովքեր կարող են անվճար իրավաբանական խորհրդատվություն ստանալ, այնպես էլ ուսանողներին:

««ՈՒԻԽ» իրավաբանական կլինիկայի» ստեղծումը ձեռնտու է դրա աշխատանքում ներգրավված բոլոր կողմերին.

1. *Համալսարան* - Կլինիկան, տրամադրելով իրավաբանական կրթություն, անվճար իրավաբանական օգնություն, մասնակցելով սոցիալական խնդիրների լուծմանը, ինչը իրավաբանական ֆակուլտետի առաքելությունն է, խաղում է սոցիալական դեր և օգնում համալսարանին արժանի տեղ գրավելու մարզում: Դասախոս-խորհրդատուի ղեկավարությամբ ուսանողների միջև կապեր ապահովելով՝ իրավաբանական կլինիկան իր ամենօրյա պատասխանատու

---

https://www.researchgate.net/publication/314550415_THE_GLOBAL_CLINICAL_MOVEMENT_EDUCATING_LAWYERS_FOR_SOCIAL_JUSTICE

աշխատանքով ձևավորում է հասարակական կարծիք իրավաբանական ֆակուլտետի և բուհի մասին որպես ամբողջություն: Կրթական ծառայությունների շուկայում կլինիկական իրավաբանական կրթություն ստանալու հնարավորությունը մրցակցային առավելություն է, որն օգնում է ներգրավելու դիմորդներին: Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, իրավաբանական կլինիկայի շրջանավարտները ցույց են տալիս իրենց մասնագիտական պատրաստվածությունը գործատուներին, ինչը նպաստում է նրանց աշխատանքի տեղավորմանը, և դա կարևոր է նաև բուհի հեղինակության համար:

2. *Ուսանողներ* - Իրավաբանական կլինիկական ուսուցումն օգնում է զարգացնելու ուսանողների, դասախոսների և հաճախորդների միջև հաղորդակցության մշակույթը, զարգացնում է այնպիսի որակներ, ինչպիսիք են սոցիալական ակտիվությունը, կարգապահությունը, հանձնարարված առաջադրանքի համար պատասխանատվությունը, ճշտապահությունը, պրոֆեսիոնալիզմը և գործնական հմտությունները (հաճախորդից հարցազրույց վերցնելը, խորհրդատվությունը, իրավական փաստաթուղթ պատրաստելը, գործի ուսումնասիրությունը, դրա վերլուծությունը, գործի վերաբերյալ դիրքորոշման ձևավորումը և այլն): Ուսանողները ներգրավված են իրական աշխատանքի մեջ, որպես խորհրդատուներ աշխատում են իրավապահ մարմինների և իրավապաշտպան կազմակերպությունների հետ և դասեր քաղում մասնագետների փորձից: Հայտնի է, որ մասնագիտական հմտություններ կարելի է ձեռք բերել միայն այն դեպքում, երբ ինքներդ եք փորձում ինչ-որ բան անել: Ճիշտ է ասացվածքը. «Ասա ինձ, և ես կմոռանամ, ցույց տուր ինձ, և ես կհիշեմ, ներգրավեք ինձ, և ես կսովորեմ»[10]:

3. *Դասախոսներ* - Կլինիկական ծրագրի պրոֆեսորադասախոսական կազմը պատրաստվում է կլինիկական պարապմունքներին. ուսումնասիրելով և կիրառելով ինտերակտիվ ուսուցման մեթոդները՝ սկսում է դրանք կիրառել ակադեմիական դասընթացներում և ընդհանուր ուսումնական գործընթացում: Իրավական խնդիրները հասկանալու ուսանողների ցանկությունը դասախոսներին ստիպում է դասերն ավելի արդյունավետ անցկացնել: Այսպիսով, կլինիկական ծրագրի վրա աշխատանքը բարելավում է իրավաբանական կրթության որակը:

4. *Շահառուներ* - Իհարկե, իրավաբանական կլինիկայի գործունեությունն առաջին հերթին ուղղված է կրթական նպատակների իրականացմանը, ուստի ուսանողները պարտավոր չեն ընդունել բոլոր շահառուներին: Այս կառույցը չի կարող լուծել քաղաքում կամ մարզում անվճար իրավաբանական ծառայությունների մատուցման հետ կապված բոլոր խնդիրները, սակայն երաշխա-

---

[10] **Худойкина Т. В.** Юридическая клиника как инновационная форма обучения студентов-юристов –[Էլեկտրոնային աղբյուր]. հասանելի է՝ https://cyberleninka.ru/article/n/yuridicheskaya-klinika-kak-innovatsionnaya-forma-obucheniya-studentov-yuristov-1, с 22-23.

վորում է իր հաճախորդներին բարձրորակ օգնության տրամադրումը: Իրավաբանական կլինիկաների մեծ մասի հաճախորդները (ծրագրային շահառուները) ցածր եկամուտ ունեցող քաղաքացիներն են (եկամուտը ցածր է կենսապահովման մակարդակից) և բնակչության սոցիալապես անապահով կատեգորիաների (թոշակառուներ, հաշմանդամներ, գործազուրկներ և այլն), որոնց համար իրավաբանական կլինիկան միակ հնարավոր միջոցն է, օգտվել իրավաբանական օգնությունից:

Եզրակացություն

Այս հետազոտության արդյունքում հաստատվեց, որ «Պրոգրես» համալսարանի իրավաբանական կլինիկան կարևոր դեր է խաղում ապագա իրավաբանների պատրաստվածության գործում՝ միավորելով տեսական գիտելիքները գործնական փորձի հետ: Հետազոտության հիպոթեզը, ըստ որի՝ կլինիկաները ոչ միայն նպաստում են ուսանողների գործնական հմտությունների զարգացմանը, այլև կարևոր դեր են խաղում սոցիալապես անապահով խմբերին անվճար իրավաբանական օգնություն ցուցաբերելու գործում, ամբողջությամբ հաստատվեց: Կլինիկան հաջողությամբ իրականացնում է և՛ կրթական, և՛ սոցիալական գործառույթներ:

Ուսանողները, մասնակցելով կլինիկայի գործունեությանը, ձեռք են բերում գործնական հմտություններ, ինչպիսիք են հարցազրույց վարելը, փաստաթղթեր պատրաստելը և իրավական խորհրդատվություն տրամադրելը: Միաժամանակ կլինիկան ապահովում է անվճար իրավաբանական օգնություն սոցիալապես անապահով խմբերին, ինչը նպաստում է հասարակության մեջ իրավունքների պաշտպանության մակարդակի բարձրացմանը:

Հետազոտությունը ցույց տվեց, որ կլինիկայի գործունեությունը նպաստում է ոչ միայն ուսանողների մասնագիտական աճին, այլև համալսարանի հեղինակության բարձրացմանը: Կլինիկայի շրջանավարտները ցուցաբերում են բարձր մասնագիտական պատրաստվածություն, ինչը նպաստում է նրանց աշխատանքի տեղավորմանը և բուհի հեղինակության բարձրացման կարևոր գործոն է:

Այսպիսով, «Պրոգրես» համալսարանի իրավաբանական կլինիկան դառնում է կրթության և հասարակության միջև կարևոր կապող օղակ, որի նշանակությունը դեռ երկար տարիներ կմնա արդիական: Կլինիկայի փորձը կարող է ծառայել օրինակ այլ բուհերի համար, որոնք ձգտում են բարելավել իրավաբանական կրթության որակը և նպաստել հասարակության մեջ իրավունքների պաշտպանությանը:

АНАИТ СТАМБОЛЦЯН, ЛИЛИТ МУРАДЯН – *Опыт и особенности клинического образования в университете «Прогресс»*. – Статья посвящена образовательному опыту и отличительным особенностям юридической клиники Университета «Прогресс» в Армении. В ней исследуется роль клиники как образовательного и социального института, ее функции, методы работы и вклад в практическую подготовку студентов. Особое внимание уделяется

образовательным и социальным функциям клиники, а также ее роли в профессиональном развитии будущих юристов.

а. Актуальность исследования. Современное юридическое образование требует не только приобретения теоретических знаний, но и развития практических навыков, необходимых для будущих специалистов. В Армении реформы в правовой системе и необходимость защиты прав в обществе требуют подготовки высококвалифицированных юристов. В этом контексте юридические клиники становятся важными образовательными учреждениями, которые сочетают теорию с практикой.

б. Цель исследования. Целью исследования является изучение роли и значения юридической клиники Университета «Прогресс» как образовательного и социального института. В частности, исследование фокусируется на образовательных и социальных функциях клиники, а также на ее вкладе в практическую подготовку студентов и предоставление бесплатной юридической помощи обществу.

в. Результаты авторского исследования. Исследование показало, что юридическая клиника Университета «Прогресс» успешно выполняет как образовательные, так и социальные функции. Студенты приобретают практические навыки, такие как проведение интервью, подготовка юридических документов и предоставление юридических консультаций. В то же время клиника предлагает бесплатную юридическую помощь социально уязвимым группам населения, способствуя улучшению защиты прав в обществе.

г. Теоретическая и практическая значимость результатов. Результаты исследования имеют как теоретическое, так и практическое значение. Теоретически они способствуют более глубокому пониманию роли и важности клинической модели в юридическом образовании. Практически опыт клиники может служить примером для других университетов, стремящихся улучшить качество юридического образования и содействовать защите прав в обществе.

Ключевые слова: *юридическая клиника, университет "Прогресс", некоммерческая организация, образовательная функция, социальная функция, студенты, практические навыки, подготовка документов.*

ANAHIT STAMBOLTSYAN, LILIT MURADYAN – *The Experience and Features of Clinical Education at “Progress” University.*– The article is dedicated to the educational experience and distinctive features of the legal clinic at "Progress" University in Armenia**.** It explores the clinic's role as an educational and social institution**,** its functions, working methods, and contribution to students' practical preparedness**.** Special attention is given to the clinic's educational and social functions, as well as its role in the professional development of future lawyers**.**

a. Relevance of the Research. Modern legal education requires not only the acquisition of theoretical knowledge but also the development of practical skills necessary for future professionals. In Armenia, reforms in the legal system and the need to protect rights in society demand the training of highly qualified lawyers. In this context, legal clinics become important educational institutions that combine theory with practice.

b. Purpose of the Research. The purpose of the research is to study the role and significance of the legal clinic at "Progress" University as an educational and social institution. Specifically, the research focuses on the clinic's educational and social functions, as well as its contribution to the practical training of students and the provision of free legal assistance to society.

c. Author's Research Findings. The research demonstrated that the legal clinic at "Progress" University successfully fulfills both educational and social functions. Students acquire practical skills such as conducting interviews, preparing legal documents, and providing legal consultations. At the same time, the clinic offers free legal assistance to socially vulnerable groups, contributing to the improvement of rights protection in society.

d. Theoretical and Practical Significance of the Results. The results of the research have both theoretical and practical significance. Theoretically, they contribute to a deeper understanding of the role and importance of the clinical model in legal education. Practically, the experience of the

clinic can serve as an example for other universities seeking to improve the quality of legal education and promote the protection of rights in society.

Key words: *Legal clinic, "Progress" University, non-governmental organization, educational function, social function, students, practical skills, document preparation.*

References

Akashkina T.G., Byshova D.V. Funktsii yuridicheskoi kliniki // [Ėlektronnyi istochnik]. – Dostupen: https://cyberleninka.ru/article/n/funktsii-yuridicheskoy-kliniki/viewer (artsʿants hasaneli e 25.01.2025)

Bloch, F. S. (2004). The Case for Clinical Scholarship. *International Journal of Clinical Legal Education*, 4, 7–21. [Electronic source]. – Available at: https://www.researchgate.net/publication/307701155_The_case_for_clinical_scholarship (online access 02.05.2025)

Gaitova L.Kh. Formirovanie professionalizma v yuridicheskoi klinike vuza i ego sotsialʹnaya tsennostʹ // Pravo i obrazovanie. – 2014. – № 2. – s. 68–71.

Gold, N., & Plowden, P. (2010). Clinical Scholarship and the Development of the Global Clinical Movement. In F. S. Bloch (Ed.), The Global Clinical Movement: Educating Lawyers for Social Justice (pp. 311-321). Oxford University Press. https://Www.Researchgate.Net/Publication/314550415_The_Global_Clinical_Movement_Educating_Lawyers_for_Social_Justice (02.05.2025).

Gyumru iravabanakan klinika. [Ėlektronayin aghbyur]. – Artsʿants hasaneli e: http://olp.advocates.am/mod/book/tool/print/index.php?id=61 (artsʿants hasaneli e 25.01.2025)

Khudoykina T.V. Yuridicheskaya klinika kak innovatsionnaya forma obucheniya studentov-yuristov // Integratsiya obrazovaniya. – 2014. – T. 18. – № 1 (74). – s. 19–24.

Mychalov A.N., Korovina I.A., Durov I.I. O funktsiyakh yuridicheskikh klinik v Rossii // Vestnik Uralʹskogo instituta ekonomiki, upravleniya i prava. – 2010. – s. 5–12.

Perevalov V.D. Teoreticheskie i istoricheskie aspekty rossiiskogo yuridicheskogo obrazovaniya // Rossiiskoe pravo. Obrazovanie, praktika, nauka. – 2009. – № 8.

Wilson, R. (2010). Beyond Legal Imperialism: US Clinical Legal Education and the New Law and Development. In F. S. Bloch (Ed.), The Global Clinical Movement: Educating Lawyers for Social Justice (pp. 135-150). Oxford University Press. [Էլեկտրոնային աղբյուր]. – Հասանելի է: https://www.researchgate.net/publication/314550415_The_Global_Clinical_Movement_Educating_Lawyers_for_Social_Justice (առցանց հասանելի է 02.05.2025)

Zadneprovskaya M.V. Yuridicheskaya klinika v realizatsii kompetentnostnogo podkhoda pri podgotovke yurista. – [Ėlektronnyi istochnik]. – Dostupen: http://elibrary.ru/download/16285226.pdf (artsʿants hasaneli e 25.01.2025)

Խմբագրության հասցեն՝ Երևան, Խ. Աբովյան փող., 52ա
Адрес редакции: Ереван, ул. Абовяна 52а
Address: 52a, Kh. Abovyan str., Yerevan

Կայք՝ journals.ysu.am
Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am

Հրատարակչական խմբագիր և թողարկման պատասխանատու՝	Արմեն Հովակիմյան
Издательский редактор	Армен Овакимян
Publishing Editor	Armen Hovakimyan
Վերստուգող սրբագրիչ՝	Գայանե Գրիգորյան
Контрольный корректор	Гаяне Григорян
Proofreader	Gayane Grigoryan
Տեխնիկական խմբագիր՝	Հերմինե Ասլանյան
Технический редактор:	Эрмине Асланян
Technical Editor:	Hermine Aslanyan

Ստորագրված է տպագրության 13. 01. 2026: